


4655

Республика

и 9 12/100

3K11

A-68



Վ. ԲԻՍՏՐՅԱՆՍԿԻՅ
ՅԵՎ Վ. ՄԻԼՅՈՒՏԻՆ

ԱԶ ԹԵԲՈՒՄԸ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇԱՐՔԵՐՈՒՄ

ՅԿՈՒ
Բ-68

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1929

74 NOV 2005
13 JUL 2005

171
68
6

Վ. ԲԻՍՏՐՅԱՆՍԿԻՅ ՅԵՎ Վ. ՄԻԼՅՈՒՏԻՆ

ԱԶ ԹԵ ԲՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԲԵՐՈՒՄ

1-2-3

ԽՈՍՏ ԺՈՂՈՎՈՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1929



10 5 MAR 2013

4655



~~12970-57~~
41803-68

Главлит А—13559.

Заказ № 768

Тираж 4000 экз.

Վ. ԲԻՍՏՐՅԱՆՍԿԻՑ

ԱՋ ԹԵՔՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

I. ԱՋ ԹԵՔՄԱՆ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ահա արդեն 12-րդ տարին է, ինչ մեր կուսակցությունը հանդիսանում է յերկրագնդի մի վեցերորդ մասի վրա պրոլետարական դիկտատուրայի ղեկավարող ուժը: Դրանով մեր կուսակցությունը պարտական է մարքսիզմի-լենինիզմի թեորիային և մեթոդին: Միայն այդ միակ ճիշտ հեղափոխական թեորիայով ղեկավարվելով էր, վոր Համ. Կոմ. Կուս.-ը կարողացավ տապալել բուրժուազիային, պահել իր ձեռքում իշխանությունն ամենադժվարագույն պայմաններում և յերկրի սոցիալիստական ռեկոնստրուկցիայի գործում հասնել խոշորագույն հաջողությունների: Բոյլճեիզմի հաղթանակի անհրաժեշտ պայմանն այն էր, վոր նա կարողացավ «ամենադժվարին պայմաններում» մշակել «պրոլետարական հաղթանակի համար անհրաժեշտ յերկաթյա դիսցիպլինան» (Լենին): Սակայն բոյլճեիզմի հաղթական քաղաքական գիծը և փորձված կազմակերպչական սկզբունքները պատրաստի չեն ծնվել, ինչպես Աթինքը: Զևսի գլխից, այլ մեծ տանջանքներով են ձեռք բերվել, յերկարամյա հեղափոխական պատմության, այն է՝ «վորոնումների, սովորելու, պրակտիկայում կատարված փորձերի, հիասթափությունների, սուղգումների» (Լենին) պատմության ընթացքում: Բոյլճեիզմը «զարգացել, ամրացել և կոփվել է բանվորական շարժման ներսում գտնվող թշնամիների և... իր սեփական կուսակցության շեղումների դեմ մղած պայքարում»: Այդ թշնամիները յերկուսն են — ուպորտունիզմը և մանր-բուրժուական հեղափոխականությունը: Ուպորտունիզմը, գրում է Լենինը, «դա... բնական է, բոյլճեիզմի գլխավոր թշնամին է բանվորական շարժման ներսում: Յեվ այդ թշնամին փում է գլխավորը՝ միջազգային մասշտաբով: Այդ թշնամու վրա բոյլճեիզմը դարձրել և դարձնում է ամենից շատ ուշադրություն»: Յեթե Ռուսաստանում, «չնայած նրա ազդարնակչության ավելի մանր-բուրժուական կազմին»

համեմատած յեվրոպական յերկրներին հետ», մանր-բուրժուական հեղափոխականության ավելի ցայտուն արտահայտությունը, այն է՝ անարխիզմը «ոգտվում էր... համեմատաբար չնչին ազդեցություններ, ապա այդ, անկասկած, պետք է համարել մասամբ բոյլշևիզմի գործը բոյլշևիզմի, վորը միշտ էլ ամենաանխնայ և անհաշտ պայքար է մղել ոպպորտունիզմի դեմ» (Յերկերի ժողովածու, հատ. XVII, 124 — 5):

Յեվ ոպպորտունիզմը, և՛ մանր-բուրժուական հեղափոխականությունը հանդիսանում են բուրժուազիայի՝ պրոլետարիատի վրա ազդելու և բուրժուական իդեոլոգիայի՝ բանվոր դասակարգի մեջ թափանցելու արդյունք: Բուրժուազիայի՝ բանվոր դասակարգի վրա ազդելու անխուսափելիությունը բղխում է հենց իր կապիտալիստական հասարակության բնությունից, «վորովհետև ամեն մի կապիտալիստական յերկրում պրոլետարիատի հետ կողք-կողքի կանգնած են մանր-բուրժուազիայի, մանր գործատերերի լայն շերտերը... Մանր արտադրողները... շարժվում են պրոլետարիատի շարքերը: Միանգամայն բնական է, վոր մանր-բուրժուական աշխարհայացքը նորից և նորից ներս է խուժում բանվորական լայն կուսակցությունների շարքերը» (Լենին. «Մարքսիզմ և ուեվիզիոնիզմ»: Յերկ. ժող., հատ. XI, մաս I, էջ 60 — 61): Յեվ դրությունն այդպես է վոչ միայն կապիտալիզմի որոք: Պրոլետարական հեղափոխության հաղթանակն ամենևին ընդմիշտ վերջ չի դնում բուրժուազիայի ազդեցությունը պրոլետարիատի վրա, վորովհետև «դասակարգերը տարիներ մնացել են և մնում են ամենուրեք՝ պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո ևս» (ընդգծումը Լենինինն է): Պրոլետարական դիկտատուրայի շրջանում ևս մանր գործատերերը «պրոլետարիատին ամեն կողմից շրջապատում են մանր բուրժուական տարերքով, դրանով նրան համակում են, պրոլետարիատի ներսում շարունակ առաջ են բերում (ընդգծումը մերն է) մանր-բուրժուական կամադրկություն, անջատողականություն, ինդիվիդուալիզմի, հափշտակվելուց վհատության անցնելու ուեցիզիվներ: Վորպեսզի դրան դիմադրել, անհրաժեշտ է ամենախստագույն ցնտրալիզացիա և դիսցիպլինա պրոլետարիատի քաղաքական կուսակցության ներսում» (Լենին, հատ. XVII, 135 — 6):

Մանր-բուրժուական տարերքի ազդեցությունը պրոլետարիատի դիկտատուրայի որոք, յերբ մենք ունենք միայն մի լեզու կուսակցություն — կոմունիստական կուսակցությունը — թեքումներ է յերևան բերում պրոլետարական կուսակցության ներսում:

Այդ յերևույթի անխուսափելիությունը հրաշալի կերպով պարզել է Վ. Ի. Լենինը: «Նոր ժամանակներ, հին սխալներ նոր ձևով»

հոգևածում նա գրում է. «Պատմության յուրաքանչյուր անանձնահատուկ շրջադարձ առաջ է բերում վորոշ փոփոխություններ՝ մանր-բուրժուական տատանումները՝ ձևով, վոր միշտ տեղի ունեն պրոլետարիատի կողքին, միշտ էլ այս կամ այն չափով թափանցում են պրոլետարիատի միջավայրը:

«Մանր-բուրժուական ուեֆորմիզմը, այսինքն դեմոկրատական և «սոցիալ»-դեմոկրատական բարեբարո ֆոպաներով և անզոր իդեոլոգիա ծածկված լաքեյությունը բուրժուազիայի առաջ և մանր-բուրժուական հեղափոխականությունը, անավոր, ուուցված, խոսքերով սնապարծ, անջատողականություն, ցրվածություն, անզլխություն, դատարկություն, — սրանք են այդ տատանումների յերկու «հոսանքները»: Նրանք անխուսափելի յեն, քան ի դեռ չեն վոչնչացված կապիտալիզմի ամենախոր արմատները: Այժմ թորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության հայտնի շրջադարձի հետևանքով նրանց ձևը կերպարանափոխվում է»:

Ռկկ X համագումարի բանաձևում, վոր գրել է Լենինը մեր կուսակցության մեջ յեղած սինդիկալիստական և անարխիստական թեքումների մասին, կարգում ենք. «Այդ թեքումն առաջ է յեկել գլխավորապես մանր-բուրժուական տարերքի ազդեցությամբ՝ պրոլետարիատի և Ռկկ վրա, տարերքի, վորը բացառապես ուեղ է մեր յերկրում և վորն անխուսափելիորեն ծնում է տատանումներ դեպի անարխիզմը»:

Քանի վոր մանր-բուրժուական տարերքը ներխուժում է կենտրոնացված, յերկաթյա դիսցիպլինայի գրանիտային բազայի վրա կառուցված բոյլշևիզմի կուսակցության շարքերը, և քանի դեռ մենք չունենք ֆրակցիայի ծագման փաստ, այսինքն ներկուսակցական խմբավորումներ՝ կուսակցության գծից տարբերվող պատֆորմով և իրենց խմբակային դիսցիպլինայով, — կուսակցությունը, Լենինին հետևելով, դա կոչում է թեքում (ուկլոն). Լենինը X համագումարում կուսակցության միասնականության և անարխո-սինդիկալիստական թեքման մասին արտասանած իր ձառում այսպես է պարզաբանում այդ տերմինը. —

«Թեքումը դեռ ևս պատրաստի հոսանք չէ: Թեքումն այն է, վորը կարելի յե ուղղել: Մարդիկ մի քիչ շեղվել են ձանապարհից, կամ սկսում են շեղվել, բայց ուղղել դեռ կարելի յե: Դա, իմ կարծիքով, և արտահայտվում է... «Թեքում» բառով: Դա ընդգծումն է նրա, վոր այստեղ տակավին վերջնական վորեք բան չկա, ընդգծումն է նրա, վոր գործը — դյուրությունը ուղղելի յե, — դա ցանկություն է՝ նախազգուշացնելու և հարցը դնելու իր ամբողջ խորությունները և սկզբունքները»:

Հենց զանազան թեքումները — և՛ «աջերի» և՛ «ձախերի» — դեմ պայքար մղելու մեջ է հաղթանակել լենինյան գիծը: Համաձայն պատմական կացության փոխվել է և այդ թեքումների ձևը, սակայն նրանց ելուստները մնացել է անփոփոխ, անցումն պրոլետարական հեղափոխությունից մանր-բուրժուական քաղաքականության, «մանր-բուրժուական սեփորմիզմի», կամ նույն չափով մանր-բուրժուական «հեղափոխականության» ուղիների վրա: «Մանր-բուրժուական տատանումներն, — ուսուցել է մեզ Լենինը, — անխուսափելի յեն, քանի դեռ չեն վոչնչացված կապիտալիզմի ամենախոր արմատները»: Յեւ ամեն անգամ նոր թեքման առաջ գալու ժամանակ «հին սխալները... միշտ էլ հանդես են գալիս անսպասելի առիթով, մի քիչ նոր ձևով, որդիներ — ավելի քան որդիներ պարագայում»: (հատ. XVII, 125):

Հին սխալների, այժմ մի քիչ նոր ձևով կրկին հանդես յեկած սխալների վրա, մեր որերի աջ թեքման վրա և պիտի մենք կանգ առնենք: Վերջն է մանր-բուրժուական յերերումների առանձնահատկությունը մեր որերում, նրանց «մի քիչ նոր ձևը», նրանց որիզինել պայմանները:

1923-ից մինչև 1927 թիվը մեր կուսակցությունն անընդհատ պայքար է մղել տրոցկիզմի դեմ: Այդ պայքարն ավարտվեց լենինիզմի լիակատար հաղթանակով տրոցկիզմի վրա և տրոցկիստների վտարումով ՀամկԿ շարքերից: Տրոցկին մեր կուսակցության մեջ մտնելուց հետո յեւ յերբեք չի ընդհատել իր պայքարը լենինյան գծի դեմ և Լենինի կենդանության ժամանակ Տրոցկու ամենասուր յելույթները Լենինի դեմ վերաբերվում են 1918 (Բրեստ) և 1921 թվերին (պրոֆմիտթենական դիսկուսիան), յերբ տրոցկիզմի հաղթանակը կուսակցության մեջ անմիջականորեն սպառնում էր պրոլետարական դիկտատուրայի կրախով մեր յերկրում: Սակայն լենինյան կուսակցության դեմ սխտեմատիկ և համառ արշավանք սկսելու համար Տրոցկին ընտրեց այնպիսի ժամանակ, յերբ ընկ. Լենինը ծանր հիվանդության պատճառով բոլորովին հեռացավ կուսակցական ղեկավարությունից 1923 թվի վերջը: Կուսակցության շրջանակներում սկսված այդ պայքարը, Տրոցկուն և նրա կողմնակիցներին դուրս բերեց կուսակցության շրջանակներից, — տրոցկիզմը ներկուսակցական թեքումից վերածվեց «մենշևիկյան գրուպայի» և «որյեկտիվորեն դարձավ հակախորհրդային պայքարի գործոն» (XV համագումարի բանաձևը ԿԿ ղեկուցման առթիվ): XV համագումարից հետո, վորը հայտարարեց «տրոցկիստական ուղղուղիային պատկանելը և նրա հայացքների պրոպագանդը անհամատեղելի՝ բոյլշևիկյան կուսակցության շարքերում մնալու հետ», իսկ իրեն տրոցկիստական ուղղուղիային՝ «յեր-

րորդ ուժի գործիք՝ ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի ուժի», տրոցկիստները և իրենց կողմնակիցներ սապրոնովցիները վերջնականապես դարձան հակախորհրդային, հակահեղափոխական մի խմբավորում: Ուստի և պայքարը տրոցկիզմի դեմ դադարեց լինել միայն կուսակցության գործը, և մտավ խորհրդային պետության համապատասխան որդանների գործնեյություն ընագավառի մեջ: Պրոլետարական դիկտատուրայի ուժիմը ստիպված է ներկայումս տրոցկիստների դեմ ևս պայքարել նույն միջոցներով, ինչ միջոցներով նա պայքարում է բանվորական հեղափոխության հին թշնամիների — մենշևիկների դեմ:

Այդ, սակայն չի նշանակում, վոր պայքարը կուսակցության ներսում գտնվող տրոցկիստական տրամադրությունների դեմ վերջնականապես անցել է պատմության դիրկը: Մենք այստեղ չենք խոսում այն թագնված տրոցկիստների մասին, վորոնք ունենալով իրենց գրպանում կուսակցական անդամատումը, շարժական-պրովակատորական աշխատանք են տանում մեր կուսակցության մեջ, հանուն իրենց տրոցկիստական կուսակցության, — պայքարն ընդդեմ այդ վրասատուներին նմանապես հանձնված է մեր պետության համապատասխան որդանների իրավասությունը, վոր, մենք ի նկատի ունենք կուսակցության այս կամ այն ողակում նկատվող տրոցկիստական տրամադրությունների ներկա և գուցե դեռ հետագա աշխուժացումը: Հիշենք, վոր Լենինը ևս ասում էր՝ ինչպես «մանր-բուրժուական սեփորմիզմի», նույնպես և «մանր-բուրժուական հեղափոխականության» անխուսափելիության մասին: Ահա թե ի՞նչու մեր կուսակցության ԿԿ նոյեմբերյան (1928) պլենումը մատնանշեց, թե՛ «աշխուժանում են սոցիալ-դեմոկրատական, միջակ գյուղացիությանը թշնամական, գերինդուստրիալիստական տենդենցները (տրոցկիզմ), վորոնք ձախ ֆրագիտուրայի տակ թագնում են կիսամենշևիկյան աջ բովանդակություն, և իրապես տանում են դեպի նույն կործանարար հետևանքները, ինչպես և բացարձակ աջ թեքումը»: Ահա թե ինչու պլենումն այնուհետև շեշտում է պայքարը յերկու ֆրոնտում՝ ինչպես աջ, բացարձակ ուղղորտունիստական թեքման, այնպես էլ սոցիալ-դեմոկրատական, տրոցկիստական «ձախ», այսինքն ըստ ելույթյան՝ նույնպես աջ, սակայն ձախ ֆրոնտով քողարկված թեքման (լենինյան գծից) դեմ: Սակայն միևնույն ժամանակ պլենումը հաստատում է, «վոր ներկայումս գլխավոր վտանգը ՀամկԿ մեջ հանդիսանում է աջ, բացարձակ ուղղորտունիստական թեքման վտանգը, վոր բղխում է ինչպես արդի սոցիալիստական կացությունից, այնպես էլ և այն փաստից,

վոր արոցկիստական իրեոլոգիայի դեմ պայքարելու ընթացքում կուսակցությունն արդեն ունեցել է մի շարք վճռական հաջողություններ» (ընդգծումը մերն է):

Տրոցկիզմը հիմնականում ջանջախաված է լենինյան կուսակցության կողմից, հանձինս արոցկիզմի այժմ մենք ունենք վոչ թե ներկուսակցական թեքում, այլ հակակուսակցական և հակախորհրդային մի խմբավորում: Հինգ տարվա անընդհատ պայքարի ընթացքում կուսակցությունը շատ լավ է սովորել ճանաչել արոցկիստական տրամադրությունները և հարվածել արոցկիստներին. — այժմ կուսակցությունն արդեն լիովին պատրաստ է նրա համար, վորպեսզի իր հաշիվները մաքրի արոցկիստական տրամադրությունների ակտիվի հետ՝ յեթե դա այս կամ այն չափով լուրջ ձևով յերևան դալու լինի մեր կուսակցության շարքերում: Ահա թե ինչու պայքարն ընդդեմ «ձախ» թեքման չի կարող ներկայումս առաջին տեղը բռնել մեր կուսակցության համար. ահա թե ինչու կուսակցության ուշադրությունը հիմնականում կենտրոնացրված է «աջ, բացարձակ ոպպորտունիստական թեքման» հաղթահարման վրա, թեքման, վոր ներկայումս հանդիսանում է գլխավոր վտանգը Համկի մեջ:

Սակայն յեթե կուսակցությունը լավ է սովորել հարվածել արոցկիստներին, ապա այդ չի կարելի նույն չափով ասել նաև աջ թեքման մասին: Վորովհետև ձևակերպումն աջ տրամադրությունների, վորոնք միշտ ել տեղի յեն ունեցել մեր կուսակցության առանձին ողակներում (գլխավորապես գյուղական և խորհրդային բլիշներում), աջ թեքման ներկայացուցիչների բացարձակ յերույթն իրենց քաղաքական credo-ով — տեղի ունեցավ միայն ընթացիք տարում: Աջ թեքման դեմ պայքարելու համար կուսակցությունը պատրաստված է վոչ այն չափով, վոր չափով «ձախերի» դեմ պայքարելու համար, — մեր կուսակցականները դեռ այնքան ել չեն սովորել պարզ կերպով ճանաչել աջ տրամադրությունները և դրանց տալ վճռական հակահարված, ինչպես դա տեղի ունի արոցկիստների նկատմամբ: Սակայն բացի դրանից, ինչպես նշում է նոյեմբերյան պլենումի բանաձևը, «արդի սոցիալ-անտեսական կացությունը», սոցիալիստական ռեկոնստրուկցիայի դժվարությունները քաղաքում և հատկապես գյուղում, քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի աճող դիմադրությունը պրոլետարիատի հակահարձակմանը — դրանք առանձնապես սնուցում են տրամադրություններ և հայացքներ, վորոնք զուգարվելով և կազմում են աջ թեքումը:

Անհրաժեշտ է նմանապես մատնանշել, վոր նոյեմբերյան պլենումից հետո (3 ամսվա ընթացքում), աջ թեքումը ստացել է յուր

հետագա ձևակերպումը, — սկսել է վերածվել ֆրակցիայի, հայտնաբերում է «ֆրակցիոկանության մի շարք նշաններ, այսինքն առաջ են գալիս գրուպպաներ իրենց առանձին պլատֆորմներով և ձգտումով՝ վորոշ չափով փակվել և ստեղծել իրենց գրուպպայական դիսցիպլինան»: (Լենինի գրած բանաձևը կուսակցության միասնականության մասին): Յե՛վ այս բոլորը մենք պետք է հաստատենք: Այժմ արդեն մենք ավելի և ավելի հեռանում ենք «նրանից, վորը կարելի յե ուղղել», դյուրությամբ ուղղվելու գործ»-ից — ինչպես վոր X համագումարում Լենինն է բնութագրել «թեքումը» — մենք նկատում ենք, թե ինչպես «թեքումն» աճելով դառնում է «պատրաստի հոսանք»:

Աջ թեքման ներկայացուցիչներին և հաշտվողականներին կողմից մենք չենք տեսնում վոչ մի ցանկություն՝ ուղղելու իրենց (սկզբում գուցե դեռևս վոչ այնքան նշանակալի) սխալները, ընդհակառակը, մենք տեսնում ենք դրանց խորացումը: Սակայն Լենինը ասում էր, վոր «չկան և չեն կարող լինել այնպիսի մարդիկ», վորոնք սխալներ չանեն. «խելացի յե նա, ով անում է վոչ շատ եյական սխալներ, և ով գիտե հեշտ և արագ ուղղել դրանց»: (Հատ. XVII, 128): Անհրաժեշտ է ով գիտե հեշտ և արագ ուղղել դրանց»: (Հատ. XVII, 128): Անհրաժեշտ է հիշել Լենինի խոսքերը Տրոցկու սխալների առթիվ 1921 թվին: «Փոքր անհամաձայնություններից և տարաձայնություններից աճեցին խոշորները, ինչպես միշտ լինում է համեմատաբար փոքր սխալների դեպքում, յեթե փոքր սխալի վրա պնդում են և ամբողջ ուժով ընդդիմանում այդ ուղղելու» (հատ. XVIII մաս I, 28 — 9):

Աջ թեքման ներկայացուցիչները և հաշտվողականները սկսում են ամբացնել իրենց ուժերն առանձին պլատֆորմի հիման վրա, գա հակադրելով կուսակցության գծին, և կուսակցական դիսցիպլինան պահպանելն համարում են իրենց համար վոչ պարտադիր: Այսպես է սկսում հեռացումը վոչ միայն կուսակցության քաղաքական գծից, այլ և բոլորիզմի կազմակերպչական սկզբունքներից:

«Սոցիալ-անտեսական կացությունը», վորը ուժ է տալիս աջ թեքմանը, բնութագրվում է մեր արդյունաբերության և հատկապես գյուղական անտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի դժվարություններով: Կուսակցությունը հաստատականությամբ անց է կացնում XIV համագումարի սահմանած՝ յերկրի ինդուստրացման գլխավոր գիծը, մեր սոցիալիստական յերկրի անկախության պաշտպանության գլխավոր գիծը (մեր յերկիրը մինչև հիմա տակավին դուրս չի յեկել կապիտալիստական ողակումից), կապիտալիստական յերկրներին տեխնիկապես հասնելու և նրանցից գերազանցելու գիծը: Իսկ գա հնաբավոր է միայն ընդհանրապես ինդուստրիայի զարգացման և մաս-

նավորապես մեր ժողովրդական ամբողջ տնտեսությունը սոցիալիզմի բազայի վրա վերակառուցելու բանալի հանդիսացող արտադրության միջոցների արտադրության զարգացման արագ տեմպի հիման վրա: Արդյունաբերության աճումից անչափ յետ մնացող և հենց դրանով էլ յերկրի ինդուստրացման խնդրի լուծմանը սպառնալիք հանդիսացող մեր գյուղական տնտեսության կոլեկտիվիզացիայի մասին XV համագումարի ընդունած բանաձևի հիման վրա, կուսակցությունը սկսել է գյուղատնտեսությունը տեխնիքական նոր բազայի (խոշոր արտադրության բազայի) վրա աստիճանաբար, սակայն սխտեմատիկ ղեկելու գործը, գյուղատնտեսությունը սոցիալիստական արդյունաբերության աստիճանին հասցնելու գործը: Իր առաջ ղեկելով այդ խնդիրները, կուսակցությունը դեռ XV համագումարում, խոսելով «տնտեսական զարգացման ընթացիք շրջանի ընդհանուր հաջողության» մասին, մատնանշեց սակայն առկալությունը այն «գեովարությունների, վտանգների և հակասությունների, վորոնք կապված են մեր աճման առանձնահատկությունների հետ, մեր յերկրի տեխնիկո-տնտեսական յետամնացության և պրոլետարիատին թշնամի՝ սոցիալ-դասակարգային ուժերի ճնշման հետ, վորոնց դեմ սխտեմատիկ պայքար տանելով միայն՝ կարելի յե հասնել այդ գեովարությունների հաղթահարմանը և հետագա առաջխաղացմանը դեպի սոցիալիզմ»: Մատնանշելով կուսակցության առաջ դրված խնդիրների գեովարությունները, համագումարը «ամբողջ կուսակցության ուշադրությունը» դարձրեց «նրա վրա, վոր այդ պրոլետարիատի հաջող լուծումը պահանջում է կուսակցության բոլոր ուժերի առանձին լարում, միասնականություն և կամք, և կուսակցական դիրեկտիվների միահամուռ իրականացում»:

Կուսակցությունը հիմա յել, ինչպես և անցյալում, իր առաջ դնում է գեովար խնդիրներ, վորոնք կարող են լուծվել այն դեպքում, յերբ նա լիովին լարված աշխատանք տանի. կուսակցությունը իր առաջ կանգնած գեովարությունների վրա աչք չի փակում, ընդհակառակը, նա բանվորների ուշադրությունն է հրավիրում այդ գեովարությունների անխուսափելիության վրա, գեովարությունների, վորոնք հանդիսանում են աճման, մեր տնտեսության վերելքի գեովարություններ: Սակայն հենց այդ գեովարություններն են, վոր ծնում են աջ թեքում, վորը մեր աչքերի առաջ վերածվում է աջ Ֆրակցիայի՝ մեր կուսակցության մեջ: Այդ գեովարությունների հողի վրա ուժեղանում են տատանումները և յերբերումները աշխատավորության մեջ, առաջին հերթին՝ գյուղացիության շրջանում: Այստեղից տատանումներն անցնում են և պրոլետարիատի մի շարք ավելի յետամնաց խավերի մեջ,

պրոլետարիատի, վորի շարքերը վերջին տարիներս լրացվել են նոր բանվորների լայն հոսանքով: Դա իր հերթին չի կարող չանդրադառնալ և մեր կուսակցության մի շարք ավելի թույլ ողակների վրա: Այստեղից ահա — աջ թեքման և նրա հանդեպ հաշտվողականության վերաբերմունքի ձևակերպումը ՀամԿԿ շարքերում: Ուստի և կուսակցությունը անհրաժեշտորեն պետք է սվյալ ժամանակամիջոցում գլխավոր կրակը կենտրոնացնի, գլխավոր կրակը ուղղե աջ թեքման և հաշտվողականության դեմ:

Այն, ինչը ընդհանուր է մանր-բնութակա տատանումներին (բոլոր ձևերում և կերպարանափոխություններում), ինչպես նաև «մանր-բնութակա ռեֆորմիզմին», այնպես էլ «մանր-բնութակա հեղափոխականությանը» — դա խոճապայնությունն է, հոռետեսությունը, սարսափը և անը գեովարությունների հանդեպ, բանվոր դասակարգի ուժերին չհավատալը՝ դրանց հաղթահարելու գործում: Մեր հեղափոխության բոլոր ետպնելում մանր-բնութակա տատանումների սարածողները ՀամԿԿ մեջ՝ մեղանչել են հենց այս ուղղությամբ, — նրանք խոճապի էյին մատնվում սոցիալիստական հեղափոխության անխուսափելի գեովարությունների հանդեպ, նրանք բանվոր դասակարգի և նրա կուսակցության համար վոչ մի հնարավորություն չէյին տեսնում այդ գեովարությունները հաղթահարելու գործում: Իր հայտնի նամակներում՝ «Հոկտեմբերի յտրեյկերեխների» մասին — Զինովյեվի և Կամենևի մասին, — վորոնք հոկտեմբերյան ապստամբությանը դեմ դուրս յեկան, Լենինը մատնանշում է «ծանր դավաճանությունը գեովար ժամանակի, ծանր խնդիրների» հանդեպ. Լենինը խոսում է «մի դուրս ընկերների» «աղաղակող հոռետեսության» մասին. «բնութակալի և Կերենսկու մոտ ամեն ինչ հրաշալի յե, մեզ մոտ ամեն բան վատ: Կապիտալիստների մոտ բոլորը պատրաստված է հիանալի, բանվորների մոտ — վատ»: (Հատ. XXI, 352): Խոճապայնությունը իշխանությունը խլելու անկասկած գեովարությունների հանդեպ, չհավատալը, վոր բանվոր դասակարգը իր ուժերով կկարողանա հաղթահարել պատմության կողմից իր վրա դրած խնդրի գեովարությունները, — բնութագրում էյին հոկտեմբերյան ուղղորտունխատների դիրքը:

1918 թվի սկզբին Լենինը ստիպված սկսում է պայքարը ձախ կոմունիստների դեմ, վորոնք սարսափահար էյին յեղել գերմանական իմպերիալիզմի՝ Խորհրդային յերկրի վզին փաթաթած Բրեստի կողոպտիչ հաշտության գեովարություններից և կորցրել էյին հավատը դեպի կոմունիստական հեղափոխության հաղթանակը: Ամենախորագույն անյեխանելի հոռետեսության տրամադրություն, լիակատար հիասթա-

փության զգացմունք» — այդպես է բնութագրում տվյալ թեքման դիրքը ընկ. Լենինը՝ «Ճարտրինակ և հրեշավոր» հոդվածում (հատ. XV, 113): 1918 թվին, Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նիստում Խորհրդային Իշխանության հերթական խնդիրների մասին արած իր ղեկուցման մեջ, Լենինն ասում է, վոր «այն յերկրում, վորին ղեպքերը նշանակալի չափով, շնորհիվ նրա յետամնացության, առաջ են քաշել մյուս՝ ավելի առաջավոր յերկրներին, այդ հեղափոխությունն անխուսափելիորեն մատնված է այն բանին, վոր նա պետք է վերապրի ամենադժվարին, ամենածանր և մոտիկ ապագայում գուցե և ամենատխուր մոմենտներ: Յեվ յենթադրել, վոր նա այդպիսի մոմենտներում իր շարքերում չի ունենալու տատանվողներ: Ղա միանգամայն անբնական կլիներ»: Սակայն, հենց Լենինի կարծիքով, «մանր-բորժուական տարրերի այդ տատանումներից մենք ամենափոքր չափով անգամ չենք կարող վոչ մի հիմք ունենալ հոռետեսության կամ հիասթափության համար» (հատ. XV, 227 — 8): Հեղափոխությունը չի կարող անսայթակ և հաղթական յերթ լինել, — ասում է Լենինը, — դրան վիճակվելու յե կրել պարտություններ, ընկնել ծանր դրության մեջ, սակայն ղա հիմք չի կարող լինել նրա համար, վոր մատնվենք խուճապի և հիասթափվենք, — հեղափոխական դասակարգի անսպառ ուժերի վրա հենվող հեղափոխական կուսակցությունը կկարողանա յեղք գտնել նաև ծայրահեղ դժվարություններին:

1921 թվին, «Խորհրդային Իշխանության տնտեսական քաղաքականության հայտնի շրջադարձի հետևանքով», Լենինը պայքարում է մեր շարքերում յեղած նոր տատանումների դեմ, բանվորական ուղղողիցիայի խմբակի դեմ, վորը վատ եր հասկանում այդ շրջադարձի անհրաժեշտությունը: Լենինն անհրաժեշտ է համարում «դասակարգային փաստական ուժերի հաշվառումը և անվիճելի փաստերը վորքան կարելի յե վողջախոհ և ճշգրիտ կերպով հակադրել ռեֆորմիզմից և ռևոլյուցիոնարիզմից դուրս յեկած ֆիլիստերների վնասությանը և խուճապին»: Մյասնիկովին զբաժ իր նամակում Լենինը ասում է. «Ահա թե ինչի վրա... դուք սայթաքվեցիք: Դուք թույլ տվիք, վոր վորոշ քանակությամբ տխուր և դառն փաստերը ձեզ ձնշեն և անկարող յեղաք ուժերը առողջ կերպով հաշվի առնելու»: Լենինը չի ժխտում, վոր «թշվառություններ մեզ մոտ շատ են», վոր «սխալներ... ավելի շատ են սրել մեր գրության հիվանդությունները», վոր «կարիքը և հիվանդությունները մեծ են»: Բայց մեծ հեղափոխականը գիտե, վոր հեղափոխական դասակարգը հաղթահարելու յե և թշվառությունն ու աղքատությունը և դժվարությունները: Դուրս ենք գալու և սկսել ենք դուրս գալ,

ասում է նա. — դուրս ենք գալու, վորովհետև հիմնականում ճիշտ է մեր քաղաքականությունը, վորը հաշվի յե առնում բոլոր դասակարգային ուժերը միջազգային մասշտաբով: Դուրս ենք գալու, վորովհետև մեր գրությունը վառ գույներով չենք նկարում: Գիտենք բոլոր դժվարությունները: Տեսնում ենք բոլոր հիվանդությունները և բժշկում ենք նրանց սխտեմատիկ, համառ կերպով առանց խուճապի մատնվելու: Իսկ դուք, — գրում է Լենինը իր թղթակցին, թույլ եք տվել, վոր խուճապը ձեզ ել տիրե... Դուք տեսնելով «թշվառությունները և հիվանդությունների մի կույտ՝ հիասթափության էք մատնվել և ընկել ոտարի, բուրժուական զիրկը... Իսկ իմ խորհուրդն է՝ հիասթափության և խուճապի չմատնվել» (հատ. XVIII, մաս I, 341 — 2):

Խուճապային տրամագեությունները բնութագրում են և տրոցկիստական ուղղողիցիայի 1923 թվի յելույթները:

Կենտկոմի սեպտեմբերյան (1923 թ.) պլենումից հետո, Տրոցկու և 46-ի նամակներում յերկրի տնտեսական գրությունը միանգամայն սխալ եր գնահատվում, նախագուշակվում եր խոր տնտեսական ճգնաժամ յերկրում և ներքին տագնապ կուսակցության մեջ: 46-ի հայտարարության մեջ կարգում ենք. «Բաղբյուրոյի քաղաքականության շարունակելն սպառնում է ամբողջ կուսակցության համար ծանր թրշվառություններ... Մենք կանգնելու յենք արտակարգ սուր տնտեսական ցնցման հնարավորության առաջ, ցնցման, վոր կապված է ներքին քաղաքական բարդությունների հետ»: Ընկ. Կամենսկը կուսակցաքին քաղաքական բարդությունների հետ»: Ընկ. Կամենսկը կուսակցական XIII կոնֆերենցիայում դուրս գալով տրոցկիստական ուղղողիցիայի դեմ, մատնանշեց, վոր բոլոր ուղղողիցիոններին համար «ընդհանուրը» հանդիսանում է «խուճապը, չհավատալն այն բանին, վոր սոցիալիստական տնտեսության տարրերն իսկապես աճում են մեր աղքատ, կողոպտված Ռուսաստանում»: Յեթե այնուհետև դառնանք Լենինգրադի 1925 թ. ուղղողիցիային և 1926 — 1927 թ.թ. ուղղողիցիոն բռնկին, ապա կրկին վորպես այդ խմբերի պլատֆորմի ամենաբնութազրական զիծ նկատելու յենք — մեր յերկրում սոցիալիստական շինարարության հաղթանակին չհավատալը, խուճապ՝ մեր զարգացման դժվարությունների հանդեպ, մեր յերկրի կապիտալիստական տարրերի ուժերի գերազնահատում: Կուսակցությունը վճռապես դատապարտեց այդ խուճապային տրամագրությունները, բնութագրելով դրանց վորպես «սոցիալ-դեմոկրատական թեքում»: Նույն խուճապայնությունը, նույն հիասթափությունը մեր աճման դժվարությունների հանդեպ, հատուկ է և մեր որերի աջ թեքման ներկայացուցիչներին: Ուրիշ ի՞նչ

միտք ունեն պնդումները մեր գյուղատնտեսութեան «անհուսութեան» և «անհեռանկարութեան» մասին, պնդումները այն մասին, վոր անհրաժեշտ է գյուղի կապիտալիստական տարրերի համար նորանոր զիջումներ անել: Այլ թեքման խուճապայնութեան մեջ ևս նկատում ենք մանր-բուրժուական յերերումների, մանր-բուրժուական կամազրկութեան ռեցիդիվ, թերահավատութիւն՝ վոր պրոլետարիատը իր ուժերով կարող է հաղթահարել մեր շինարարութեան դժվարութիւնները, վորոնք բոլորում են մեր յերկրի մանր-բուրժուական բնույթից:

Կուսակցութեան XI համագումարում ընկ. Լենինն ասում է, վոր «խուճապը — ամենավտանգավոր բանն է նահանջելու ժամանակ», նա խոսում է այն մարդկանց մասին, վորոնք «խուճապ են մտցնում», թեկուզ և ղեկավարվելով լավ ձգտումներով, և առաջարկում է «գիտցիլլինայի ամենաչնչին խախտումը պատժել խիստ, դաժան և անխնայ կերպով» (հատ. XVIII, մաս II, 37 — 8): Բայց յեթե խուճապն առանձնապէս վտանգավոր է նահանջի ժամանակ, ապա այդ չի նշանակում, վոր նա վտանգավոր չէ հարձակման ժամանակ, մասնավորապէս, կապիտալիստական տարրերի վրա կատարվող այն հարձակման ժամանակ, վոր մենք գործում ենք այժմ:

Լենինը սիրում էր հիշել «ուսու մեծ հեղափոխական» Չերնիշևսկու խոսքերը — «պատմական գործնեյութիւնը՝ Նևսկու պրոսպեկտի տրոտուարը չէ»: Դրան Լենինն ավելացնում էր — «ով պրոլետարիատի հեղափոխութիւնը „թույլ է տալիս“ միայն „այն պայմանով“, վոր պեսզի նա կատարվի հեշտ ու հարթ... վորպեսզի նախորդ գրավական տրված լինի, վոր պարտութիւններ չեն լինելու, վորպեսզի հեղափոխութեան ուղին լայն լինի, ազատ, ուղիղ, վորպեսզի՝ գնալով դեպի հաղթանակը՝ հարկ չլինի յերբեմն կրել ծանրագույն դոճեր... կամ անցնել ամենանեղ անանցնելի, վորտապտույտ և վտանգավոր լեռնային շավիղներով, — նա հեղափոխական չէ, նա դեռ չի ազատագրվել բուրժուական ինտելիգենցիայի պետանդութիւնից, նա գործի մեջ հանդիսանալու յե՛ շարունակ դեպի հակահեղափոխական բուրժուական բանակը գլորվող» (հատ. XV, 408 — 9):

Պրոլետարական ավանգարդը գիտե, վոր հեղափոխութեան ուղին, վորով նա տանում է բանվորական մասսային, դժվար, տատասկոտ, վտանգներով լի ուղի յե. հեղափոխական դասակարգը տեսնում է դժվարութիւնները, բայց վոչ թե նրա համար, վորպեսզի նրանց տեղի տա, այլ նրա համար, վորպեսզի նրանց հաղթահարի, վորովհետև չկան այնպիսի խոչընդոտներ, վորոնք կանգուն մնային հեղափոխական դասակարգի գորութեան առաջ: Ահա թե ինչու բանվոր դասա-

կարգը խուճապի չի մատնվում, չի հիասթափվում, չի ընկնում բուրժուազիայի գիրկը, այլ համառ կերպով շարունակում է սոցիալիզմի կառուցման իր գործը, յերկրի ինդուստրացման, գյուղական տնտեսութեան կոլլեկտիվացման գործը:

Այժմ կուսակցութիւնը ուժեղ աշխատանք է տանում, վորպեսզի լայն մասսաներին բացատրի և հասկացնի ալ թեքման բնույթը, չնայած վոր այդ թեքումը տակավին վերջնականապէս չի ձևակերպվել, պատրաստի հոսանքի չի վերածվել և վերջնական ու ավարտված պլատֆորմ դեռ չի մշակել: Կուսակցութիւնն ուզում է որ առաջ վերջ դնել այդ ալ թեքմանը, քանի դեռ նա խոշոր չափեր չի ընդունել, քանի դեռ նա կուսակցութեանը գգալի ֆլասներ չի հասցրել: Այլ թեքման ահա հենց այդ անբավարար ձևակերպումն է, վոր վորոշ չափով դժվարացնում է նրա պլատֆորմի ավարտված բնութագրութիւնը տալը — այդ պլատֆորմի մեջ դեռ շատ անորոշութիւններ, մթութիւններ և ցրվածութիւններ կան: Իրենք՝ թեքման յենթակաները համառ և հաստատորեն պնդում են, վոր իրենք լիովին համաձայն են կուսակցութեան քաղաքականութեան, նրա գծի հետ, վորը իր արտահայտութիւնը գտել է նրա համագումարների և Կենտկոմի վորոշումների մեջ, և վոր իրենց վոչինչ չի բաժանում կուսակցութիւնից, իրենք համաձայն չեն միայն կուսակցութեան գծի՝ պրակտիկայում անցկացնելու հետ միայն — իբր թե կուսակցական ղեկավարութիւնն ազավաղում է կուսակցութեան քաղաքականութիւնը՝ վերջինս կյանքում անցկացնելիս: Սակայն այստեղ անհրաժեշտ է հիշել, վոր տարտամութիւնը, անձակերպութիւնը, ցրվածութիւնը, հարցի պարզ և վորոշ դնելուց վախենալը — վաղուց ի վեր հատուկ է ոպպորտունիստական բոլոր հոսանքներին, ինչ ձևով էլ վոր նրանք հանդես յեկած կլինեն մեր կուսակցութեան պատմութեան այս կամ այն շրջանում: Ընկ. Լենինը շատ հրաշալի կերպով է նկատել ոպպորտունիզմի այդ հատկութիւնը: Նա ասում է, վոր յերբ խոսվում է ոպպորտունիզմի դեմ պայքարելու մասին, չի կարելի յերբեք մոռանալ արդի ամբողջ ոպպորտունիզմի բնութագծերը բոլոր և ամեն տեսակ բնագավառներում. — նրա անորոշութիւնը, ցրվածութիւնը և նրան բռնելու դժվարութիւնը: Ոպպորտունիստը, ըստ իր սեփական բնութեան, միշտ էլ խուսափում է հարցի պարզ և անշեղ դրումից, փնտրում է միջին ձամբան, գալարվում է մեկը մյուսին ժխտող տեսակետների միջև, աշխատելով «համաձայն լինել» և՛ մեկի և՛ մյուսի հետ, իր տարաձայնութիւնները արտահայտելով զանազան ուղղումների, կասկածանքների, բարի և անմեղ ցանկութիւնների ձևով և այլն և այլն:

Այդպես և 1928 — 29 թվի ուպորտունիստները կուսակցության հետ ունեցած «իրենց տարաձայնություններին» ձգնում են ուղղունների, կասկածների, բարի և անմեղ ցանկությունների ձև տալ... Սակայն դա վատ է հաջողվում աշխարհին. չնայած նրանց բոլոր խորամանկություններին, խարտախություններին և խուսափումներին, հետզհետե ավելի և ավելի յե պարզ հանդես գալիս նրանց առանձին գիծը, վորը վոչ միայն տարբեր է, այլ և հակադիր է մեր կուսակցության ամբողջ քաղաքականությանը: Չնայած վոր նրանք դիտավորյալ կերպով հարյը դնում են անորոշ ու ցրված ձևով, հիմա արդեն հենց իրենց փաստաթղթերի մեջ միանգամայն պարզ յերևում է, թե վոր ուղղությամբ է աճում իրենց իդեոլոգիան — մենշևիզմի ուղղությամբ, դեպի բուրժուական աշխարհայացքը:

Ահա թե ինչու հիմա արդեն հնարավոր է, մի շարք փաստաթղթերի հիման վրա, փաստաթղթերի, վորոնք շարունակ հարստանում են նորանոր մատերիալներով, ընդհանուր դժերով տալ պատկերն աջ թեքման իդեոլոգիայի, վորը սկզբունքորեն թշնամի յե բոյլշևիկյան կուսակցության ամբողջ քաղաքականությանը:

Ուպորտունիստների տատանումների թափը ավելի և ավելի մեծանում է, նրանց շեղումները կուսակցության գծից ավելի և ավելի մեծ չափեր են ընդունում: Ներկայումս ուկրոնիստներն արդեն չեն սահմանափակվում նրանով, վոր հարձակման են յենթարկում կուսակցության ընդունած գլխավոր գիծը՝ խոսելով յերկրի ինդուստրացման տեմպի թուլացման ոգտին և կասկածի յենթարկելով կուսակցության քաղաքականությունը գյուղատնտեսության կոլլեկտիվացման բնագավառում, — մենք արդեն կանգնած ենք կուսակցության ղեկավարության, լենինյան կենտկոմի վրա անմիջական հարձակում գործելու հանդես: մենք արդեն դեմ առ դեմ կանգնած ենք այն փաստի առաջ, վոր աջ թեքման ներկայացուցիչները փորձեր են անում քննադատել լենինիզմի կազմակերպչա ան սկզբունքները, և վոր նրանք արդեն, թեկուզ յերկչոտ, բայց այնուամենայնիվ վորոշ ոգնություն են ցույց տալիս կոմիստներնում գտնվող աջ և հաշտվողական տարրերին:

II. ԱՁԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻԾԸ

Աջ թեքման ներկայացուցիչները կուսակցության գիծը քննադատելիս, վորպես մեկնակետ ունեն շատ թե քիչ պարզ ձևակերպված կասկածներն այն մասին, թե արդյոք ձիշտ է կուսակցության քաղաքականությունը՝ յերկրի ինդուստրացման արագ տեմպի վերաբերյալ: Վոչ վոք սիրտ չի անում բացահայտ կերպով դուրս գալու դեռևս XIV համագումարի կողմից հաստատված՝ կուսակցության գլխավոր գծի դեմ, վորպես մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու միակ ուղիի, վորպես նրա անտեսական յետամնացությունը հաղթահարելու միակ միջոցի դեմ: Այդ պատճառով ել խոսում են այն մասին, վոր մեր յերկրի ուժերից վեր բան է այն «լարված» տեմպը, վորով կուսակցությունը ստիպված է իրականացնել ինդուստրացումը, հարց են դնում՝ թե չի կարելի արդյոք այդ աշխատանքը տանել ավելի դանդաղ տեմպով:

Սակայն ինդուստրիայի զարգացման արագ տեմպը քննադատողները չեն ուզում հասկանալ, վոր պատմությունն այլ ընտրություն չի թողնում մեզ համար, վոր մենք ստիպված ենք ուժեղացրած մարշով գնալ ինդուստրացման ճանապարհով, վորովհետև մեր տեխնիկոնտեսական յետամնացությունը հաղթահարելու համար այլ միջոց չկա, վորովհետև այլ կերպ մենք չենք կարողանա հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին, այլ կերպ չենք կարողանա անջատ և ցիր ու ցան յեղած գյուղատնտեսությունը դնել նոր տեխնիքական բազայի վրա, խոշոր արտադրության բազայի վրա, առանց վորի անկարելի յե և գյուղատնտեսության կոլլեկտիվացումը: Հենց մեր հսկայական տեխնիկոնտեսական յետամնացությունը կապիտալիզմի առաջավոր յերկրներին, մեր գյուղատնտեսության բնագավառում ցիր ու ցան, յետամնաց, մանր արտադրության հրակայական գերակշռումը — դրանք են, վոր ստիպում են մեր կուսակցությանը բռնել ինդուստրիայի զարգացման արագ տեմպի ճանապարհը: Դեռ 1917 թ. սեպտեմբերին, իմպերիալիստական պատերազմի ժամանակ, «Գալիք կատաստրոֆը և ինչպես պայքարել նրա դեմ» բրոշյուրում, Լենինը ձևակերպեց հետևյալ դիլեման, վոր մեր յերկրի առաջ դրված է պատմության կողմից. «կամ կործանվել, կամ հասնել առաջավոր յերկրներին և անցնել նրանցից նաև տնտեսապես... Կործանվել կամ ամբողջ ուժերով ընթանալ առաջ: Այդպես է դրված հարցը պատմության կողմից» (տես XIV, մաս 2, 213): Իսկ 1923 թ.

47803-68
112

12770-57



մարտին Լենինը գրում է, վոր անհրաժեշտ է ձգնել հասնել այն վիճակին, վորպեսզի ամեն մի չնչին խնայողութուն պահվի մեր խոշոր մեքենային ինդուստրիայի զարգացման համար, ելեկտրիֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու համար և այլն: Դրանում և միմիայն դրանումն է լինելու մեր հույսը (ընդգծումը մերն է): Միայն այդ դեպքում մենք ի վիճակի կլինենք, արտահայտվելով պատկերավոր կերպով, նստել մի ձիուց մյուսի վրա, այն է՝ գյուղացիական, մուսուլմանական, ուստապառ ձիուց, քայքայված գյուղացիական յերկրի խնայողութուններին հարմարացված ձիուց, այն ձիու վրա, վորին փնտրում և չի կարող իր համար չփնտրել պրոլետարիատը, — խոշոր մեքենային ինդուստրիայի, ելեկտրիֆիկացիայի, Վոլխովստրոյի և այլն ձիու վրա»:

Լենինը մեր առաջ խնդիր է դնում «մնալ վոչ թե մանր-գյուղացիական յերկրի մակարդակի վրա, այլ այն մակարդակի վրա, վորն անշեղորեն ընթանում է միշտ առաջ և առաջ՝ դեպի խոշոր մեքենային ինդուստրիան» (հատ. XVІІІ, մաս 2, 138—139): Լենինի այս խոսքերում մենք ունենք յերկրի ինդուստրացման և սրա իրազորման լարված տեմպի անհրաժեշտության պարզ ձևակերպումը:

Մեր գլխավոր գիծը ուտոպիստական են համարում մենշևիկները. — կապիտալիստական ողակման պայմաններում սոցիալիստական յերկրի ինքնուրույնութունն ապահովելու պրոբլեմը նրանց թվում է անլուծելի, իսկ ինդուստրացման մեր վերցրած տեմպը — չափազանց: «Խորհրդային տնտեսութունը — քայքայված և հնացած հիմնական կապիտալի վերակառուցումը կատարում է առանց դրսի կապիտալի զգալի ներհոսման, համարյա բացառապես իր ներքին միջոցներով» — կարդում ենք Ո. Դոմաշևսկու՝ «Խորհրդային շինարարության սխալները» հոդվածում: «Յեթե նկատի ունենանք, վոր պատերազմի ժամանակի քայքայումներից հետո ավելի հարուստ յերկրներն անգամ իրենց վերքերը բուժելու համար արտասահմանյան վարկեր ստանալու կարիք ունեյին, ապա պարզ կլինի այն հսկայական ֆինանսական լարվածութունը, վոր պետք է վերապրի Խորհրդային Ռուսաստանը»: Յեվ մենշևիկը յենթադրում է, վոր «այն խնդիրը, վորը իր առաջ դրել է կուսակցութունը, պահպանելով այժմյան բոյլշևիկյան քաղաքականութունը, անլուծելի է» («Соц. Вестник» № 15, 3/VІІ, 1928 г.): Ուրեմն մենշևիկյան թեքումներ են հանդիսանում այն բոլոր փորձերը, վորոնք աշխատում են կասկածի յենթարկել մեր կուսակցության գլխավոր գիծը և նրա (գծի) հետ անխզելիորեն կապված՝ ինդուստրիայի և հատկապես ծանր ինդուստրիայի զարգացման արագ տեմպը»:

Այսպես, ընկ. Ֆրոմկինը 1928 թ. նոյեմբերին ԿԿ և ԿՎՀ անդամներին ուղղած իր նամակում, արդեն առանձին թեորիա յե զարգացում այն մասին, վոր անհրաժեշտ է արդյունաբերական շինարարության վրա վորքան կարելի յե քիչ ծախսել. նա համարում է, վոր մենք անպայման վատացնելու յենք մեր տնտեսության գործը, յեթե ԺՏԴԽ-ին կապիտալ շինարարության համար բաց թողնենք 650 միլիոն ուրբուց ավել: Հենց դա յել նշանակում է, վոր ընկ. Ֆրոմկինը դեմ է մեր ինդուստրիայի զարգացման ներկա տեմպի պահպանմանը: Մեր մամուլում ևս վերջերս յերևան յեկան հոդվածներ, վորտեղ ասվում էր, թե մեր հնարավորութուններից վեր բան է ինդուստրացման տեմպի ուժեղացումը:

Սակայն յեթե աջ թեքման ներկայացուցիչները տակավին չեն վճռում բացելուց ուղղակի դուրս գալ ինդուստրացման քաղաքականության դեմ և սահմանափակվում են նրանով, վոր հարձակումներ են գործում՝ այն բանի դեմ, վոր իբր թե մեր յերկրի ուժերից վեր է այդ տեմպը, ապա նրանք ավելի անկեղծ են մեր յերկրում տարվող պրոլետարական քաղաքականության հիմնական հարցում, այն է՝ բանվոր դասակարգի և գյուղացիության միջև գոյութուն ունեցող փոխհարաբերութունների հարցում, մեր գյուղացիական քաղաքականության հարցում: Այստեղ ցուցադրվում են մի ամբողջ կույտ հայացքներ և տեսակետներ, վորոնք ի վերջո ընդհանրապես հանգում են այն բանին, վոր լենինիզմի սահմաններից դուրս են հանում դրանց կրողներին: Այլ թեքման ներկայացուցիչները և կրողները այստեղ բռնում են այնպիսի դիրք, վորը կտրուկ կերպով տարբերվում է և դեմ է Իլյիչի պատգամներին ու մեր կուսակցության վորոշումներին. այդ դիրքը հետևողականորեն զարգանալու դեպքում, դրա կողմնակիցներն անխուսափելիորեն դիմելու յեն դեպի մենշևիկյան ճահիճը:

Պետք է շատ խիստ և լուրջ ուշադրութուն դարձնել նրա վրա, թե ոպպորտունիստներն ինչ տեսակետ ունեն գյուղացիական հարցում, վորովհետև այդ հարցի ձիշտ վորոշումից է, վոր, Լենինի խոսքերով ասած, «վերջին հաշվով կախված է մեր հանրապետության բախտը» (Ինչպես վերակազմել բանգյուղտեսչութունը):

Այլերի տեսակետը կուսակցության՝ գյուղացիության վերաբերյալ ունեցած քաղաքականության խնդրում, առաջին անգամ պարզ ձևակերպվել է ընկ. Ֆրոմկինի նամակներում (առաջին նամակը — 1928 թ. հունիսին, յերկրորդը — նույն թվի նոյեմբերին): — «Դյուղը, բացի չքավորության մի փոքր մասից, տրամադրված է մեր դեմ», —

գրում է նա իր առաջին նամակում: «Վերջին Ժամանակվա վերցրած ընդհանուր ուղղութիւնը՝ միջ. գյուղ. հիմնական մասսաներին հասցրել է անհույս և անհեռանկար դրութեան», — կարդում ենք նույն նամակում: Ընկ. Ֆրոնտկինի յերկրորդ նամակը, վոր խորագրում է առաջինի սխալները, խոսում է արդեն գյուղատնտեսութեան «զեզրադացիայի» մասին: Սա վոչ այլ ինչ է, բայց յեթե վարիանտներն այն թեմաների, վոր մենշևիկները վաղուց են մշակել իրենց մամուլում:

Ընկ. Ֆրոնտկինը, վորպես աջ թեքման ավելի ցայտուն արտահայտիչ, չի վախենում իր մտքերը ասել մինչև վերջը: Նա ուղղակի պնդում է, վոր բանվոր դասակարգի և գյուղացիութեան դաշինքի վերջն արդեն հասել է, և վոր այժմ այդ դաշինքը խզված է: Նույն միտքը մանրամասն կերպով զարգացվում է „Социалистический Вестник“-ի 1928 թ. 3/IV-ի 8 և 9 համարներում տպված „Смычка и размычка“ հոդվածում: Այստեղ մենք կարդում ենք «դաշինքի» փաստական խզման» մասին, այն մասին, վոր Սորհրդային կառավարութիւնը գյուղացիութեանը իր դեմ է «ապստամբեցրել» և այլն: Այլ կերպ ասած, մենշևիկյան հրատարակութեան եջերում մենք գտնում ենք նույն մտքերը, ինչ վոր և աջերի փատաթղթերում, միայն այն տարբերութեամբ, վոր մենշևիկներն ավելի հետևողականորեն են զարգացնում իրենց մտքերը: Այն, ինչ վոր ասում են հիմա աջերը, արդեն վաղուց է, վոր մենշևիկները հաստատում են:

Սորհրդային կառավարութեան՝ գյուղացիութեան նկատմամբ ունեցած քաղաքականութիւնը բնութագրելու համար վերջերս նոր տերմին է գործածութեան մեջ մտցվում, այն է՝ «գյուղացիութեան ռազմա-ֆեոդալական շահագործում»: Միանգամայն հասկանալի յե, վոր յեթե մենք ունենք գյուղացիութեան ռազմա-ֆեոդալական շահագործում, ուրեմն խոսք չի կարող լինել վոչ մի դաշինքի, բանվորների ու գյուղացիների վոչ մի միութեան մասին, ուրեմն մենք գտնվում ենք այդ յերկու դասակարգերի միջև տեղի ունեցող խուլ և ծածկված կովի կացութեան մեջ: Պարզ է, վոր գյուղացիութեան ռազմա-ֆեոդալական շահագործման այդ թեորիան ամենակտրուկ կերպով հակադեմ է Իլյիչի պատգամներին: Յուրաքանչյուր լենինիստի համար պարզ է, վոր պրոլետարական դիկտատուրայի ռեժիմը մեր յերկրում չի կարելի հիմնել գյուղացիութեան ռազմա-ֆեոդալական շահագործման վրա, և վոր նման քաղաքականութիւնը կտաներ դեպի Սորհրդային Իշխանութեան անխուսափելի կործանումը: Սակայն հնավոր է յերազը, բայց վորորմած է աստված, — ասում է հին ռուսական առածը: Վերջում են աղբյուրներն այդ ողբող տերմինալոգիայի: Այստեղ կրկին ստիպված

ենք դիմելու «Социалистический Вестник»-ին — անշուշտ նրան է պատկանում առաջնութիւնը:

Մեր առաջն է հայտնի Դ. Դալինի՝ «տնտեսական հաղթանակների և մեր պարտութիւնների մասին» հոդվածը («Соц. Вестник», № 19, 13/X, 1928 թ.): Նրա խոսքերով, «խորհրդային արտադրութիւնը բարձրացել է գյուղի անչափ շահագործման զնով»: Մենշևիկները — մտածում է Դալինը — սխալ գործեցին, ժխտելով խորհրդային արտադրութեան արագ վերելքի հնարավորութիւնը, վորովհետև թերագնահատեցին խորհրդային իշխանութեան՝ գյուղացիութիւնից միջոցներ կորզելու հնարավորութիւնները: Յեւ մենշևիկը անալոգիա յե բերում խորհրդային եկոնոմիկայի և «ճորտատիրական տնտեսութեան» միջև: «Պատկերացնենք մեզ միանգամայն անհեթեթ մի որինակ — գրում է նա. — Գերմանիայում տակավին կան միջնադարյան շատ ոտմանտիկներ, և քիչ չեն նաև վաղուց անցած ժամանակներին վերագոնալու մասին յերագողներ: Յենթադրենք, վոր վորևէ ռեակցեոն անկյունում, ասենք՝ Բավարիայում, վորոշված է վորևէ շրջան զնել միջնադարյան դրութեան մեջ: Վաստալներ, բարոններ, ֆեոդալական ամբոցներ և ճորտական գյուղացիական աշխատանք: Ի՞նչպիսի տնտեսական հետևանքներ են լինելու: Յեթե այդ շրջանը թողնել իր բախտին, — լինելու յե սով, եպիդեմիա, և ապստամբութիւնները շուտով վերջ են զնելու այդ անհեթեթ գյուտին: Իսկ յեթե պետութիւնը ցանկանա իրախուսել, պաշտպանել այդ «մեծ ֆեոդալական (ընդգծումը մերն է) փորձը», յեթե նա որեցոր մատակարարի այդ ֆեոդալական շրջանը ուրիշ կապիտալիստական տնտեսութիւններին իր մոտ հոսող խողոր ռեալ և դրամական արժեքներով, ապա ոտմանտիկների փորձը կարող է շատ փայլուն հաջողութիւն ունենալ — նրանք կտանեն հաղթանակ հաղթանակի յետևից»:

Ահա կուսակցութեան կողմից «գյուղացիութեանը ռազմա-ֆեոդալական շահագործման» յենթարկելու մասին խոսակցութիւնների սկզբնական աղբյուրը, խոսակցութիւններ, վոր մենք լսում ենք XV-րդ համագումարի վորոշումներին և աջ թեքման միջև տատանվող ընկերներից. բանից դուրս է դալիս, վոր այստեղ մենք գործ ունենք մեր հին ծանոթ Դալինից բանագողութիւն կատարելու հետ: Դալինի հոդվածը տպված է «Соц. Вестник»-ի 1928 թ. 13/X, իսկ տատանվող ընկերները սկսեցին Կենտկոմի դեմ ոգտվել այդ փթած, մենշևիկյան զինապահեստից վերցրած զենքով միայն հունվարի վերջերից: Նրանց մնում է միայն հետևել Դալինին, յերբ նա խորհրդային տնտեսութիւնը «ճորտատիրական տնտեսութեան» հետ համեմատելուց ավելի

հետուն և գնում և զուգահեռ և անցկացնում մեր և ճորտատիրական տնտեսություն միջև:

Այսպիսով, մեր սոցիալիստական արդյունաբերություն հաջողությունները բացատրվում են նրանով, վոր նա ճորտատիրական և ստրկատիրական տնտեսությունների նման «կերակրվում, պահվում և աճում և մյուս ազգաբնակչության հաշվին», — «գյուղացիության ռազմա-ֆեոդալական շահագործման» հաշվին, ինչպես այժմ ասում են մեզ մոտ մի քանի ընկերներ: Մենչևեի Դալինի մոտ մենք գտնում ենք նաև սկզբնական աղբյուրը՝ մեր պետական արդյունաբերության ոգտին գյուղացիների արած հավելյալ վճարների մասին, գյուղի վրա հավելյալ լրացուցիչ տուրքեր դնելու մասին գոյություն ունեցող բողոքները, վոր մենք այժմ ավելի հաճախ ենք լսում աջերից և նրանց հարող՝ մեր կուսակցության տատանվող տարրերից: Դալինի տեսակետով, մեր սոցիալիստական եկոնոմիկան «կարող և գոյություն ունենալ միայն վորպես ռազիս մի խոշոր տնտեսական ամբողջության մեջ, վորը նրան սնում և իր հյութերով: Նա (եկոնոմիկան) հենց գրանով դառնում և տնտեսական պարադիտային սխտեմ, շահագործում և ժողովրդական տնտեսության մնացած մասը»: Խորհրդային արդյունաբերության զարգացման հնարավորությունը շարունակ ժխտող մենչևեիկների սխալը Դալինը գտնում և նրանում, վոր նրանք թերազնահատել են գյուղացիներից միջոցներ կորզելու հնարավորությունները. «խորհրդային տնտեսության նոր ֆոնդերը հավաքվել են վոչ թե սեփական արտադրությունից, այլ այն մասը վտակներից, վոր քսան միլիոն գյուղացիական տնտեսություններից թափվում են պետական մի կաթսայի մեջ»: Այստեղից և Դալինը հետևեցնում է՝ աջ թեքման համար ընդլայնվող գյուղի դեգրադացիան. «Դա ամբողջ ուժի մի դժբախտությունն է վոր նա արդյունաբերական հաջողությունները կարողանում և գնել միայն ծանր պարտությունների գնով ազրարային ֆրոնտում... Հարյուրավոր միլիոնների կորզումը գյուղից՝ հոգուտ պետական արդյունաբերության, տանում և դեպի գյուղատնտեսության թուլացում. նա չի կարող զարգանալ և կանգ կառնի, գյուղացիության աղքատությունը ստաբիլիզացիայի կենթարկվի. անընդհատ տեղի կունենան կրիզիսներ՝ կզգացվեն հումքի, տեխնիքական կուլտուրաների պակասություն և, վերջապես, հացի պակասություն... Այն հարյուրավոր միլիոն ուղբերները, վոր գյուղացիությունը դնելու յեր գյուղատնտեսության մեջ, գնում են ինդուստրիայի կարիքների վրա, և անդունդը գյուղի յեսպատերազմյան զարգացման ու քաղաքի միջև տարեց-տարի գնալով ավելի և ավելի յե խորանում»: Ահա գյուղի դե-

գրադացիայի «թեորիայի» լրացված ձևակերպումը, վոր զարգացնում են աջ թեքման ներկայացուցիչները: Միթե ընկ. Պրոմկինը չի գնում Դալինի հետքերով, յերբ յուր առաջին նամակում պնդում է, վոր «վերջին ժամանակվա վերցրած ընդհանուր ուղղությունը միջակ գյուղացիության հիմնական մասսաներին հասցրել և անհուշ և անհետանկար դրություն», իսկ յերկրորդ նամակում, վորպես առաջինի խորացում, խոսում և գյուղատնտեսության «դեգրադացիայի» մասին:

Այսպես ուրեմն, աջ ուղիւնիստները և տատանվողները կուսակցության քաղաքականությունը գյուղում, չքավոր և միջակ գյուղացիների անհատական տնտեսությունների բարձրացման համար թափվող աշխատանքը, հոգուտ կոնտրակտացիաների տարվող աշխատանքը, հոգուտ կոոպերացիայի զարգացման կատարվող աշխատանքը, բերքատվությունը բարձրացնելու, միջակի տուրքերը թեթևացնելու, կուլիկտիվ տնտեսությունները և խորհրդային տնտեսությունները զարգացնելու աշխատանքը — այդ ամենը նրանք, հետևելով մենչևեիկներին, անվանում են գյուղացիության ռազմա-ֆեոդալական շահագործման քաղաքականություն: Մինչդեռ կուսակցությունը, յեկակետ ունենալով Լենինի այն միտքը, թե՛ «գասակարգին խաբել չի կարելի», մասսաներին ասում և ամբողջ ճշմարտությունը: Այո, գյուղացիությունը առայժմ դեռ ավել և վճարում՝ արդյունաբերական ապրանքների համեմատաբար բարձր գների շնորհիվ, և պակաս և ստանում՝ գյուղատնտեսական պրոդուկտների համեմատաբար ցածր գների հետևանքով: Դա անխուսափելի յե, վորովհետև այլ կերպ մենք չենք կարող բարձրացնել մեր ինդուստրիան, վորը սպասարկում և ամբողջ յերկրին, նաև գյուղացիությունը: Առանց դրա մենք չեյինք կարողանալու պահել և ավելի ուժեղացնել ինդուստրիայի զարգացման արդի տեմպը, առանց վորի մենք չենք կարող՝ տեխնիքական ավելի բարձր բաղայի վրա՝ վերականգնել նաև մեր գյուղական տնտեսությունը, վորպեսզի այդպիսով բարձրացվի գյուղի բարեկեցությունը և այնուհետև բոլորովին վոչնբարձրացվի գյուղի բարեկեցությունը և այնուհետև քաղաքի և գյուղի չացվեն այդ հավելյալ վճարումները, այդ «մկրատը» քաղաքի և գյուղի միջև: Իսկ դրանց վոչնչացնել հենց այժմ, — նշանակում և խանգարել յերկրի ինդուստրացման գործը, նույն թվում և գյուղատնտեսության ինդուստրացումը, նշանակում և քայքայել մեր տակավին չամրացած սոցիալիստական արդյունաբերությունը և այդպիսով հարվածել մեր ժողովրդական ամբողջ տնտեսությանը: Պարզ է, վոր այժմ այդ անել չի կարելի:

Կուսակցության քաղաքականությունը ձգտում և վերացնել այդ «մկրատը» քաղաքի և գյուղի միջև, ձգտում և վերացնել այդ պակաս

և ավել վճարումները: Բայց այդ «մկրատն» հենց այժմ վոչնչացնել չի կարելի առանց վտանգելու մեր արդյունաբերությունը՝ մեր ամբողջ ժողովրդական տնտեսության այդ հիմնական մղիչը: Մեր քաղաքականությունը պետք է կայանա նրանում, վոր այդ «մկրատը» հետզհետե թուլացնենք, տարեց տարի իրար մոտեցնելով նրա ծայրերը, իջեցնելով արդյունաբերական ապրանքների գները և բարձրացնելով հողագործության տեխնիկան, վորը հացի արտադրությունը եժանացնելու յե, և այդպիսով աստիճանաբար լիովին վերացնենք այդ՝ պակաս կամ ավել վճարումները: Գյուղացիությունը կհասկանա նման քաղաքականության անհրաժեշտությունը, քանի վոր «մկրատի» ծանրությունը տարեց տարի կթուլացվի. մյուս կողմից ել, պետք է նկատել, վոր սովորականից բարձր վճարները հողուտ սոցիալիստական արդյունաբերության, տեղի յեն ունենում վոչ թե կապիտալիստական զարգացման պայմաններում, վորտեղ գյուղացիության մեծ մասսան մատնված է լինում աղքատության, ավերման, այլ նա տեղի յե ունենում խորհրդային կարգերում, սոցիալիստական պետության մեջ, վոր բացատում է գյուղացիության շահագործումը և ապահովում է գյուղացիության նյութական դրության հետզհետե բարելավման գործը: Ընկ. Ռիկովը 1928 թ. VІІ/13-ի Մոսկվայում կայացած կուսակցիվի ժողովում ասում եր «մանր ապրանքային տնտեսության արտադրության և խոշոր արդյունաբերություն տված արտադրության այսպես ասած եկվիվալենտային փոխանակության անկարելիության մասին: Սա բացատրվում է նրանով վոր յերկրի ինդուստրացումը տվյալ շրջանում համենայն դեպս կապված է այն բանի հետ, վոր միջոցները վոչ սոցիալիստական հատվածից փոխադրվեն սոցիալիստական հատվածը: Ինդուստրիալիզացիան չի կարող դիմանալ առանց ժողովրդական տնտեսության այլ հատվածների հաշվին կատարված այդպիսի լրացուցիչ աղբյուրների, վորոնցից նա ուժ է ստանում, վորովհետև մենք չունենք ոտար կապիտալի շատ թե քիչ եյական աղբյուր (վարկ, փոխառություն)» (Ա. Ի. Ռիկով. Ընթացիկ մոմենտը և կուսակցության անելիքները. էջ 15 — 16):

Միանգամայն պարզ է վոր մենք սոցիալիստական ինդուստրիայի կառուցման այլ ճանապարհ չունենք, վորովհետև մենք չենք կարող սպասել ոտարյերկրյա կապիտալի՝ նշանակալից չափով ներմուծմանը մեր յերկիրը, իսկ շահագործող դասակարգերը՝ կալվածատերերը և կապիտալիստները վաղուց արդեն եքապրոպրիացիայի յեն յենթարկված հոկտեմբերյան հեղափոխության կողմից, այդպիսով միայն բուրժուազիային տուրքադրելով՝ սոցիալիստական արդյունաբերություն

չես կառուցի: Կուլակից ել մենք առնում ենք համարյա ամենը՝ ինչ վոր կարելի յե վերցնել՝ առանց նրան իսպառ քայքայելու: Մեր սոցիալիստական ինդուստրիան մենք կարող ենք ստեղծել միմիայն բանվորների և գյուղացիների հաշվին: Մեր միություն բանվոր դասակարգը կարող մասնակցություն է ցույց տալիս ինդուստրիալիզացիայի ծախքերին. քանի շատ է աճում մեր սոցիալիստական արդյունաբերության տեսակարար կշիռը մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր կառուցվածքում, այնքան ավելի կլինի և մեր պրոլետարիատի մասը սոցիալիստական շինարարության ծախքերի մեջ: Պրոլետարիատը՝ մեր Միության իշխող դասակարգը՝ գիտակցաբար կտրում է իրենից, քչացնում է իր սպառման բաժինը, վորպեսզի դրանով ուժեղացնի մեր սոցիալիստական կուսակման ֆոնդի չափը: Պարզ է ուրեմն, վոր բանվոր դասակարգի դաշնակիցն ևս մեր յերկրում — գյուղացիությունը պահանջվող ծախքերի իր բաժինը, վորովհետև ինքը՝ գյուղացիությունը պակաս չի շահագործված մեր ինդուստրիայի աճման մեջ, վորը մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բանալին է հանդիսանում. դրանից դուրս մենք մի ճանապարհ ունենք միայն՝ կապիտալիզմի վերականգնման ճանապարհը, վերադարձ՝ դեպի կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը:

Կուսակցության վարած քաղաքականությունը գյուղացիության հանդեպ, քողաղուրկ է անում «գյուղացիության ուղղափառական շահագործման» մասին հրեշային հայտարարությունը: Հիշենք թեկուզ այս վերջին տարվա ձեռնարկությունները: Ինչ եր նշանակում է Կենտրոնական Կոմիտեյի հուլիսյան պլենումի բանաձևը գյուղատնտեսության գների բարձրացման մասին, արտակարգ միջոցները վերացնելու մասին: Դա մի վորոշում եր, վոր ուղղված եր անհատական գյուղական տնտեսությունների զարգացման ազդակների ուժեղացման կողմը: Կենտրոնական Կոմիտեյի նոյեմբերյան պլենումին մի անգամ ել ընդգծվեց մանր գյուղացու — չքավորի և միջակի — տնտեսության զարբանցման գործոնների ուժեղացման հարցը: Պլենումի վորոշումների հետագա զարգացման դիմաց մենք ունենք Կենտր. Գործադիր Կոմիտեյի սեսիայի վորոշումը բերքայնության բարձրացման մասին, վորտեղ ասված է վոր անհրաժեշտ է ընդառաջ գնալ անհատական գյուղացիական տնտեսության՝ նրա բերքայնությունը բարձրացնելու գործում:

Այնքան վորոշում են սպեկուլյացիա անել, ասելով — գյուղացիության գյուղհարկի չափը մեծ է: Բայց նրանք մոռանում են հետևյալը — նախ՝ գյուղացիների 35% (չքավորությունը) ազատված է հարկից,

յերկրորդ՝ ուժեղացված և ունևոր-կուլակային գյուղացիութեան հարկավորումը (արդյոք այդ մասին նրանք չէին վշտանում): Ճիշտ է վոր անցյալ տարվա գյուղահարկի հավելումը՝ մինչև 420 միլ. ռուբլու, և գյուղացիութեան 35%-ին հարկից ազատելը վորոշ դժվարութեաններ եր ստեղծել միջակ գյուղացիութեան մի մասի համար: Այժմ այդ աչքաթողի արած հանգամանքը ուղղված է գյուղահարկի վորոշակի փոփոխութեամբ, նվազեցնելով այն մինչև 375 միլիոն ռուբլու: Ինչպես հայտնի է, մենք մի վորոշում ենք ընդունել՝ հարկային արտոնութեաններ տալու այն չքավոր և միջակ տնտեսութեաններին, վորոնք կլայնացնեն իրենց ցանքսերը: Այդպիսով պարզ է, վոր չարաչար սխալվում են աջերը և նրանց դաշնակիցները, վորոնք ասում են թե գյուղացիութեան «գեր-հարկադրումը» կուսակցութեան քաղաքականութեան քաղաքիչ մասն է հանդիսանում, վոր իբր կուսակցութեան և Կենտրոնական Կոմիտեն չեն կիրառում կուսակցութեան վորոշումները՝ անհատական տնտեսութեաններին ուժ տալու և դրանց բերքայնութեան բարձրացման մասին: Այն լայնածավալ պայքարը վոր տանում է ամբողջ կուսակցութեանը բերքայնութեան բարձրացման համար, այն պայքարը, վոր հատկապես ուժեղացավ ԽՍՀՄ Կենտրոնական վերջին նստաշրջանից հետո, այն կոնֆերենցիաները, վոր հրավիրվում են բոլոր հացաշրջաններում՝ հացահատիկների հարցերի վերաբերյալ, կոնտրակտացիաների լայն կիրառումը, այդ բոլորը ապացուցում են, վոր ամբողջ կուսակցութեան և նրա Կենտրոնական Կոմիտեյի ուշադրութեանը լիովին դարձված է անհատական գյուղացիական տնտեսութեանը ուժ տալու հարցի վրա:

Այստեղ մենք մոտենում ենք մի ուրիշ մոմենտին, վոր բնորոշ է աջ թեքման իդեոլոգիայի համար — այդ այն է, վոր նրանք չեն ընթրում լենինյան ուսմունքը այն ղեկավար դերի մասին, վոր պրոլետարիատն ունի բանվորների և գյուղացիների դաշինքում: Ինչպես հայտնի է լենինյան ուսմունքը բանվորների և գյուղացիների դաշինքի մասին՝ իբրև անհրաժեշտ պայման՝ մեր յերկրում պրոլետարիատի ղեկատուության հաստատուն լինելու համար, այդ ուսմունքը վերաքննվում էր նաև տրոցկիստական ուղղության կողմից. վերջինս չեր հասկանում միջակի հետ կնքած դաշինքի ամբապնդման անհրաժեշտութեանը, չեր հավատում բանվորների և գյուղացիների ամուր դաշինքի հնարավորութեանը: Աջ թեքումը հակառակ սխալն է գործում, նա ինչպես հարկն է հաշվի չէ առնում բանվոր դասակարգի ղեկավարող դերը բանվոր-գյուղացիական դաշինքում:

Լենինն ասում է, «վոր գյուղացիութեան հետ համաձայնութեանը միայն կարող է փրկել Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխութեանը, քանի դեռ մյուս յերկրներում հեղափոխութեանը վրա չի հասել» (հ. XVIII, մ. I, 138): Սակայն դրա հետ միասին, մեր ուսուցիչը հայտնում է — «դիկտատուության գերագույն սկզբունքն է՝ պահպանել պրոլետարիատի և գյուղացիութեան դաշինքը, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահպանել ղեկավարող դերն ու պետական իշխանութեանը» (հ. XVIII, մ. I, 331): Տրոցկիստական ուղղության չի հասկանում այդ ֆորմուլայի առաջին մասը, նա չի հավատում բանվորների և գյուղացիների դաշինքի ամրութեանը, չի տեսնում այն հնարավորութեանը, վորով պետք է մասնակից անել գյուղացիական մասսան, սրանց թվում նաև միջակներին, սոցիալիստական շինարարութեանը: Աջ թեքումը չի ուզում գիտենալ Լենինի սկզբունքները պրոլետարիատի ղեկավարող դերի մասին՝ բանվոր-գյուղացիական բլոկում, և այդպիսով իսկ խախտում է Լենինի ուսմունքը պրոլետարիատի դիկտատուության մասին:

Բանվոր-գյուղացիական դաշինքի մեջ պրոլետարիատի ղեկավար դերի սկզբունքն է, վոր զանազանում ու բնորոշում է Լենինի ուսմունքը՝ բանվորների ու գյուղացիների փոխհարաբերութեան մասին՝ մենշեիկներին ու եսերների ունեցած ըմբռնողութեանից: Չե վոր մանրբուժուական դեմոկրատներն ել են կողմնակից բանվորների ու գյուղացիների դաշինքին, սակայն... զուտ դեմոկրատիայի հիմունքով, հավասարութեան հիմունքով, ձայների մեծամասնութեան հիմունքով: Քսկ յեթե Լենինն ասում է բանվորների և գյուղացիների դաշինքի մասին, նա շեշտում է, վոր դա առանձնահատուկ դաշինք է: «Պրոլետարիատի դիկտատուան, — ասում է Լենինը, — դասակարգային դաշինքի մի հատուկ ձև է՝ պրոլետարիատի, աշխատավորների ավանգարդի և բազմաթիվ աշխատավորների վոչ պրոլետարական խավերի հետ: Իս մի առանձնահատուկ դաշինք է, վոր ձևակերպվում ու ստեղծվում է հատուկ պայմաններում... դա սոցիալիզմի հաստատ կողմնակիցների միութեանն է նրա տատանվող դաշնակիցների միջև, տնտեսապես, քաղաքականապես, սոցիալապես, հոգեպես տարբեր դասակարգերի դաշինք է» (հ. XVI, 241): Պրոլետարիատի դիկտատուության, մի դասակարգի տիրապետության գաղափարը բնավ չի հակասում այն դաշինքին, վոր կապվում է պրոլետարիատի և մյուս դասակարգերի միջև հենց այն պատճառով վոր այդ դաշինքն՝ ըստ Լենինի՝ ուրույն տեսակի է, դաշինքի մի առանձնահատուկ ձևն է՝ տնտեսապես և քաղաքականապես տարբեր դասակարգերի միջև: Բանվորների և գյուղացիների դաշինքում պրոլետարիատի ունեցած հենց այդ ղեկավար դերիցն է վոր պատրաստ

են հրաժարվել մեր աջ ուղիները և դրանով իսկ նահանջ են տալիս
լենինիզմից: «Մանր բուրժուազիայի ուժը յերերվող ուժ է — ասում է
մեզ Լենինը, — տատանումները ընդհանուր առմամբ մանր արտադրողի
իսկական «բնությունն» են» (հ. XVIII, մ. I, 229): «Տատանվողները —
տնտեսականապես ինքնուրույն չեն. պրոլետարիատը տնտեսականապես
ինքնուրույն է» (հ. XVIII, մ. I, 223 — 224). «Ահա ինչու այդ դասակարգի
հանդեպ, կամ այդ հասարակական տարրերի վերաբերմամբ (գյուղա-
ցիության. վ. Բ.) պրոլետարիատի անելիքը կայանում է նրան ղեկա-
վարելու և նրան իր ազդեցության տակ առնելու պայքարի մեջ: Քաշել
իր յետևից տատանվողներին, անկայուններին — ահա թե ինչ պետք
է անի պրոլետարիատը» (հ. XV, 335). Ահա թե ինչու յե բանվորներին
և գյուղացիության դաշինքը հանդիսանում անհավասար դասակարգերի
դաշինք. ահա թե ինչու յե անհրաժեշտ պրոլետարիատի ղեկավարու-
թյունը այդ դաշինքում, վորովհետև նրա հաստատուն ղեկավարու-
թյունը կարող է հաղթահարել այն տատանումներն ու յերերումները, վոր
անխուսափելի յեն մանր արտադրողի համար:

Լենինը տրանսպորտի բանվորներին համառուսական համագումար-
ում, 1921 թ. III/27, պարզորոշ ասում է. «Այն դասակարգը, վորն
իր ձեռքն է առել քաղաքական գերիշխանությունը, առել է այն՝
դիտակցելով, վոր մենակ է վերցնում այն: Դա ամփոփված է պրո-
լետարիատի ղեկատուության հասկացողության մեջ: Այդ հասկացողու-
թյունը իմաստ է ունենում այն ժամանակ, յերբ մի դասակարգ գիտե,
վոր նա միայնակ է իր ձեռքն առնում քաղաքական իշխանությունը և
ինքն իրեն և այլոց չի խաբում «իշխանությունը համաժողովրդական,
ընդհանուր ընտրողական, ազգովին սրբազորված լինելու մասին»
խոսակցություններով... (հ. XVIII, մ. I, 174 — 5):

Լենինը Կոմիտեներնի III կոնգրեսին «Ռիկ տակտիկայի մասին»
արտասանած իր ճառի մեջ պրոլետարիատի՝ գյուղացիության հանդեպ
ունեցած վերաբերմունքի մասին այսպես է դնում հարցը. «գյուղացիու-
թյունը կազմում է ազգաբնակչության հոծ մեծամասնությունը: Նա
անշուշտ, շատ է յետ մնացել: Ի՞նչպես է գործնականում արտահայտ-
վում հեղափոխության զարգացման ընթացքում իշխանությունը իր
ձեռքերում պահած պրոլետարիատի վերաբերմունքը ղեպի գյուղացիու-
թյունը: Առաջին ձևը՝ միությունն է, սերտ դաշինք: Մա շատ
դժվար խնդիր է, բայց համենայն դեպս հնարավոր է տնտեսապես և
քաղաքականապես:

«Ի՞նչպես մենք մոտեցանք այդ հարցին գործնականորեն: Մենք
գյուղացիության հետ դաշինք կնքեցինք: Մենք այդ

դաշինքը այսպես ենք հասկանում՝ պրոլետարիատն ազատագրում է
գյուղացիությանը բուրժուազիայի շահագործումից, ազատում է նրան
բուրժուազիայի ղեկավարությունից և ազդեցությունից: Պրոլետարիատը
իր կողմն է դրավում նրան, վորպեսզի յերկուստեք միասին հաղթեն
շահագործողներին:

«Մենշևիկներն այսպես են ասում՝ գյուղացիությունը մեծամաս-
նություն է կազմում, մենք զուտ դեմոկրատներ ենք, վորոշողը՝ մեծա-
մասնությունն է: Իսկ վորովհետև գյուղացիությունը չի կարող ինքնու-
րույն լինել, ապա գործնականորեն սա նշանակում է վոչ այլ ինչ
յեթե վոչ՝ կապիտալիզմի վերականգնումը: Լոգոնդն էլ
նույնն է՝ դաշինք գյուղացիության հետ: Յերբ այդ մենք ենք ասում,
ապա մենք հասկանում ենք սրանով պրոլետարիատի ուժեղացումն
ու ամրացումը» (հ. XVIII, մ. I, 326):

Գյուղացիության հետ դաշնադիր լինելու գլխավոր իմաստը Լենինը
գտնում է «պրոլետարիատի ուժեղացման և ամրացման»
մեջ: Թող լավ այս միտները պահեն թեքված ընկերները, վորոնց
վարքագիծը անխուսափելի կերպով տանում է ղեպի պրոլետարիատի
դիրքերի թուլացումը, կորցնելով այդպիսով այն ղեկավարող դերը, վոր
պետք է նա ունենա բանվոր-գյուղացիության դաշինքի մեջ:

«Այժմ պրոլետարիատը իր ձեռքն է առած իշխանությունը և
ղեկավարում է այն: Նա ղեկավարում է գյուղացիությանը: Ի՞նչ է
նշանակում «ղեկավարել գյուղացիությանը»: Մա նշանակում է նախ
տանել դասակարգերի վոչնչացման գիծ և վոչ թե մանր արտադրողին
պահպանել: Յեթե մենք այդ արմատական և հիմնական գծից շեղվեյինք,
այն ժամանակ մենք կդադարեյինք սոցիալիստ լինելուց և կընկնեյինք
մանր բուրժուաների, ես-երների ու մենշևիկների բանակը, վորոնք այս
բույսի պրոլետարիատի ամենավոխերիմ թշնամիներն են հանդիսա-
նում» (հ. XVIII, մ. I, էջ 249):

«Դասակարգերի վոչնչացման կողմը տանող գիծը» — դա հենց
սոցիալիզմի կառուցման գիծն է: Պրոլետարիատին անհրաժեշտ է գյու-
ղացիության դաշինքը սոցիալիստական հասարակակարգի կառուցման
նպատակով: Մինչդեռ աջերը և նրանց կողմը գլորվող հաշտվողական-
ները «այս արմատական, հիմնական գծից դուրս են ընկել»: հրաժար-
վելով բանվոր-գյուղացիական դաշինքում բանվորներին ղեկավարող
դերից, նրանք փաստորեն տանում են մանր արտադրողին նպաստելու
գիծը — նրանց սպառնում է մանր-բուրժուական ճահիճն ընկնելու
վտանգը: Բանվոր-գյուղացիական դաշինքի մեջ պրոլետարիատի ղե-
կավարող դերը պահպանելու անհրաժեշտությունը խնդիրը, ըստ Լենինի՝

են հրաժարվել մեր աջ ուղիները և դրանով իսկ նահանջ են տալիս
լենինիզմից: «Մանր բուրժուազիայի ուժը յերերվող ուժ է — ասում է
մեզ Լենինը, — տատանումները ընդհանուր առմամբ մանր արտադրողի
իսկական «բնությունն» է» (հ. XVIII, մ. I, 229): «Տատանվողները —
տնտեսականապես ինքնուրույն չեն. պրոլետարիատը տնտեսականապես
ինքնուրույն է» (հ. XVIII, մ. I, 223 — 224). «Ահա ինչու այդ դասակարգի
հանդեպ, կամ այդ հասարակական տարրերի վերաբերմամբ (գյուղա-
ցիության. Վ. Բ.) պրոլետարիատի անելիքը կայանում է նրան ղեկա-
վարելու և նրան իր ազդեցության տակ առնելու պայքարի մեջ: Դաշել
իր յետևից տատանվողներին, անկայուններին — ահա թե ինչ պետք
է անի պրոլետարիատը» (հ. XV, 335). Ահա թե ինչու յե բանվորների
և գյուղացիության դաշինքը հանդիսանում անհավասար դասակարգերի
դաշինք. ահա թե ինչու յե անհրաժեշտ պրոլետարիատի ղեկավարու-
թյունը այդ դաշինքում, վորովհետև նրա հաստատուն ղեկավարու-
թյունը կարող է հաղթահարել այն տատանումներն ու յերերումները, վոր
անխուսափելի յեն մանր արտադրողի համար:

Լենինը արանսպորտի բանվորների համառուսական համագումար-
ում, 1921 թ. III/27, պարզորոշ ասում է. «Այն դասակարգը, վորն
իր ձեռքն է առել քաղաքական գերիշխանությունը, առել է այն՝
գիտակցելով, վոր մենակ է վերցնում այն: Դա ամփոփված է պրո-
լետարիատի գիտատուրայի հասկացողության մեջ: Այդ հասկացողու-
թյունը իմաստ է ունենում այն ժամանակ, յերբ մի դասակարգ գիտե,
վոր նա միայնակ է իր ձեռքն առնում քաղաքական իշխանությունը և
ինքն իրեն և այլոց չի խարում «իշխանությունը համաժողովրդական,
ընդհանուր ընտրողական, ազգովին սրբագործված լինելու մասին»
խոսակցություններով... (հ. XVIII, մ. I, 174 — 5):

Լենինը Կոմինտերնի III կոնգրեսին «Ռեյի տակտիկայի մասին»
արտասանած իր ճառի մեջ պրոլետարիատի՝ գյուղացիութան հանդեպ
ունեցած վերաբերմունքի մասին այսպես է դնում հարցը. «գյուղացիու-
թյունը կազմում է ազգաբնակչության հոծ մեծամասնությունը: Նա
անշուշտ, շատ է յետ մնացել: Ի՞նչպես է գործնականում արտահայտ-
վում հեղափոխության զարգացման ընթացքում իշխանությունը իր
ձեռքերում պահած պրոլետարիատի վերաբերմունքը դեպի գյուղացիու-
թյունը: Առաջին ձևը՝ միությունն է, սերտ դաշինք: Մա շատ
դժվար խնդիր է, բայց համենայն դեպս հնարավոր է տնտեսապես և
քաղաքականապես:

«Ի՞նչպես մենք մոտեցանք այդ հարցին գործնականորեն: Մենք
գյուղացիության հետ դաշինք կնքեցինք: Մենք այդ

դաշինքը այսպես ենք հասկանում՝ պրոլետարիատն ազատագրում է
գյուղացիությանը բուրժուազիայի շահագործումից, ազատում է նրան
բուրժուազիայի ղեկավարությունից և ազդեցությունից: Պրոլետարիատը
իր կողմն է գրավում նրան, վորպեսզի յերկուստեք միասին հաղթեն
շահագործողներին:

«Մենշևիկներն այսպես են ասում՝ գյուղացիությունը մեծամաս-
նություն է կազմում, մենք ղուտ դեմոկրատներ ենք, վորոշողը՝ մեծա-
մասնութունն է: Իսկ վորովհետև գյուղացիությունը չի կարող ինքնու-
րույն լինել, ապա գործնականորեն սա նշանակում է վոչ այլ ինչ
յեթե վոչ՝ կապիտալիզմի վերականգնումը: Լոգունգն էլ
նույնն է՝ դաշինք գյուղացիության հետ: Յերբ այդ մենք ենք ասում,
ապա մենք հասկանում ենք սրանով պրոլետարիատի ուժեղացումն
ու ամրացումը» (հ. XVIII, մ. I, 326):

Գյուղացիության հետ դաշնագիր լինելու գլխավոր իմաստը Լենինը
գտնում է «պրոլետարիատի ուժեղացման և ամրացման»
մեջ: Թող լավ այս միտները պահեն թեքված ընկերները, վորոնց
վարձագիծը անխուսափելի կերպով տանում է դեպի պրոլետարիատի
դիրքերի թուլացումը, կորցնելով այդպիսով այն ղեկավարող դերը, վոր
պետք է նա ունենա բանվորա-գյուղացիության դաշինքի մեջ:

«Այժմ պրոլետարիատը իր ձեռքն է առած իշխանությունը և
ղեկավարում է այն: Նա ղեկավարում է գյուղացիությանը: Ի՞նչ է
նշանակում «ղեկավարել գյուղացիությանը»: Մա նշանակում է նախ
տանել դասակարգերի վոչնչացման գիծ և վոչ թե մանր արտադրողին
պահպանել: Յեթե մենք այդ արմատական և հիմնական գծից շեղվեցինք,
այն ժամանակ մենք կդադարեցինք սոցիալիստ լինելուց և կընկնեցինք
մանր բուրժուաների, ես-երների ու մենշևիկների բանակը, վորոնք այս
բույսի պրոլետարիատի ամենավոխերիմ թշնամիներն են հանդիսա-
նում» (հ. XVIII, մ. I, էջ 249):

«Դասակարգերի վոչնչացման կողմը տանող գիծը» — դա հենց
սոցիալիզմի կառուցման գիծն է: Պրոլետարիատին անհրաժեշտ է գյու-
ղացիության դաշինքը սոցիալիստական հասարակարգի կառուցման
նպատակով: Մինչդեռ աջերը և նրանց կողմը գլորվող հաշտվողական-
ները «այս արմատական, հիմնական գծից դուրս են ընկել»: հրաժար-
վելով բանվորա-գյուղացիական դաշինքում բանվորներին ղեկավարող
դերից, նրանք փաստորեն տանում են մանր արտադրողին նպաստելու
գիծը — նրանց սպառնում է մանր-բուրժուական ճահիճն ընկնելու
վտանգը: Բանվորա-գյուղացիական դաշինքի մեջ պրոլետարիատի ղե-
կավարող դերը պահպանելու անհրաժեշտության խնդիրը, ըստ Լենինի՝

«պրոլետարիատի զիկտատուրայի գերագույն սկզբունքը»՝ սերտորեն կապված է նաև այն զիջումների հետ վոր բանվորը կարող է և պետք է անի իր դաշնակից գյուղացուն: Մենք հիշում ենք, վոր ըստ Լենինի՝ պրոլետարիատի զիկտատուրան հանգում է տնտեսապես, քաղաքակա- նապես, հոգեպես վոչ միանման դասակարգերի միության վրա, — այս- տեղից և — շատ հնարավոր կլինեն այդ միության ներսում հակա- սություններ, բանվորների և գյուղացիների տարակարծիքներ: Կուսակ- ցության X-րդ համագումարում բնահարկի մասին իր ճառի մեջ Լենինը ուղղակի խոսում է «պրոլետարիատի և մանր հողագործի տնտեսական շահերի գիտակցական խորը տարբերության» մասին: «Իսասակարգերին խաբել չի կարելի — ասում է նա: Մեզ հարկավոր է — համաձայն մեր աշխարհայացքի, մեր տասնամյա հեղափոխական փորձի, մեր հեղափոխության տված դասերի — հարցերը դնել շեշ- տակի: — դասակարգերի շահերը տարբեր են, մանր հողագործը այն չի ուզում, ինչ վոր ցանկանում է բանվորը»:

Բայց և այնպես ի՞նչ կերպ է հնարավոր այս յերկու դասա- կարգերի միությունը, յեթե «գյուղացին այն չի ուզում, ինչ բան- վորը»: Լենինը հարց է տալիս. «Հաշիվ կա՞ արդյոք գյուղացիության համար բաժանվել պրոլետարիատից, վորպեսզի յետ գոլորվի դեպի կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը, թե՞ հաշիվ չկա՞ Հաշիվ արեք և յեկեք միասին անենք այդ հաշիվը»:

Յեվ մենք կարծում ենք վոր յեթե ճիշտ կերպով հաշիվ անենք, ապա պրոլետարիատի և մանր հողագործի՝ տնտեսական շահերի ըստ ամենայնի գիտակցական խորը պարբերությամբ՝ հաշիվը կլինի մեր ոգտին»:

Գյուղացու համար հաշիվ չկա, ապացուցում է Լենինը, վերադառ- նալ կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությանը, նրան շահա- վետ է բանվոր դասակարգի հետ միությունը պահպանել, վորովհետև վերջինս իր ճիշտ քաղաքականությամբ լիովին կարող է բավարարել գյուղացիությանը: Պրոլետարիատին ու գյուղացիությանը միացնող արձատսական, հիմնական շահերի ընդհանուր լինելը — կալվածատերերի և բուրժուազիայի դեմ միատեղ կռիվը, կապիտալիզմի վերականգնում թույլ չտալը — հնարավոր է դարձնում բանվորների և գյուղացիների հիմնավոր դաշինքի գոյությունը: Բայց այս համերաշխությունը հիմնա- կանում չի վերացնում դաշնակիցների տարաձայնությունները մասնավոր խնդիրների վերաբերմամբ. պրոլետարիատի և գյուղացիության «հարա- բերության ձևը» կարող է փոխվել, պրոլետարիատը այդ «փոխհարաբե- րությունների ձևը» կարող է ժամանակ առ ժամանակ վերաքննել:

Այսպես եր գրությունը՝ ինչպես հայտնի յե՝ 1921 թ. դարնանը՝ նոր տնտեսական քաղաքականությանը անցնելիս: Մեր կուսակցությունը «վորպես աչալուրջ քաղաքագետ» գիտեր «նկատի առնել աշխատավոր- ազգաբնակչության հոծ մասսաների կամքը», մեր կուսակցությունն ըմբռնեց, վոր «գյուղացիությունը դժգոհ է հարաբերությունների այն ձևից, վոր մեզանում սահմանվել էր» (Լենին) — և ընդառաջ գնաց գյուղացիության անհրաժեշտ զիջումներին: Լենինը հարցնում է՝ «Կա- րելի՞ յե այդ անել տեսականորեն, խոսքերով, կարելի՞ յե վորոշ աս- տիճանի վերականգնել առևտրի ազատությունը, մանր հողագործների համար կապիտալիզմի ազատությունը, դրանով իսկ չխախտելով պրո- ւետարիատի քաղաքական իշխանության արձատները: Արդյոք կարելի՞ յե այդ: Կարելի յե, վորովհետև ինչդիրը չափի մեջն է»:

Ամբողջ «խնդիրը զիջումների չափի մեջն է», ասում է Լենինը, զիջումները հնարավոր են այն դեպքում միայն, յեթե նրանցով չի խախտվում պրոլետարիատի իշխանությունը: «Վարվեցեք այնպես, ասում է այնուհետև Լենինը, վոր մաքսիմալ չափով բավարարվի միջակ գյուղացիությունը՝ չխախտելով պրոլետարիատի շահերը» (հ. XVIII, մ. I, 143, ընդգծ. մերն է): Թե ի՞նչ «չափով» կարող է թույլատրվել կապիտալիզմի այդ վերածնունդը, Լենինն ասում է բնա- տուրքի մասին արած զեկուցման մեջ, Մոսկվայի քարտուղարների ժողովում, IV/9, 1921 թ. (հ. XVIII, մ. I, 187)։

«Համաձայնությունը՝ սա մի շատ լայն հասկացողություն է, վոր իր մեջ է առնում մի ամբողջ շարք միջոցներ և ուղիներ», ասում է Լենինը X Համագումարում (հ. XVIII, մ. I, 137)։

Լենինի համար բանվորների և գյուղացիների համաձայնության շրջանակներում թույլատրելի յեն ներկայանում լուկ այն միջոցները, վորոնք չեն թուլացնում պրոլետարիատի իշխանությունը: Ռեկի Հա- մառուսական Կոնֆերենցիայում բնատուրքի մասին արած զեկուց- ման մեջ (1921 թ. V/26-ին) Լենինն ասում է՝ «Մեզ համար գլխավոր հարցը մնում է — և մի շարք յերկար տարիների ընթացքում անխու- սափելիորեն կմնա — այդ յերկու դասակարգերի միջև հարաբերություն- ների կանոնավոր սահմանումը, կանոնավոր՝ դասակարգերի վոչնչաց- ման տեսակետից: Խորհրդային իշխանության թշնամիները բանվոր դասակարգի և գյուղացիության համաձայնության ֆորմուլայի վրա շատ հաճախ են կանգ առնում և շատ հաճախ դա դործ են ածում մեր դեմ, վորովհետև ինքն ըստ ինքյան այդ ֆորմուլան բոլորովին անո- ըրոջ է: Բանվոր դասակարգի և գյուղացիության համաձայնության տակ ինչ ուզենաք կարելի յե հասկանալ: Յեթե ի նկատի չունենանք, վոր

բանվոր դասակարգի տեսակետից համաձայնությունն այն դեպքում և թույլատրելի հանդիսանում և կանոնավոր ու սկզբունքորեն հնարավոր և, յերբ նա պաշտպանում է բանվոր դասակարգի դիկտատուրան և հանդիսանում է այն միջոցներից մինը, վորն ուղղված է դասակարգերի վոչնչացման կողմը, ապա այդ բանվոր դասակարգի և գյուղացիութայան միջև կնքած համաձայնութայան ֆորմուլան, իհարկե այնպիսի ֆորմուլայի, վորը խորհրդային իշխանութայան թշնամիները և դիկտատուրայի թշնամի ներն իրենց տեսակետներում առաջ են բերում»:

Այստեղից պարզ է թե Լենինից վճռաբան հեռացել ընկերներից մի քանիսը, վորոնք վաղուց չէ, վոր առաջ եյին քաշում բանվոր դասակարգի կողմից գյուղացիութայան նկատմամբ արվող պերմանենտ զիջումների «տեսությունը» և խոսում եյին զիջումների սեղանի մասին, զիջումների, վորոնք և միայն անել գլխե պրոլետարիատը: Բանվոր դասակարգի զիջումները իր դաշնակից գյուղացիութայանը՝ թույլատրելի յեն լոկ այն դեպքում, յեթե նրանք չեն թուլացնում այլ ամբաստանում են պրոլետարիատի դիկտատուրան:

Թե ի՞նչպես եր նայում Լենինը գյուղացիներին արվող «զիջումներին», դա հիանալի յերևում է Ռիկի Լենինի կազմած ծրագրից, վոր ընդունված է կուսակցութայան VIII համագումարում 10 տարի առաջ: Մենք կարդում ենք այնտեղ. — «Միջակ գյուղացու վերաբերութայամբ Ռիկի քաղաքականությունը կայանում է նրան՝ աստիճանաբար և պլանաչափ՝ սոցիալիստական շինարարութայանը մասնակից անելու մեջ: Կուսակցությունը զնում է նրան (միջ. գյուղաց.) կուլակներից բաժանելու խնդիրը, քաշել նրան բանվոր դասակարգի կողմը՝ նրա կարիքներին ուշադիր վերաբերմունք ցույց տալով, պայքարելով նրա հետամնացութայան դեմ իդեական ազգեցութայան միջոցներով և վոչ բնավ ճնշիչ միջոցներով, ձգտելով բոլոր դեպքերում, յերբ շոշափված են նրա կենսական շահերը՝ գործնական համաձայնութայան գալ նրա հետ, նրան զիջումներ անել՝ սոցիալիստական վերաշինութայան կիրառման միջոցների վորոշման հարցում»:

Ի՞նչ է սովորեցնում մեզ կուսակցութայան ծրագիրը՝ գյուղացիներին զիջումներ անելու մասին: Հաշվի առնելով միջակ գյուղացիութայան կենսական շահերը, կուսակցությունը գործնական համաձայնութայան է գալիս նրա հետ, զիջումներ է անում նրան, սակայն այդ զիջումները վերաբերում են միայն «սոցիալիստական վերաշինութայան կիրառման միջոցների վորոշման», և վոչ ավելին: Կուսակցությունը կարող է և պետք է պայմանավորվի գյուղացիութայան հետ՝ իր ծրագիրը կյանքում անցկայանելու վերաբերմամբ,

բայց նա, կուսակցությունը՝ չի հրաժարվելու իր ծրագրային պահանջներից և վոչ մեկից, նա չի համաձայնվի պրոլետարական դիկտատուրայի դիրքերի հանձնմանը, նա վոչ վոքի թույլ չի տա ձեռք բարձրացնել իր սոցիալիստական քաղաքականութայան հիմքերի վրա:

Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել նաև պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում դասակարգային կռիվի բնույթի հարցի նկատմամբ աջ թեքման ունեցած վերաբերմունքի վրա: Այստեղ ել՝ ուղարկողները մոտ տեսնում ենք բաց է ի բաց նահանջ Լենինիզմից, Լենինի ուսմունքի աղավաղումն: Մեծ ուսուցչի մի քանի յեղույթներից՝ նրան ցույցադրում են իբրև քաղաքացիական հաշտութայան մի գաղափարախոս, յուրատեսակ «Burgfrieden»՝ պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում: Գործը իրենց պատկերացնում են այնպես, թե՛ կապիտալիզմից դեպի կոմունիզմի փոխանցման շրջանում մենք ունենք դասակարգային հակասությունների ավտոմատիկ մեղմացումն, — իբր թե սոցիալիզմին անցնելը կատարվում է հարթ, անսայթաք, առանց պայքարի ու ցնցումների: Սակայն անհրաժեշտ է հիշեցնել, վոր Լենինը բոլորովին այլ կերպ եր պատկերացնում պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում դասակարգային կռիվի մեխանիկան, — նա իրեն պատկերացնում եր այն վոչ իբրև խաղաղ, անվտանգ, հարթ զարգացման պրոցեսս: Տվյալ հարցի մասին Լենինի վերաբերմունքը պարզելու համար՝ հատկապես կարևոր են նրա ակնարկները «Պրոլետարիատի դիկտատուրայի մասին» (տպագրված Լենինյան III հավաքածուի մեջ): Այստեղ Լենինը խոսում է «պրոլետարիատի դիկտատուրայի՝ իբրև դասակարգային կռիվի նոր ձևի մասին» (ընդգծ. մերն է): «Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային կռիվի շարունակությունն է (ընդգծ. մերն է) նոր ձևերով»: Լենինը պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում դասակարգային կռիվի յերկու հիմնական խնդիրները (և համապատասխան յերկու նոր ձևերը) տարբերում է իրարից՝ 1) շահագործողների ընդդիմադրութայան ճնշումը (նաև այն ամեն շարժման, վոր յետ է տանում դեպի կապիտալիզմը և կապիտալիստական տրադիցիաները), 2) սիստեմատիկ ղեկավարող ներգործություն բոլոր (ընդգծումը Լենինինն է) վոչ պրոլետար աշխատավորների վրա (նույնպես կռիվ է, սակայն առանձին տեսակի և հաղթահարումն՝ վորոշ, ճիշտ է, բոլորովին այլ ընդդիմադրութայան, և բոլորովին այլ տեսակի հաղթահարումն):

Ուրեմն, յեթե Լենինը խոսում է՝ վոչ պրոլետարական աշխատավոր մասսայի վրա պրոլետարիատի սիստեմատիկ ղեկավարող ներգործութայան մասին, յեթե նա վորոշում է «պրոլետարիատի դիկտատու-

րան իբրև մի դեկավարու թյուն (ընդծումը Լենինինն է) պրոլետարիատի կողմից՝ աշխատավոր մասսաների և ամբողջ հասարակության վրա», այսպե՛ս «ներգործումը», այդ դեկավարությունն ել առանձին տեսակի դասակարգային կռիվ է: Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի դասակարգային կռիվի շարունակությունն է (ընդգծ. Լենինինն է) նոր ձևերով: Մ.յս է եյականը: Սա չեն հասկանում: Պրոլետարիատն իբրև ուրույն (ամեն տեղ ընդգծ. Լենինինն է) դասակարգ իր դասակարգային կռիվը մենակ է շարունակում մեր աջերը, յետ գլորվելով դեպի լենինյան ուսմունքի բացասումը (պրոլետարիատի դիկտատուրայի որոք՝ դասակարգային կռիվի շարունակության մասին):

Բուրժուազիան ուժեղացնում է իր ընդդիմադրությունը պրոլետարիատի հաղթությունից հետո, — վորովհետև նա փայփայում է՝ իշխանությունն ու հարստություններն իրեն վերադարձնելու միտքը. — և ըստ այնմ ել՝ դասակարգային կռիվը չի թուլանում, այլ սրվում է: «Պրոլետարիատի դիկտատուրան, ասում եր Լենինը, — համառ կռիվ է, արյունահեղ և անարյուն, բռնացող և խաղաղ, ռազմական և տնտեսական, գաղափարական և վարչական՝ ընդդեմ հին հասարակության ուժերի և տրադիցիաների»: (հ. XVII, 137):

Լենինը՝ շարունակ շեշտում է, վոր պրոլետարիատը իրականացնելով գյուղացու հետ դաշինքը, վարում է մի ուղեգիծ, վոր տանում է դեպի դասակարգային վոչնչացումը, և վոչ թե մանր արտադրողի պահպանումը, իսկ այդ ուղեգծի կիրառումը առանց համառ կռիվի անհնարին է: Լենինը II Ինտերնացիոնալի պարագլուխներին սխալը գտնում է նրանում, վոր «նրանք վախենում են խոստովանել, վոր դասակարգային կռիվը չի դադարում մինչև դասակարգերի վոչնչացվելը» (Լենին, հ. XVI, 249): Իսկ «մանր-բուրժուական դեմոկրատներին է հատուկ — զզվանք դեպի դասակարգային կռիվը, յերազել առանց նրան մի կերպ «յուրա դնալ», ձգտումն՝ հարթել և հաշտեցնել, բթացնել սուր անկյունները» (հ. XVI, 347): Իսկ Լենինը փոխանցման շրջանում կուսակցության ուղեգիծը վորոշում է հետևյալ խոսքերով. «Իսկակարգերը վոչնչացնել — կնշանակի վոչ միայն վոնտել կալվածատերերին և կապիտալիստներին — այդ մենք համեմատաբար հեղտությամբ արինք — դա կնշանակի նույնպես՝ վոչնչացնել մանր ապրանքարտադրողներին, իսկ նրանց չի կարելի վոնտել, նրանց չի կարելի ձնշել, նրանց հետ պետք է սովորել հաշտ ապրել, նրանց կարելի չէ (և պետք է) վերամշակել, վերադաստիարակել» (հ. XVII, 135 — 6):

Տվյալ ժամանակամիջոցում, վոր ապրում է մեր յերկիրը, լիովին արդարանում է Լենինի դրույքը՝ պրոլետարիատի դիկտատուրայի որոք դասակարգային կռիվի ուժեղացման մասին: Կապիտալիզմից դեպի կոմունիզմի փոխանցման շրջանում, դանազան մոմենտներում, ըստ հանգամանքների, դասակարգային կռիվը կարող է շատ կամ քիչ սուր բնույթ ունենալ: Ներկայումս, յերբ մենք ընդհուպ ձեռնարկել ենք արդյունաբերական և գյուղական տնտեսության սոցիալիստական վերաշինությունը, յերբ մենք ուժեղացրել ենք սոցիալիստական առաջընթացը քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի վրա, այդ տարրերի ընդդիմադրության ուժեղացումը՝ ընդդեմ պրոլետարական պետության արշավին — անխուսափելի յե: Մեր դասակարգային թշնամիների բարձրացած ակտիվությունը քաղաքում և գյուղում հայտնաբերվում է բազմաթիվ փաստերում և ծառայում է իբրև պարզ հերքումն մեր Միության մեջ դասակարգային պայքարի նսեմացման մասին աչերի առաջ քաշած թեղիսի: Դեռ ևս հուլիսյան պլենումն եր շեշտել հացամթերման մասին ընդունած բանաձևում, «վոր տնտեսության սոցիալիստական ձևերի դարգացումը նեպի հիմունքներով տանում է վոչ թե դեպի թուլացումն, այլ դեպի իմպերիալիստական տարրերի կողմից գործ դրած ընդդիմադրության ուժեղացումն»: Հետագայում, յերբ մենք խոշոր վորոշակի հաջողություններ կունենանք, վոչ միայն քաղաքի, այլ և գյուղի սոցիալիստական ռեկոնստրուկցիայի գործում, յերբ մենք գյուղատնտեսության արտադրության մի խոշոր մասն ևս կփոխադրենք կոլեկտիվիզացիայի բազան՝ մեքենայացման տեխնիկայի հիմունքներով, յերբ մենք վերջնական հարվածը կհասցնենք շահագործող դասակարգերի մնացորդներին, հարված, վորից նրանք այլևս վոտքի չեն կանգնի — կարելի չէ խոսել դասակարգային կռիվի վոչնչացման մասին: Իսկ առայժմ դեռ հեռու յե այդ:

Այն ընկերները, վորոնք պատկերացնում են Լենինին, իբրև դասակարգային հաշտության մի ինչ վոր առաքյալ, յերբեմն մեջ են բերում Լենինի՝ Մյասնիկովին գրած նամակի (1921 թ. ոգոստոսի սկիզբը) հայտնի տեղը, վորտեղ Լենինն ասում է՝ «Այո, ով չի հասկանում քաղաքացիական պատերազմի լոզունգի փոխարինումը՝ քաղաքացիական լաղաղության լոզունգով, նա ծիծաղելի յե, յեթե վոչ ավելին» (հ. XVIII, մ. I, 339): Բայց այստեղ Լենինը խոսում է վոչ թե դասակարգային կռիվի՝ դասակարգային հաշտությամբ փոխարինելու մասին, ինչպես կարծում են աջերը: Լենինն արձանագրում եր ով այն անկասկած փաստը, վոր քաղաքացիական կռվում շահագործողներին հաղթելուց հետո այս դասակարգային կռիվի սպեցիֆիկ ձևը:

քաղաքացիական կռիվը դադարում է մեր լոգոսնգը լինելուց: Հաղթական պրոլետարիատի դեմ քաղաքացիական կռիվ քարոզում են պրոլետարական դիկտատուրայի թշնամիները:

Մենք շահագրգռված չենք դասակարգային կռիվը քաղաքացիական պատերազմի ձևով տանելուն, վորովհետև պրոլետարիատի հաղթությունից հետո քաղաքացիական կռիվ նշանակում է զինված կռիվ պրոլետարական դիկտատուրայի դեմ, — հակահեղափոխություն: Մենք դասակարգային կռիվը վարում ենք այն ձևերով, վորոնք ապահովում են մեզ կապիտալիզմի վերջին արժանատիները պահելու, կապիտալիստական տարրերին հաղթահարելու գործը: «Պրոլետարիատի դասակարգային կռիվ ձևերը նրա դիկտատուրայի որոք չեն կարող առաջվանը լինել» — ասում է Լենինը: Սակայն դասակարգային պայքարը չի դադարում դասակարգային պայքար լինելուց՝ թեև ուղի նա չգրսևորվեր քաղաքացիական կռիվ ձևով:

Դասակարգային կռիվը մեղմացնելու գաղափարը մեր որերում սերտորեն կապված է, աջ թեքման համար բնորոշ, կուլակի մասին հնարած այն «թեորիայի» հետ, ըստ վորի՝ կուլակը իբր թե «ներաճում» է սոցիալիզմի մեջ: Սոսկում եր «կուլակային» կոոպերատիվային բների ներաճման մասին՝ դեցուք բանկերի միջոցով՝ սոցիալիստական տնտեսության սխտեմի մեջ, այն մասին, թե կուլակին և կուլակային կազմակերպություններին, բոլորը մեկ է, ուրիշ ճար չկա, քանի վոր նրանց զարգացման շրջանակները մեր յերկրում վաղորոք սահմանափակված են պրոլետարական դիկտատուրայի ամբողջ կառուցվածքով: * Ըստ յերևույթին յենթադրվում է թե կուլակը պատրաստ է հաշտվել խորհրդային կարգի՝ իրեն նախորոք տրված շրջանակների հետ, վոր նա չի փորձի նրանց քանդել, վոր նա իրեն կնդունի պրոլետարական հեղափոխությանը հաղթված և կհրաժարվի նրա դեմ կռվելուց: Այստեղից են ընկ. Յրուսկինի լոգոսնգները թե՛ «մենք չպետք է խանգարենք կուլակային տնտեսությունների արտադրությունը», այսօրինքն չխանգարել կուլակին զարգացնել իր շահագործական տնտեսությունը: Այստեղից էլ բոլոր աշերին հատուկ այն կուրսն է, թե պետք է գյուղում կուլակային տարիքին ազատ ընթացք տալ, մեր գյուղական

* Տե՛ս, որինալ՝ А. Айхенвальд — Советская экономика. Экономика и экономическая политика СССР (Ն. Բուխարինի առաջաբանով). — «Մենք պետք է — ասում է նա — նոր հունի մեջ գցենք և ոգտագործենք... հարստացման ձգտումը, իբրև սոցիալիստական շինարարության հիմք և շարժիչ» (եջ 275). «մենք պետք է սոցիալիստականորեն վերաշինենք մեր ներքին կապիտալիստական փշրանքները» (եջ 278): Այստեղ կուլակության դեմ պայքարելու մասին վոչ մի խոսք չի ապավ — պատկերացված է կուլակի՝ սոցիալիզմի մեջ ներաճման իդիլիան:

տնտեսության կապիտալիստական տարրերին չսահմանափակել՝ կուլակների շահագործական ձգտումներին, տենդենցներին դեմ կռվելուց հրաժարվել: Իսկ յեթե կուլակը հրաժարվում է պրոլետարիատի դեմ կռվելուց, ապա ուրեմն «դեպի սոցիալիզմ» տանող ամբողջ «ճանապարհը» ընթանում է «դասակարգային հարմոնիայի» նշանի տակ, դասակարգային պայքարը լուծվում է արդեն մեր զարգացման ներկա շրջանում:

Չի կարելի դրժել այդ կառուցվածքի վորոշ ներդաշնակությունը. ըստ ամբողջ ցաֆլե այն է վոր նա հիմնովին տարբերվում է մարքսիզմից և լենինիզմից և բնավ փաստերին չի համապատասխանում: Իրականությունը մեզ ցույց չե տալիս, վոր կուլակը պատրաստ կլիներ աշխատակցելու բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիության հետ՝ սոցիալիստական շինարարության գործում, պատրաստ կլիներ «խուզվել» սոցիալիստական պետության համար: Ընդհակառակը՝ մենք տեսնում ենք, վոր կուլակը անընդհատ ուժեղացնում է իր ընդդիմադրությունը մեր քաղաքականության հանդեպ: Կուլակը յերբեք ցանկություն չի հայտնում ոգնելու մեզ սոցիալիստական շինարարության գործում: Ընդհակառակը՝ ինչքան ուժ ու հնար ունի, նա փնտսում է մեզ, — կուլակն արեց ամեն ինչ, ինչ կարող եր՝ վիժեցնելու համար 1927/28 թ. հացամթերման կամպանիան: Այդ նա յե, վոր կռվում է մեր դեմ՝ միջակի վրա ազդեցություն ձեռք բերելու համար, նա յե, վոր ուժեղացնում է գյուղում տեռորը՝ խորհրդային իշխանության մարտիկներին դեմ: Քանի դեռ պրոլետարական հեղափոխությունը մի քանի առաջավոր կապիտալիստական յերկրներում չի հաղթահարել, քանի դեռ մենք յերաշխիք չունենք ռեստավրացիայի (ցարական կապիտալիստական իշխանության վերականգման) դեմ, մինչև այդ ժամանակ կուլակը գյուղում և նեպմանը քաղաքում չեն կարող հրաժարվել կապիտալիզմի վերականգման հույսից, մինչև այդ ժամանակ պայքարը մեր դեմ չեն դադարեցնի:

Կուսակցության XV համագումարն իր բանաձևում ասում եր այն մասին, վոր անհրաժեշտ է կիրառել «ավելի ևս վճռական վանդակական քաղաքակառուցություն, դուրս մղել մասնավոր կապիտալիստական տնտեսության տարրերը, վորոնք համեմատաբար աճել են, թեպետ ավելի փոքր չափով քան տնտեսության սոցիալիստական հատվածը», «կապիտալիստական տարրերի վրա հետագայում տնտեսական արշավանք» գործել: Բանաձևը նշում է «դասակարգային հակասությունների մասնակի աճման անխուսափելիությունը: Քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական շերտերը, վորոնք կաշտում են խորհրդային և տնտեսական ապարատի այս կամ այն բյուրոկրատական տար-

ըրերին, ձգտում են ուժեղացնել իրենց ընդդիմադրությունը՝ բանվոր դասակարգի գրոհի դեմ, փորձում են պրոլետարական դիկտատուրային թշնամական ազդեցություն գործել ծառայողների վորոշ խավերի, տնայնագործների ու արհեստավորների յետամնաց խավերի, գյուղացիների և բանվորների վրա: Այդ ազդեցությունը յերևան և գալիս նաև կուլտուրական-քաղաքական և իդեոլոգիական ասպարիզում:

Կուսակցության քաղաքականության հանդեպ նույն դիրքն է քունում աջ թեքումը նաև այն բանի համար, վոր կուսակցությունը ընդլայնում է գյուղի սոցիալիստական հատվածը — կոլտնտեսությունները և խորհրդային տնտեսությունները: Աջերը թերագնահատում են կապիտալիստական տարրերի ընդդիմադրությունը պրոլետարիատին, նրանք չեն տեսնում կուլակային վտանգը, նրանք յենթադրում են, վոր կուլակն ել և «ներածում» սոցիալիզմի մեջ: Այստեղից և՛ գյուղում սոցիալիստական հատվածի դերը չհասկանալը, գյուղում սոցիալիզմի կառուցման անըմբռնումը: Այստեղից ել առաջ է գալիս այն առարկությունը վոր անում են աջերը՝ կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների լայնատարած շինարարության դեմ: Իսկապես, յեթե ամբողջ գյուղը — կուլակն ել հետը — շարժվում է դեպի սոցիալիզմ՝ սոցիալիստական քաղաքին հետևելով, յեթե գյուղի վոչ կապիտալիստական զարգացումը ավտոմատիկ կերպով ասպհովված է մեզ մոտ, — ապա միանգամայն ավելորդ են կուսակցության ձեռնարկումները, վորոնք ուղղված են մեր գյուղատնտեսության մեջ սոցիալիստական հատվածի ուժեղացման կողմը:

Աջերը ցանկանում են կապիտալիզմից սոցիալիզմի փոխանցման շրջանում հեռանալ դասակարգային կռիվից (յերբեմն այդ հեռացումը փորձում են արդարացնել՝ Մարքսին դիմելով): Իրա հետ միաժամանակ՝ սոցիալիստական շինարարության դժվարությունները նրանք ցանկանում են բացատրել մեր ղեկավարող որգանների սխալներով, պլանային ղեկավարության բացերով: Սակայն իր ժամանակին ընկ. Բուխարինը՝ տրոցկիստների հետ բանակուլի ժամանակ ցույց տվեց, վոր չի կարելի գերագնահատել պլանային սկզբունքը և չտեսնել տարերայնության խիստ զգալի չափով ելեմենտներ, և վոր ավելի քան յերկու տասնյակ միլիոն գյուղացիական տնտեսության առկայությամբ մեր պլանավորումը բավականին հարաբերական է (տես ընկ. Բուխարինի ժողովածուն՝ «Տրոցկիզմի հարցի շուրջը»): Միայն և ուրեմն 1928 թվի (սկզբում) հացամթերման ձգնաժամի մեջ տեսնել, ինչպես տրամադիր են տեսնել աջերը, առավելապես պլանային, տնտեսական ղեկավարության սխալներ — դա կնշանակի աջից բաց թողնել յերկրի դասակարգային

հակասությունների սրումը, կուլակության յելույթը խորհրդային իշխանության դեմ, մի յելույթ, վոր հացամթերման կամպանիայի անհաջողությունների հիմնական պատճառներից մեկը դարձավ:

Աջերի և նրանց պաշտպան հաշտողականների հիմնական սխալը կայանում է այն համոզման մեջ թե կուլակի ձեռքերն արձակելով, կուլակային տնտեսությունը չսահմանափակելով, մենք մեր հացային դժվարությունների լուծման կհասնենք: Աջերը կարծում են, վոր յեթե կուսակցությունը հրաժարվի կուլակի շահադիտական ձգտումների սահմանափակման քաղաքականությունից, նրան ազատություն տա, ապա դրանով իսկ մենք կլուծենք հացահատիկային պրոբլեմը: Սակայն աջերը աչքաթող են անում այն, վոր կուլակի հարստացումը կարող է տեղի ունենալ լոկ ի հաշիվ չքավորության և բատրակների, և, հետևապես, կուլակային տնտեսության տարերքին ազատ ընթացք տալով՝ մենք դրանով կորցրած կլինենք գյուղական չքավորությունը, ուժեղացրած կլինենք միջակի տատանումները մեր յերկրում, դրա հետ միասին կբարձրանան կապիտալիստական տարրերի շահները, կվատթարանա քաղաքական դրությունը: Իդուր են յենթադրում աջերը թե կուլակին կապանքներից արձակելով՝ կհեշտանան հացային դժվարությունները. — չե վոր մեկ է, կուլակը հաց չի տալիս՝ քանի դեռ խորհրդային մարմինների կողմից հացամթերման քաղաքականության և հացի շուկայի կանոնավորման այսպիսի քաղաքականություն է տարվում: Իսկ հրաժարվել առևտրի պետական կանոնավորման քաղաքականությունից կուսակցությունը չի կարող, վորովհետև այդ կխախտեր պրոլետարիատի դիկտատուրան:

Հաշտողականները դեռ բացելուց չեն համերաշխում աջերի հետ, սակայն դիպլոմատիորեն նրանց պաշտպանում են: Վերջին ժամանակներս ավելի ակտիվ դարձող հաշտողականները ավելի յեն գլորվում դեպի աջերը: Մինչդեռ անհրաժեշտ է հասկանալ վոր կա միայն յերկու ուղեգիծ, վորոնցից մեկն ու մեկը պետք է ընտրել: Մեկը — կուսակցության ուղեգիծը, Կենտրոնական կոմիտեյի ուղեգիծն է, վոր նկատի ունի կապիտալիստական տարրերի սահմանափակումը, արշավանք կուլակի դեմ, ամենատեսակ ոգնություն անհատական չքավոր-միջակային տնտեսություններին, խորհրդային և կոլլեկտիվ տնտեսությունների ամենալայն զարգացումն, կոոպերացիայի և կոնտրակտացիայի զարգացումն: Մյուս ուղեգիծը — դա ընկ. Ֆրոնմկինի ուղեգիծն է — նրա բռնած կուրսը՝ գյուղում կապիտալիստական տարրերին ազատ ընթացք տալը, կուլակի վրա արշավելուց հրաժարվելը, գյուղական տնտեսության սոցիալիստական հատվածի կծկումն, պետության բոլոր

ուժերի ու բոլոր միջոցների հանձնումը անհատական գյուղացիական տնտեսության ոգնություն գործին՝ սրա մեջ նաև կուլակային տնտեսության: Այստեղ անհրաժեշտ է ընտրել: Կամ այս, կամ այն: Վոչ մի յերրորդ ուղեգիծ չկա և չի կարող լինել:

Վերևում մենք փորձեցինք տալ թե աջերը և եսպես նրանց ձրգտող հաշտվողականները ինչպիսի հայացքներ ունեն կուսակցության քաղաքականության հիմնական խնդիրների, մեր յերկրի դասակարգային ուժերի դասավորման մասին: Մենք համոզվեցինք, վոր նրանք ունեն մի առանձնահատուկ պլատֆորմ, սակայն դեռ սաղմնային վիճակում, վոր պարզապես հակադրված է կուսակցության այն վորոշումներին, վոր արտահայտված են XV համագումարի բանաձևերում և Կենտկոմի հետագա պլենումներում: Կուսակցության քաղաքականության բոլոր հիմնական խնդիրներում աջերը ներկայումս համաձայն չեն կուսակցական դեկավարության քաղաքական ուղեգծին և իրենց հատուկ վորոշումներն են առաջարկում: Իսկ հաշտվողականները փորձում են դիմակավորել իրենց տարածայնությունը կուսակցության ուղեգծի շուրջը, իրենց սկզբունքային հարակցությունը աջերի հետ՝ հայտնելով, վոր նրանք համաձայն են XV համագումարի և Կենտկոմի պլենումների վորոշումներին, վոր նրանք կուսակցության հիմնական ուղեգծի դեմ չեն առարկում, և վոր նրանք համաձայն չեն միայն այն բանում թե այդ ուղեգիծը կյանքում ինչ ձևով է կիրառվում: Մինչդեռ այդ ընկերները վոչ մի գործնական առաջարկներ չեն անում, վոր ոգնեյին կուսակցությանը իր դժվարին աշխատանքի մեջ, և այսպիսով մենք նրանցից լսում ենք կուսակցության քաղաքականության լոկ քննադատություն և վոչ թե ոգնություն՝ մեր դժվարին աշխատանքում:

Վորքան սա նման է այն բանին, վոր ընկ. Զինովյեֆը ասում էր XIV համագումարում՝ իր լրացուցիչ զեկուցման մեջ. Կենտկոմի ուղեգծի դեմ նա (Զինովյեֆը) չի առարկում, սակայն նա գտնում է, վոր Կենտրոնական Կոմիտեն այդ ուղեգծի կիրառման մեջ չի ունեցել «ամուր քաղաքականություն», այլ գործ է դրել կազմակերպչական ճնշում:

Հայտնի է վոր յուրաքանչյուր Ֆրակցիոնական խմբավորումն՝ կուսակցության ուղեգծի դեմ իր պայքարն սկսել է՝ կուսակցության հիմնական վորոշումներին համաձայնվելու «ծխի պատվարի» տակ թաղնվելով: Մեր կուսակցության պատմության մեջ չի յեղել այնպիսի Ֆրակցիա, վորոնց ներկայացուցիչները համաձայնվելիս լինելին այն բանում, վոր իրենք Ֆրակցիոններն են: Ինչպես հայտնի

յե՛ թե տրոցկիստները 1923 թ. և թե 1925 թ. «Լենինգրադյան» ուպոզիցիան համառորեն բացասում էյին իրենց դիրքի Ֆրակցիոնականության բոլոր բացառկարա նշանները: Այստեղ ևս պատմությունը կրկնվում է.

Das ist eine alte Geschichte

Doch bleibt sie immer neu. (Հայնե)

(Սա հին պատմություն է, բայց միշտ նոր կմեա):

III. ԱՋԵՐԻ ՆԱՀԱՆՁԸ ԲՈՅՆՎԵՐՎԻՉՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՑ

Հենց վերջին ժամանակներս, յերբ թե իդեապես և թե կազմակերպչորեն ձևակերպվում է աջ թեքումը, յերբ նրա դիրքերին ավելի յեն մոտենում իրենց տատանումների մեջ նաև հաշտվողականները, մենք արդեն կարող ենք արձանագրել բոյլը կեղմի կազմակերպչական սկզբունքներից ծայր առնող տարաձայնությունների փաստը: Այստեղ ել մեր որերի այ ուղղորտները գնում են այն ֆրակցիաների ու խմբավորումների հետքով, վորոնք տեղի ունեյին մեր կուսակցության պատմության անցյալ շրջաններում: Այժմ ել, ինչպես առաջ, փոքրիկ տարաձայնություններից բանում են մեծերը, սկզբում աննշան, ժամանակին չուղղված սխալներից բանում են խոշոր սխալներ: Քաղաքական տարաձայնություններին միանում են և կազմակերպչական տարաձայնությունները: Կուսակցության և կուսակցական ղեկավարության դեմ նորից առաջ է բերվում հին մեղադրանքը, վոր մեզ շատ լավ ծանոթ է բոլոր հին ոպպոզիցիաներից՝ սկսած 1918 թվի ձախ կոմունիստների ֆրակցիայից և վերջացրած 1923 — 27 թ.թ. տրոցկիստական ոպպոզիցիայով: Արխիվից դուրս են քաշվում կուսակցությանը հայտնի՝ տրոցկիստական ոպպոզիցիայի հին նեյնիմները. մեր որերի աջերը Կենտկոմի դեմ պայքարելու համար զենքեր են դուրս քաշում տրոցկիստական արսենալից, նրանց նոր կեղևի մեջ լսվում են տրոցկիզմի մաշված մտքերը: Յեվ իսկապես, ինչպես կարելի յե այլ կերպ հասկանալ այն պնդումը, թե՛ կուսակցության կազմակերպչական պրակտիկան սուր կերպով տարբերվում է նրա պաշտոնական հայտարարություններից, ինքնաքննադատության մասին արած իր կոչից: Աջերը պնդում են, վոր մեր կուսակցության մեջ բյուրոկրատիզացիայի տարրերն աճել են, վոր մենք վոչ մի տեղ չենք տեսել իսկապես ընտրված նահանգական քարտուղար, վոր կուսակցական կյանքի հիմնական խնդիրները գաղտնի յեն պահվում, վոր ամբողջ կուսակցությունը քննում է զրանք տնավարի — մի-յերկու-յերեք հոգով: Մեզ ասում են թե կուսակցության անդամների մեջ ել է առաջ յեկել կրկնակի ուղեգրի: Հոգու համար մի հաշիվ, ուրիշների համար՝ ուրիշ հաշիվ: Ժողովներին հաճախելը, միաձայն քվեարկելը, պաշտոնական բանաձևի ընդունումը դառնում է մի ուսուցիչ, վոր անհրաժեշտ է կուսակցական ծիսակատարության համար: Բյուրոկրատիզմի դեմ կռիվելու փոխարեն մենք այդ

բյուրոկրատիզմը զարգացնում ենք: Մասնանիշ են անում՝ մի շարք ընկերներին պրովինցիա ուղարկելը, կուսակցականներին իրենց տարրական, կանոնադրություններ տրված, իրավունքներից զրկելը:

Հարց է տրվում, ուրիշ ել ի՞նչ նոր բան են ասում աջերը, վոր ասած չլինեյին Տրոցկին ու տրոցկիստները: Յեթե աջերը վոչ մի նոր բան հնարել չեն կարող, կամ յեթե ստիպվում են իրենց փաստարանությունները փոխ առնել տրոցկիստական պատճառներից, այդ մեկն արդեն ապացուցում է, թե ինչպիսի վտանգալից խաղ են սկսել ուղղորտները, թե դեպի վո՞ր կողմն է ուղղված նրանց պատճառը: Յեվ շատ խղճուկ է նրանց առարկությունը, թե վոչ վոք իրենց չի մղի ֆրակցիոնական պայքարի ճանապարհը: Չե՛ վոր գործնականում նման հայտարարությունները, վորոնց մասին արդեն հիշատակեցինք, իսկական իմաստով ֆրակցիոն պայքարի սկիզբն են հանդիսանում:

Ինչո՞վ է տարբերվում տրոցկիստական դրույքից կազմակերպչական խնդրում այն հայտարարությունը, թե Մոսկվայի կազմակերպությունից հանված է հին կուսակցական բանվորների մի խումբ: Ո՞ւմ հայտնի չե, վոր վերջիններս «հանվել» էյին իրենց մասսաների ձեռքով, վորոնք իրավացի կերպով միաբերան պահանջում էյին իրենց ղեկավարներից կուսակցության հիմնական ուղեգրին վերաբերող հարցերում՝ պարզորոշություն: Ի՞նչ է նշանակում այն հայտարարությունը, թե բՆԻՄներում վոչ մի հիվանդագին հարց չի յենթարկվում լուրջ քննության: Ո՞ւմնից էյինք մենք լսում խոսքեր այն մասին, վոր Կենտկոմի մեջ կոլլեկտիվ ղեկավարությունը փաստորեն վոչնչացված է, այն մասին, վոր «հատանելու» կուրս է ընդունված, վոր առանձին ընկերների դեմ, նրանց վոչնչացնելու նպատակով, պատեքազմ է հայտարարված: Այս բոլորը մեզ համար շատ հասկանալի տրոցկիզմի լեյդ-մոտիվներն են: Այսպես է «աջ թեքումը ուղղակի գողվում ձախի հետ»՝ կուսակցության մեջ բյուրոկրատիզմի աճման մասին սաղարանները արդարացնելու համար մատնացույց են անում Կենտրոնական Կոմիտեյի հուլիսյան դիմումը՝ ինքնաքննադատության մասին: Իսկ չե վոր հենց այդ փաստաթուղթն է ապացուցում, վոր կուսակցական ղեկավարությունը պայքարում է բյուրոկրատիզմի տարրերի դեմ, վոր բոյություն ունեն կուսակցության կազմակերպությունների մեջ, իսկ մեզ ուզում են հավատացնել, թե նա ինքն է բյուրոկրատիզմին նպաստում:

Այստեղ արժե հիշատակել, վոր 1918 թվին կուսակցության VII համագումարին ներկայացրած՝ «ձախ» կոմունիստների թեզիսների մեջ ևս մենք կարգում էյինք, վոր «կուսակցության ղեկավարող

հիմնարկների քաղաքականությունը տատանման կոմպրոմիսների քաղաքականություն էր», վոր «նման քաղաքականություն սոցիալական հիմունքը յեղել է կուսակցության վերասերման պրոցեսը՝ զուտ պրոլետարականից դառնալով համաժողովուրդական», և վոր «կուսակցությունը՝ փոխանակ դեպի իրեն բարձրացնելու գլուղացիական մասսաները, ինքն է իջել մինչև նրանց մակերևույթը, հեղափոխության ավանգարդից դարձել սերեղնյակ»։ Պետք է 1929 թվին գնալ կրկնել Բրեստի շրջանի սխալները — միայն ծովելով հակառակ կողմը։

Տրոցկիստների և նրանց՝ Լենինգրադի ու պոլոզիցիայի նախկին կողմնակիցների հետքով են գնում ընկերները նաև մեր կուսակցության առանձին ղեկավարների անձնավորության դեմ իրենց արած հարձակումները մեջ, — այստեղ վոչ մի նոր բան չկա, այս ամենը կուսակցությունը լսել է XV համագումարից առաջ և այդ հարձակումների պատշաճ գնահատականը տվել։

Կուսակցության ղեկավարության քաղաքական և կազմակերպչական ուղեգծի դեմ աջերի հիստորիկ կանչերի առթիվ հիշենք թե ինչ էր ասում ընկ. Բուխարին իր Լենինգրադի կազմակերպչության ակտիվին արած ղեկուցման մեջ 1926 թ. III/28-ին՝ Կենտր. Կոմիտեյի և ԿՎՀ-ի հուլիսյան պլենումի արդյունքների մասին։

«Յերբ մեզ քննադատում են և ասում — «այստեղ այս չի արված, այնտեղ այն չի արված» և այնպես չեն քննադատում վորպեսզի ոգնած լինեն մեր սխալները ուղղելուն, այլ նրա համար վոր իրենց համար Ֆրակցիոնական կապիտալ վաստակեն՝ հսկայական չափազանցություններով, բամբասանքներով մեր կուսակցության դեմ, խորհրդային իշխանության հասցեյին, յերբ մեր պետապարատի և կուսապարատի առանձին սխալներն ու առանձին հիվանդությունները հազար անգամ բազմապատկում են, սրանից շինում են Ֆրակցիոն պլատֆորմ և չեն ոգնում վերացնելու մեր իսկական դժվարությունները, այլ փորձում են իրենց համար Ֆրակցիոնական դրամագլուխ շահել, — մենք նման քննադատություն դեմ կուլի կելնենք, նման ու պոլոզիցիայի դեմ կուլի կսկսենք, վորովհետև դա մեր պակասությունները վերացնելու գործնական ոգնություն չէ, այլ մեր կուսակցության միասնականությունը խախտելու սխտեմատիկ կրկնվող փորձեր՝ Ֆրակցիաների և խմբավորումների միջոցով... Դա պրոլետարական դիկտատուրայի ուղեգծից ցած սողալ է նշանակում, թեկուզ և վոչ դիտակցված» (Ն. Բուխարին. «Կուսակցությունը և ու պոլոզիցիոն բլոկը», 81—2)։

Իհարկե, մեր աջերն ու հաշտվողականները դեռ ևս այն դիրքում չեն գտնվում, վորպիսին բռնել էյին տրոցկիստներն ու նրանց

քարեկամները 1926 թվին, — սակայն միջկուսակցական պայքարն իր տրամաբանությունն ունի — մեր կուսակցության մեջ նախկին Ֆրակցիաների պատմությունը ցույց է տալիս թե դեպի ուր է աճում ներկայումս ձևավորման պրոցեսսի մեջ դանվող ներկուսակցական խմբավորումը, ինչ է նրա անխուսափելի ապագան՝ յեթե ընկերներն իր ժամանակին ուշքի չգան և չկանգնեն կուսակցական դիրքերի վրա։

Վորևե ներկուսակցական հոսանքի Ֆրակցիոնական առանձնացումը յենթադրում է վոր պետք է սահմանվի վոչ միայն առանձին՝ կուսակցությունից տարբեր քաղաքական պլատֆորմ, այլ և առանձին դիսցիպլին։ Լենինը «Ֆրակցիոնականության նշանները» տեսնում է «այն խմբակների առաջացման մեջ, վորոնք ունեն առանձին պլատֆորմ և ձգտում վորոչ չափով պարփակվելու և իր խմբակային դիսցիպլինը ստեղծելու» (X համագումարի ռեզոլյուցիան կուսակցության միասնականության մասին)։ Ներկայումս մենք ականատես ենք չինում այն յնրևույթին, վոր այն ընկերները, վորոնք հեռանում են կուսակցական ուղեգծից դեպի աջ թեքումը — ընդհանուր կուսակցական դիսցիպլինային վորոչ ազատ վերաբերմունքի նշաններ են ցուցադրում, — չեն ցանկանում տանել կուսակցության կողմից իրենց հանձնած աշխատանքը, մնալ այն դիրքերում, վորտեղ նրանց դրել է կուսակցությունը։ Պարզ է, վոր կուսակցությունը պետք է սողմի մեջ խեղդի այս «Ֆրակցիոնական նշանները», — կուսակցական դիսցիպլինը պետք է պարտադիր լինի կուսակցության բոլոր անդամների համար՝ անկախ այն դիրքից, վոր նրանք զբաղվում են կուսակցության մեջ. — մեր կուսակցության մեջ չկան և չեն կարող չինել ազնվականներ, չի կարող յերկու դիսցիպլին լինել՝ մինը շարքային կուսակցականի, իսկ մյուսը «վոժդի» (ղեկավարի) համար։ Իր ժամանակին կուսակցությունը այդ ճշմարտությունը լիովին պարզել է 1926 — 27 թվականների ու պոլոզիցիոն բլոկի լիդերներին։ Այս մասին աշխատում ու ջանում էյին նաև այն ընկերները, վորոնք այս րոպեյիս կարծես թե վոտք են դնում Ֆրակցիոնականության վոտնահարված ճանապարհը։ Կուսակցությունն այժմ էլ, ինչպես և առաջ, չի հանդուրժի վոչ վոքի կողմից «աղայական անարխիզմի» ցուցադրման։

Այստեղ հարկավոր է հիշատակել ընկ. Տոմսկու դիմումը ու պոլոզիցիայի լիդերներին՝ XIV համագումարում. «Յեկեք պայմանավորվենք, վոր յերբ խոսում են դիսցիպլինի մասին, թող այդ դիսցիպլինան բոլորի համար մեկ լինի»։ Վոչ թե յերկու դիսցիպլին — մեկը ներքին գործածության համար, իսկ մյուսը՝ քարտերով, լայն գործա-

ծուծյան համար, — այլ մեկ»: Տոմսկին դիմելով ուսուցիչներին ասում էր. «Ասացե՛ք, ի՞նչ եք առաջարկում դուք: Վոչինչ, բացի հին, բոլորին հայտնի լողունները. — կարծիքների չազատություն, դիսկուսիայի ազատություն, յերանգների ազատություն դուք չեք առաջարկելու: Իսկ այդ մենք լենինյան կուսակցության մեջ անվանում ենք քայքայում»: Ընկ. Տոմսկին հանդիմանում էր ուսուցիչների լիզերներին այն բանում, վոր նրանք «մոռացել են Իլլիչի խոսքերը. նա ասում էր՝ յեթե դու աշխատում ես կոլլեկտիվի մեջ, ապա նրա պատասխանատվությունը տար (ընդգծ. մերն է): Յեվ վոչ թե՛ աշխատելով համագումարի մինչև վերջին որը և վերջը սկսում ես գոռալ, թե քեզ ճնշել են»:

Նորից (ինչպես և այն ժամանակ, յերբ կուսակցությունը ուսուցիչներին բռնեց ղեմ պայքար եր մղում) զանգատներ են լսվում այն մասին թե ղեկավար կուսակցական կենտրոնները առանձին ընկերներին կուսակցական ղեկավարությունից հատանելու գիծն են տանում, թե կուսակցությունը զբաղված է նրանց «մշակելով»: Այս հայտարարությունները ցնորալից լինելը պարզ յերևում է նրանից, վոր կուսակցական ղեկավարությունն ամեն ջանք գործ է դնում, վորպեսզի բոլոր ընկերները աշխատեն այն դիրքերում, վորտեղ նրանք գտնվում են, վորպեսզի նրանք բոլորը կատարեն կուսակցության կողմից նրանց հանձնված գործը. ղեկավարությունը «հատանման» գծին բացարձակ հակառակ գիծ է բռնած: «Հատանման» մասին, ինչպես հայտնի յե, չեյին դադարում խոսելուց Տրոցկին և իր բարեկամները 1926—27 թվերին: Մինչդեռ ուսուցիչներին բռնելի լիզերներին ևս վոչ վոք չէ հատանել, ընդհակառակն, կուսակցությունը մինչև վերջին հնարավորությունը պահպանում էր նրանց վոչ միայն իր շարքերում այլ և կուսակցական ղեկավար կենտրոններում:

«Միքիլ դեմոկրատիան միշտ զարգարում է ուսուցիչայի սանդիկին — ասում էր ընկ. Տոմսկին XIV համագումարում կուսակցության մեջ բյուրոկրատական ճնշման մասին՝ ղինովյեվականների խոսակցությունների առթիվ: Սրա մեջ է յուրաքանչյուր ուսուցիչայի լոգիկան: Տեսե՛ք, ընկերներ, թե ինչպես է դա ձանձրալի կերպով կրկնվում»: Յեվ «վորպեսզի վոչ մի կասկած չլինի», ընկ. Տոմսկին հայտարարում էր, թե ինքը «մնում է այս հարցում հին դիրքերում» — «յերանգների», «դիսկուսիաների», «խմբավորումների» հարցերում: կուսակցության գլխավոր քարտուղարի ղեմ լենինգրադցիների հարձակումներին ընկ. Տոմսկին պատասխանում էր. — «ասացե՛ք, խնդրե՛մ, այդ ի՞նչ սոցիալական, եկոնոմիական, քաղաքա-

կան և այլն պայմաններ են ստեղծել այնպիսի դրուծյուն, վոր կի քարտուղար Ստալինի շուրջը կազմակերպվել է կի անդամների մեծամասնություն, իսկ ընկ. Կամենսկի և Զինովյեի շուրջը... գոյացել է փոքրամասնություն և դատարկություն... ինչպե՛ս է պատահել այդ: Պատահել է այդ իրական կոլլեկտիվ ղեկավարման հիման վրա, թե Պոլիտ-Բյուրոյի յուրաքանչյուր անդամի և թե ամենքի վերաբերմամբ հավասար և միատեսակ վերաբերմունքի հիման վրա: Ահա թե ինչու են բանը: Յեվ բացի այդ. «յեկեք վերջ դնե՛ք այդ ասեկոսներին՝ իբր թե Զինովյեվին և Կամենսկին ուղում են վոչնչացնել, ճնշել, հեռացնել»:

Ճշմարիտ է, ուսուցիչայի լիզերները վերջ ի վերջո իրանք իրանց հեռացրին ղեկավարումից: կուսակցությունը լոկ հեռանց ընկ. Բուխարին այդ խորհրդին — «Յեթե նրանք չեն ցանկանա ոգնել կուսակցության ղեկավարման գործում, մենք առանց նրանց կղեկավարենք կուսակցությունը» (Ն. Բուխարին, կուսակցությունն է ուսուցիչներին բռնել. էջ 78): Իսկ մինչ այդ կուսակցությունը պայքարում էր, պայքարում է, և պայքարելու յե կուսակցության յուրաքանչյուր դասակարգ անդամի դեմ, նրան հանձնած դիրքը թափուր թողնելու դեմ:

Մի գուցե մի քանի ընկերներ մտածում են այնպես, ինչպես վոր դատում էր ուսուցիչային 1926 թվին, յերբ նրա լիզերները դեռ ևս կի շարքերում էյին գտնվում բայց չեյին ոգնում կուսակցությանը՝ աշխատանքներում. — ներկա կենտրոնական կոմիտեն առանց նրանց՝ առանց մեծանուն գերմարդկանց, անկարող կլինի ղեկավարել կուսակցությունը, վոր նա կխեղդվի ուժից վեր աշխատանքից: Սակայն 1926 թ. ուսուցիչային սխալվեց, կսխալվեն նաև նրանք, վորոնք կցանկանան կրկնել նրա տակտիկան 1929 թվին: Չափազանց տարորինակ է, վոր «հատանման» կամ կուսակցության ղեկավարության ջլասման քաղաքականության գործադրումն են ուղում տեսնել նույն իսկ պրոֆմիությունների VIII համագումարից հետո կուսակցության ձեռք առած միջոցների մեջ պրոֆեսիոնալ շարժումը կուսակցական լավագույն ղեկավարման յենթարկելու հարցում: Շատ տեղին է հիշել այստեղ, թե ինչ էր գրում Լենինը պրոֆեսիոնալ միությունների «վորոշ» (ընդգծումը Լենինինն է) ղեկավարող հատկանշանների վերաբերմամբ, վորոշ համքարական անձկության վերաբերմամբ, դեպի ապոլիտիցիզմը ունեցած վորոշ համքարական հակման վերաբերմամբ, և այլն: «Պրոֆեսիոնալ միությունների վորոշ ղեկավարողականությունը հիշած իմաստով անխուսափելի յե պրոլետարիատի դիկտատուրիայի ժամանակ»: (Հ. XVII, էջ 141, ընդգծումը Լենինինն է):

Մեր աճման դժվարությունների շրջանում, յերբ հարյուր հազարավոր նոր բանվորներ, վորոնք չեն անցել խոշոր արտադրություն շկոլան, լցվում են պրոֆեսիոնալ միությունների շարքերը և բերում են իրանց հետ դեռևս պահպանված մանր-բուրժուական հոգեբանություն, — ավելի քան յերբևիցե անհրաժեշտ և ուժեղացնել կուսակցության դեկավարությունը պրոֆեսիոնալ միությունների մեջ:

Այժմ — «մշակման» մասին: Բոլորովին պարզ է, վոր այն ընկերները, վորոնք կուսակցության ուղեգծից տարբեր ուղեգիծ են ընդունում և չեն յենթարկվում կուսակցական վճիռներին, իրենք են նյութ տալիս «մշակման» համար, այսինքն վոր նրանց դիրքը կուսակցական մասսան ստիպված է քննադատել: Այլ կերպ էլ չի կարող լինել ինքնաքննադատության ուժեղացման և ներկուսակցական դեմոկրատիայի լայնածավալ տարածման շրջանում: Չի կարելի շարքային կուսակցականի բերանը խցկել, յերբ նա ուզում է իմանալ թե ինչ է կատարվում կուսակցության մեջ: Ընդհակառակը, կուսակցության անդամներից շարունակ գանգատներ են լսվում ներկուսակցական դրություն մասին թերի ինֆորմացիայի վերաբերմամբ — իսկ հենց այդ ինֆորմացիան է վոր մի քանի ընկերների լեզվով «մշակում» անունն և կրում: Ով չի ուզում մշակման յենթարկվել, նա պետք է լիովին և ամբողջովին վերադառնա դեպի կուսակցության դիրքերը, կանգնի կուսակցության շարքերում, և Կուսթ չտա «մշակման» համար:

«Մշակումները» արտահայտում են կուսակցական մասսայի իդեյական-քաղաքական մակերևույթի աճումը, ներկուսակցական դեմոկրատիայի զարգացումն, կուսակցական մասսան ցանկանում է քննադատության յենթարկել իր կուսակցության գործերը և յենթարկելու յե քննադատության: Ընկ. Լենինը ոպպորտունիստների մասին հետևյալն էր գրում. —

«Իսցրիպլինի ատելության հետ սերտ հոգեբանական կապ ունի վերավորանքի այն անլուելի և տաղտկալի ձայնը, վոր հընչում է առհասարակ ժամանակակից բոլոր ոպպորտունիստների և մասնավորապես մեր փոքրամասնության բոլոր գրվածքներում: Նրանց հալածում են, նրանց ճնշում են, նրանց վաճառում են, նրանց յետ են մղում, նրանց հաշվի չեն առնում: Այդ խոսքերում շատ ավելի հոգեբանական և քաղաքական ճշմարտություն կա, քան յերևի, յենթադրում էր ինքը հեղինակը՝ հալածողների և հալածվողների մասին թույլ տված սրամիտ և գողտրիկ կատակի հեղինակը»:

Մեր որերի ուկլոնիստները գանգատվում են նույնպես ամեն տեսակ «վերավորանքների» համար: Այստեղ էլ կարելի յե ընկ. Լենինի

հետ միասին ասել, վոր այդ խոսքերում շատ ճշմարտություն կա: Բայց չէ վոր աջերին «վերավորում էյին» ըստ արժանույն, վորովհետև նրանք թեքվում են, շեղվում են մեր կուսակցության գլխավոր ուղեգծից, հեղավոխական պրոլետարական քաղաքականությունից: «Այդ բոլոր դառը վերավորանքները, — գրում էր ընկ. Լենինը 1904 թ. — վոչ թե անթույլատրելի սրախոսությունների, խիստ յեղույթների, կատաղի պոլեմիկայի, դուռը շրխկացնելու և բուռնցք ցույց տալու, պատահական հետևանք էյին — ինչպես մինչև այժմ կարծում են շատ և շատ Ֆիլիստերներ, այլ անխուսափելի քաղաքական հետևանք էյին «Իսկրա»-յի ամբողջ յերեք տարվա իդեյական աշխատանքի» (հատոր V, 475):

Նույնպես և մեր որերում աջերին կուսակցության հասցրած «դառն վերավորանքները» անխուսափելի քաղաքական հետևանք են կուսակցության բազմամյա ամբողջ աշխատանքի. կուսակցությունը Լենինից ժառանգել է՝ իր շարքերում ոպպորտունիզմի դեմ անխնայապայքար մղելու տրադիցիա: Յեվ չպետք է վերավորվել, յեթե կուսակցությունը հաջորդական կապ է գտնում ընկերների ներկա սխալների և լենինյան գծից ունեցած նրանց նախկին շեղումների մեջ, վորովհետև այդ հաջորդականությունը անժխտելի փաստ է, վորի պարզաբանումը ոգնում է մերկացնելու ժամանակակից սխալների աղբյուրները:

Այժմ անհրաժեշտ է շեշտել նաև մի հանգամանք, վոր անբաժան կերպով կապված է «Ֆրակցիոնականության» տարրերի հետ, ինչպես այդ ցույց է տալիս մեր կուսակցության պատմությունը: Մենք ինկատի ունենք «բլոկների» պրակտիկան, վորոնք սովորաբար տեղի յեն ունենում կուսակցության ուղեգծին թշնամի հոսանքների միջև: Բոլորը հիշում են 1912 թ. հոսակավոր «ոգոստոսյան» բլոկը, յերբ Տրոցկու նշանաբանով միավորվեցին Տրոցկու կողմնակից մենշևիկ-լիկվիդատորները և նախկին բոլշևիկները — վպերիոդիցիները — փոքրիկ իմբակը: Դեռևս թարմ է հիշողության մեջ մեր կուսակցության բոլոր Ֆրակցիոնական ընկերների միավորումն 1926 — 27 թ. նույն Տրոցկու հեգեմոնիայի տակ: Կուսակցության ուղեգծի դեմ պայքարը հարկադրում է միանալ նրա բոլոր հակառակորդներին, վերջիններս մոռանում են իրանց տարածայնությունները իրար միջև և միավորվում են կուսակցության դեմ՝ միատեղ պայքարելու համար: Մի քանի փաստեր ցույց են տալիս, վոր աջերը նույնպես տրամադիր են նույն անակզբունք բլոկ կազմելու ուղի վրա կանգնել այն տարրերի հետ, վորոնք անցյալում հայտնի յեն իրանց ոպպոզիցիոն գործնեյություններ:

Ուստի և լիովին տեղին կլինի հիշել, թե ի՞նչ եր գրում էինք ընդ-
ների այդ քաղաքականության մասին:

Տրոցկու շտապ կազմած և լիկլիդատորների ու վպերիոդիցիներին,
«աջերի» ու «ձախերի» շուտով քայքայված բոլորի մասին էինք գրում
եր. — «ահա հենց «սկզբունքային հիմքերի» տեսակետից մենք չենք
կարող այդ ընդհանուր ավանտյուրիզմ չհամարել (ընդգծումը է-
նինինն է) այդ բառի ամենաստույգ իմաստով): Բոլորի անխուսափելի
քայքայման «ամենախորը պատճառը» էինք համարում եր այն հան-
գամանքը, վոր «այդ ընդհանուր ավանտյուրիզմ է» (ընդգծումը է-
նինն է): Տրոցկու բոլոր Պոստիստի և վպերիոդիցիներին հետ էինք
կոչում եր «ավանտյուրա՝ հենց սկզբունքային հիմքերի տեսակետից»
(հ. XI, մ. I, 193, և շար.):

«Լիկլիդատորներին, Տրոցկու, վպերիոդիցիներին, լեհերին, բոլ-
շևիկ(?) - կուսակցականներին, Պարիզի մենշևիկներին և այլն և այլն
բոլոր նախորդ դատապարտված եր խայտառակ քայքայման, վորով-
հետև նա կազմված եր անսկզբունքության, կեղծավորության և դա-
տարի ֆուգի վրա» (հատ. XII, մ. II, 94):

«Անսկզբունքություն, կեղծավորություն և դատարի ֆուգ» — ահա
հակակուսակցական բոլորներին էնինյան քարակտերիստիկան: Մենք բո-
լոր հիշում ենք, թե ինչպես բնորոշեց կուսակցությունը 1926 — 1927
թվին ուպուդիցիոն բոլոր, թե ինչպես, որինակ, ընկ. Բուխարինը ապա-
ցուցում եր ընկ. Չինովսկի և Կամենևի անսկզբունքայնությունը, վորոնք
մոռանում էին այն բոլորը ինչ վոր ասել էին նրանք Տրոցկու դեմ
և այժմ կանգնում էին Տրոցկու դիրքերի վրա (տես, որինակ,
Բուխարին — կուսակցությունը և ուպուդիցիոն բոլոր, էջ 70):
Այդ տեսակետից վերջին տարիների ֆրակցիոնական պայքարի դա-
սերը մեր կուսակցության մեջ — չի խանգարում թարմացնել մեր հիշո-
ղություն մեջ:

Ամբողջ ուժով հարվածելով աջ թեքումն, կուսակցությունը պետք է
ամենավճճական կերպով դատապարտի հաշտվողական վերաբերմունքը
դեպի այն: Կի նոյեմբերի պլենումը ստուգի թվերի վերաբերյալ բա-
նաձևի մեջ ասում է, վոր պետք է պարբերական պայքար մղել ուկ-
րոնիստների նկատմամբ ցույց տրվող արբիատիցյան անսկզբունք համ-
բերատարության (հաշտվողականության) դեմ: Արբիատից-հաշտվողա-
կանները չեն ցանկանում տեսնել տարաձայնությունների սկզբունքային
արժատները՝ նրանք ամեն ինչ բացատրում են անձերի պայքարով,
«սկիզբայով»: Տեղին կլինի հիշել այստեղ, թե ի՞նչ եր գրում էինք
1912 թվին Ալսեիտոդի դեմ. —

«Սոցիալ-դեմոկրատական շարժման ներսում խմբերի վոչ մի
սկզբունքային պայքար ամբողջ աշխարհում վոչ մի տեղ չի անցնում
առանց մի շարք անձնական և կազմակերպչական կոնֆլիկտների: Հա-
տուկ «կոնֆլիկտային» դարձվածքներ վորսալը — գծուծների գործ է:
Պրանել այդ կոնֆլիկտներից, արհամարանքով յերես դարձնել նրան-
ցից — իբր թե ամեն ինչ սկիզբա յե այնտեղ — կարող են թույլ տալ
լոկ թուլաներով դիլլետանտներ՝ «համակրողներ շարքերից»: Բանվորա-
կան շարժումով լուրջ հետաքրքրվող մարդիկ միշտ կսովորեն — և
պետք է ու կարելի յե սովորել — ուսումնասիրելով գեթ բանվորական
շարժման մեծ գործիչների պատմական դերը — տարբերել իդեյաների
պայքարի, հոսանքների պայքարի «կոնֆլիկտային կողմը — սկզբուն-
քային կողմից»: Առանց «կոնֆլիկտային» մատերիալի, առանց «սկիզ-
կայի» չեյին անցնում մարքսիստական և անարխիստական (Մարքս և
Բակունին), գեղիստական և ժորեսիստական, լասսալյանական ու այ-
գենախյան և այլն հոսանքների պատմական ընդհարումները»:

Հաշտվողականության գեղեցիկ քարակտերիստիք է տալիս ը. էնինը
Տրոցկու դեմ գրած հոդվածներում՝ լիկլիդատորներին և նրանց քողար-
կող հաշտվողականների դեմ մղված պայքարի շրջանում: «Տրոցկին —
գրում է էնինը — արտահայտեց ամենավատթար հաշտվողականու-
թյան ամբողջ վոգին, չակերտների մեջ առած «հաշտվողականություն»,
կրոժոկային հաշտվողականություն, արբիատիցյան հաշտվողականու-
թյան, վոր ի նկատի է առնում «տվյալ անձերին» և վոչ թե տվյալ ուղե-
գիծը, վոչ թե տվյալ վոգին, վոչ թե կուսակցական աշխատանքի տվյալ
իդեյական-քաղաքական բովանդակությունը»:

Տրոցկու այդ հաշտվողականությունը «իրոք ամենալավ ծառայու-
թյուն է մատուցանում լիկլիդատորներին և ոտզովիստներին, ուստի
և վորքան ավելի խորամանկ, հղկված և ճոռոմ է քողարկվում նա իբր
թե կուսակցական, իբր թե հակաֆրակցիոնական դեկլամացիաներով,
այնքան ավելի վտանգավոր չարիք է ներկայացնում նա կուսակցու-
թյան մեջ»:

«Իրոք, ի՞նչ է մեզ առաջադրված՝ վորպես կուսակցության խնդիր:
«Առաջադրված են արդյոք «տվյալ անձեր և հիմնարկություն-
ներ», վոր պետք է «հատեցնել»՝ անկախ նրանց ուղեգծից, անկախ
նրանց աշխատանքի բովանդակությունից, անկախ նրանց վերաբեր-
մունքից դեպի լիկլիդատորությունը և ոտզովիզմը:

«Թե մեզ առաջադրված է կուսակցության ուղեգիծը, իդեյական-
քաղաքական ուղղությունը և բովանդակությունը մեր բոլոր աշխա-
տանքի, առաջադրված է լիկլիդատորությունից և ոտզովիզմից այդ

աշխատանքի դաման խնդիրը, — մի խնդիր, վոր պետք է իրագործվի անկախ «անձերից, խմբերից և հիմնարկություններից», հակառակ այդ ուղեգծին անհամաձայն կամ այդ ուղեգծը չիրականացնող «անձերի, խմբերի և հիմնարկությունների դիմադրություն»:

«Մի հայացք այդ միավորման վրա — կարող է առաջին պլանում դնել «ավյալ անձերի, խմբերի և հիմնարկությունների» «հաշտությունը»: Կուսակցական աշխատանքի վերաբերմամբ, այդ աշխատանքի ուղեգծի վերաբերմամբ նրանց հայացքների միասնականությունը — յերկրորդական հարց է: Տարածայնությունները պետք է աշխատել լուսնային մատնել և վոչ թե պարզել նրանց արմատները, նրանց նշանակությունը, նրանց որքեկտիվ պայմանները: «Հաշտեցնել» անձերն և խմբերը — այդ է գլխավորը: Յեթե նրանք չեն հաշտվում ընդհանուր ուղեգծի անցկացնելու վրա — այդ ուղեգծը պետք է բացատրել այնպես, վոր նա ընդունելի լինի բոլորի համար: Ապրիլ և հնարավորություն տուր ուրիշներին ել ապրելու! Դա — արբիվատելյան «հաշտողականություն» է, վոր անխուսափելի կերպով տանում է դեպի կրոնոկային դիպլոմատիան: Տարածայնությունները «կոցկել», լուսնային մատնել նրանց, «կոնֆլիկտները» «հարթել»՝ ինչ ել վոր լինի, թշնամի հոսանքները չեզոքացնել — ահա թե դեպի վոր կողմն է ուղղած այդ տեսակ «հաշտողականություն» գլխավոր ուղադրությունը»:

Յեւ Լենինը իրեն պարտավոր է համարում հայտարարել, վոր հաշտողականները ամենևին բոյլճկիկներ չեն, վոր նրանք վոչ մի առնչություն չունեն բոյլճկիկի հետ, վոր նրանք պարզապես «անհետևողական տրոցկիստներ են» (հատ. XI, մ. II, էջ 370):

Լենինի այս արտահայտությունները վերաբերում են բոյլճկիկի և լիկվիդատորության պայքարի եպոխտայի, կուսակցության համար, 1905 թվի հեղափոխական լոզունգների համար մղած պայքարի եպոխտայի հաշտողականներին: Բայց այն, ինչ Լենինը ասել է 1910 — 1914 թ.թ. հաշտողականների վերաբերմամբ, հարմարվում է — mutatis mutandis — համապատասխան փոփոխություններով նաև 1928 — 29 թ.թ. հաշտողականներին: Այդ հաշտողականներն ել «ուղղակի անհետևողական աջեր են», և նրանք ձգտում են լուսնային մատնել տարածայնությունները, և վոչ թե նրանց արմատները պարզաբանման: Մեր որբերումն ել հաշտողականները «ձոռոմբան» քողարկվում են իբր թե կուսակցական, իբր թե հակա-Ֆրակցիոնական դեկրամացիաներով, — իսկ, իբրք «ամենահավատարիմ ծառայություն են մատուցանում աջերին»: Երբ հիմնական հարցերում հաշտողականները գլորվում են աջերի կողմը, հեռանում են կուսակցական գծից դեպի աջ թեքման

իդեոլոգիան, դիպլոմատիորեն քողարկում և պաշտպանում են աջերին: Ահա թե ինչու կուսակցությունը, հարվածելով աջերին, վոչ մի բոսկի չպետք է թուլացնի կրակը ընդդեմ հաշտողականների:

Աջերի, ինչպես նաև աջ թեքման ու կուսակցական ուղեգծի միջև տարուբերվողների դիրքը Կոմիստերնի հարցերում՝ պառակտման է հասցնում Կոմիստերնի VI կոնգրեսի վճիռների նկատմամբ, ինչպես և նրանց դիրքը Համկի ներկուսակցական հարցերում՝ մեր կուսակցության վճիռների նկատմամբ: Այստեղ ել մենք տեսնում ենք, թե ինչպես աջերը դիպլոմատիք կերպով պաշտպանում են աջ, սոցիալ-դեմոկրատական թեքման ներկայացուցիչներին՝ յեղբայրական կոմ-կուսակցություններում: Ինչպես գնահատել այսպիսի հարձակումները ընդդեմ ԿԻՊԿ ուղեգծի. — «արգումենտները փոխարինում են գոռոցով»: Ի՞նչ անուն տալ դեկավարման փաստական ուղեգծի այս ընդդեմանը — «յերբ համոզմունքը փոխարինվում է լոկ գոռոցով պլյուս հարկադրանք»: այսպես, Կոմիստերնի ներկա ուղեգծը հակադրվում է Լենինի քաղաքականությունը, յերբ պնդում են, վոր այժմ Կոմիստերնի քաղաքականություն մեջ չկա «կոնցենտրացիայի վոչ մի հետք»: Ասում են, վոր հարկավոր է «իդեոլոգիական պայքար, այլ վոչ թե գոռոց, — կազմակերպչական յեղբայրացությունները իմաստություն վոչ թե առաջին, այլ վերջին խոսքն է»: Կոմիստերնի ներկա դեկավարություն հասցեյին ասված այս մեղադրանքները կարծես թե կրկնություն չեն այն բոլորի, ինչ վոր ասում եյին հաշտողականներ Եմբեր Դրոն և Սերբան՝ գերմանական կոմկուսակցության աջերին պաշտպանելու համար, կարծես թե Կոմիստերնը գերմանական կոմկուսակցության մեջ կազմակերպչական միջոցների չլիմեց աջերի վերաբերմամբ «իդեոլոգիական պայքարից» հետո, միմիայն նրանից հետո, յերբ գերմանական աջերը կազմակերպվեցին իբրև Ֆրակցիա, Ֆրակցիոնական կենտրոնով, Ֆրակցիոնական մամուլի որգանով և սկսեցին պարբերաբար վտանատակ տալ ԳԿԿ ԿԿ վորոշումները:

IV. ԱԶԵՐԸ ՅԵՎ «ՅԵՐՐՈՐԴ ՈՒԺԸ»

Յուրաքանչյուր անգամ յերբ մեր կուսակցութեան մեջ յերևան են գալիս «Ֆրակցիոնականութեան նշաններ», ծագում է նաև «յերրորդ ուժի պրոբլեմը» — ինչպես կոչում է ընկ. Բուխարինը: Լենինգրադի կազմակերպութեան ակտիվի ժողովին 1927 թ. հոկտ. 26-ին ընկ. Բուխարինը ասում էր. «Ընկ. Լենինը քանիցս առաջադրում էր յերրորդ ուժի պրոբլեմը: Յեթե կուսակցութեան մեջ բացվում է մի ճեղք, յերրորդ ուժը պատրաստ կանգնած է այնտեղ: Մեծ վոճիկը ե գործում նա ով վոր ուղղակի կամ կողմնակի կերպով նպաստում է այդ յերրորդ ուժին (ընդգծումը մերն է): Մեր յերկրում կան դժգոհներ: Յեվ ահա... նրանք ուզում են ոգտագործել ամեն մի ճեղք (կուսակցութունն և ոպպոզիցիան կուսակց. XV համագումարի շեմքին, 108 — 109): Մենք ունենք այժմ անկասկած փաստեր, վորոնք ասպացուցում են, վոր յերրորդ ուժը — թեկուզ հենց ի դեմս տրոցկիստների — իր ստավկան դնում է աջերի պայքարի վրա կուսակցական ուղեգծի դեմ, ջանում է այդ հողի վրա պայթեցնել կուսակցական դեկավարութունը, ուզում է ոգտագործել և լայնացնել այն ճեղքը, վոր բացել են մեր շրջանում աջերն ու հաշտվողականները: Այստեղ չեն ոգնի վոչ մի դեկլամացիա «Փայլելիվկաների» կամ «դրեյֆուսիզացի» վերաբերմամբ, վոր հիշեցնում է տրոցկիստների հիստերիքական ճիչերը 1927 թ. վերջերին, յերբ նրանք մերկացվեցին այն բանում, վոր իրանց ֆրակցիոնական գործնեյությամբ ուղղակի կապ հաստատեցին ակնհայտ բելոգվարդեյական տարրերի հետ: Պետք է պարզ տեսնել այս վտանգը, պետք է ամեն ուժ գործ դնել, վորպեսզի վոչ թե խորացվի այդ ճեղքը, այլ վորպեսզի բոլորովին փակվի այն: Յերրորդ ուժի յելույթները ամենապայծառ կերպով շեշտում են կուսակցութեան միասնականութեան ամբողջ նշանակութունը ներկա մոմենտում: Յերրորդ ուժի հաշիվների մասին մենք կարող ենք կարծիք կազմել նաև շնորհիվ այն բանի թե ինչ է գրում աջ թեքման մասին սպիտակ-եմիգրանտյան մամուլը:

Ընկ. Լենինը ուսուցանում էր մեզ ուշադրութեամբ հետևել թե ինչ են ասում մեր մասին, մեր քաղաքականութեան մասին, մեր դարգացման պերսպեկտիվների մասին մեր դասակարգային թշնամիները: Փոխանակ կոմունիստական քաղցրահնչյուն ստախոսութեան, «կոմստախոսութեան», վոր «մենք շատ-շատ ենք լսում» — ասում էր նա կենտր.

Կոմիտեյի զեկուցման մեջ՝ կուսակցութեան XI համագումարին, — «շատ ոգտավետ է» լսել «դասակարգային թշնամու դասակարգային ճշմարտութունը»: «Այդ շատ ոգտակար բան է — ասում էր նա — վորը իմ կարծիքով անհրաժեշտ է նկատի առնել»: (Հատ. XIII, մ. II, 41 — 42):

Սակայն վերջերս մեր մամուլի մեջ սակավ ուշադրութուն են դարձնում անդրսահմանյան եմիգրանտչինայի ասմունքներին մեր գործերի մասին, վորի վրա իրավացի ուշադրութուն է դարձրել ընկ. Բուխարինը իր զեկուցման մեջ՝ բարեկիրներին համամիութենական համագումարին: Այն ինչ բելոգվարդեյական մամուլի մեջ շատ բան կա, վորի հետ ծանոթանալը «շատ ոգտակար է» մեր Միութեան քանվորների համար: Յեվ ամենից առաջ այդ վերաբերում է մենշևիկյան մամուլին, «Социалистич. Вестник»-ին — ՌՍԴԲԿ որդանին: Այսպես թե այնպես — իր ժամանակ մենշևիկները մարքսիստական շկոլայն անցել, կարողում էին Մարքսը, ուզում էին նրանից մի բան սովորել:

Մենշևիկները վողջունում են աջ թեքման ծագումը մեր կուսակցութեան շարքերում և նրա հիմնական իդեաներին համամիտ են հայտարարում իրանց: Այստեղ հարցը վոչ թե նրանումն է վոր դասակարգային թշնամին ուրախանում է յուրաքանչյուր տարաձայնութեան՝ այն կուսակցութեան շարքերում, վորը իրականացնում է մեր Միութեան մեջ պրոլետարական դիկտատուրան, այլ նրանում, վոր նա ազան ականջ է դնում Կոմունիստական կուսակցութեան միասնականութեան թուլացման վերաբերյալ ամեն մի ակնարկ, տեսնելով դրա մեջ Սորհրդային Իշխանութեան անկման առհավատոյա: Հարկավ, այդ դեպքում էլ մենք նշանութեան անկման առհավատոյա: Հարկավ, այդ դեպքում էլ մենք նշանութում ենք մեր թշնամիների ցանկութունը՝ «խորացնելու մեր բաժանումը և դա ոգտագործելու հակահեղափոխութեան նպատակով», «ոգտագործելով Համկի (բ) ներսում տարաձայնութունները՝ ի թան տալ հակահեղափոխութեան» (Լենինի գրած բանաձևը X համագումարին, կուսակցութեան միասնականութեան մասին): Յեվ այժմ «Соц. Вестник»-ը՝ «աջ ոպպոզիցիայի» մասին առաջնորդողում (№ 20) հույս է տածում «այդ (ներկուսակցական — Վ. Բ.) պայքարի հետագա դարգացման վրա», վորը, ՌՍԴԲԿ որդանի կարծիքով «դարձյալ ստիմուլ է տալիս քաղաքական կյանքի աշխուժացման թե պրոլետարիատի շարքերում և թե ամբողջ յերկրում և նորից ա վելի պատես պարզաներ է ստեղծում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ուժերի մարզման համար (ընդգծումը մերն է), արձագանք գոյացնելով դրա համար բանվորական շարքերում: Մենշևիկները վողջունում են յուրաքանչյուր թեքման յերևան գալը մեր շրջա-

նում, անկախ նրա բովանդակությունից, իրանց ջրաղացի համար ավելորդ շուր համարելով այն, պրոլետարիատի դիկտատուրան թուլացնելու համար մի քայլ համարելով այն: Բացի դրանից, — մեր թշնամիները մոտենում են մեր այս կամ այն թեքման բովանդակության գնահատմանը — և ահա այստեղ խիստ ոգտավետ կլինի՝ մոտից նայել այն անալիզին, վոր տալիս են նրանք ալ թեքումը բնորոշող իդեաներին:

Ինչպես տեսանք մենք վերևը, մենշևիկները յենթադրում են, վոր ալ թեքման պայքարը կուսակցության ուղեգծի դեմ արձագանք ե գտնելու բանվորների շարքերում, վորովհետև ալ թեքման իդեոլոգիան իր գենքերը փոխառնում ե մենշևիկյան արսենալից: Այդ կողմից մենշևիկները, ինչպես մենք կարդում ենք նույն հոգվածում, ավելի մեծ հույսեր են տածում «ալ սպարդիցիայի» վրա քան տրոցկիստական սպարդիցիայի վրա: Վերջինիս «տնտեսական ծրագիրը» «Соц. Вестник»-ը համարում ե «ուտոպիստական և ներկա պայմաններում ունակցեոնական», վորի շնորհիվ նա «չեր կարող հույս դնել ժողովրդի լայն խավերի համակրանքի և ոգնություն վրա»: Այլ կերպ ե հարցը, մենշևիկների կարծիքով, ալ թեքման վերաբերմամբ: Յեթե տրոցկիստները ունակցեոններ և ուտոպիստներ են, ապա մենշևիկների համար վոչ մի կասկած չկա, վոր «ալ թեքման առաջադրած եկոնոմիական ծրագիրը ըստ եյուլթյան ավելի պրոգրեսիվ ե հանդիսանում այժմ, քան պաշտոնական կուսակցության տակտիկան և ավելի յե համապատասխանում յերկրի և արտադրող ուժերի շահերին»: «Соц. Вестник»-ը նույնիսկ «կարեոր չի համարում ըստ եյուլթյան մանրամասն հիմնավորել այն՝ բոլորի համար արդեն անվիճելի ճշմարտությունը, վոր միայն անմիջական հրաժարումն ինդուստրիալիզացիայի «պլանետար մասշտաբներից», կարող ե Ռուսաստանի արդյունաբերությունը ավելի առողջ և ավելի հուսալի հիմքերի վրա դնել»:

Մենշևիկները վողջունում են աջերին «տնտեսական ունակցեոն (?) վերադառնալու համար՝ ուտոպիստական (?) սխեմաներից հրաժարվելու (?) ճանապարհով», «Соц. Вестник»-ը յենթադրում ե, վոր «պետություն կյանքի և պահանջների ամբողջ լողիկան այս անգամ աջերի կողմն ե լինելու» ընդգեմ կուսակցության:

Իսկ ամենից հետաքրքիրն այն ե, վոր «Соц. Вестник»-ի տեսակետից Համկն (բ) «անպայման իրավացի յե՝ յերբ մատնացույց ե անում, վոր այդ ծրագիրը (աջերի ծրագիրը, Վ.Բ.) նշանակում ե բոյլշևիզմի լիակատար իդեյական կապիտուլյացիա՝ գյուղացիական Ռուսաստանի մանր-բուրժուական տարերքի առաջ»: Ահա այդ կապիտուլյացիայի համար ե վոր մենշևիկները գովում են աջերին:

«Соц. Вестник»-ը այնուհետև զարգացնում ե իր միտքը: Նրա կարծիքով «նոր սպարդիցիան իր եկոնոմիական պահանջներով հանդիսանում ե «եկոնոմիական բանականություն կոչնակ», հանդիսանում ե իբրև արտահայտիչ — թեպետ և առայժմ յերկչոտ — ահագին ժողովրդական մասսաների հրատապ շահերի և ամենից առաջ գյուղացիական մասսաների, վորոնք ուժասուլա են լինում «սոցիալիստական գրոհի անտանելի բեռնից»:

Այստեղ մենշևիկները ըստ սովորության, գյուղացիության հիմնական չքավոր-միջակ մասսաներին փոխս են գցում կուլակներին հետ, վորոնք և կազմում են սոցիալիստական գրոհի իսկական ուղեկտը:

Ժողովրդի ելի վեր խավերի արամադրությունն են արտահայտում աջերը՝ ըստ «Соц. Вестник»-ի. «գյուղացիներին հետևում են քաղաքի մանր-բուրժուական խավերը, վորոնք պակաս չեն տանջվում ներկա կուրսից. այնուհետև զալիս են սովչինիզմի կուլթյան լայն (?) խավերը»: Յեվ այսպես — մեր կուսակցության վորոշ ողակների վրա ճնշում են դործ դնում վոչ միայն գյուղական կուլակը, այլ և քաղաքի նեպմանը և սովապարատի վերունքը:

Վերջապես «Соц. Вестник»-ը ուղում ե համոզել իրան, վոր «Ռուսաստանի բանվորների նշանակալից մեծամասնությունը (?) ևս . . . չի կարող նոր սպարդիցիայի պահանջները ուղիղ համարել»: «Соц. Вестник»-ի համար յերեկի վոչ մի նշանակություն չունի այն վճռական դատապարտումը, վորին յենթարկվեց ալ թեքումը մեր յերկրի պրոլետարիատի ավանդարդի կողմից, Համկն (բ) ղեկավարությունը, այն անձեռնպահ աջակցությունը, վոր ստանում ե մեր կուսակցության քաղաքականությունը նաև անկուսակցական բանվոր մասսաների կողմից, վորի պայծառ ապացույց ե հանդիսանում թեկուզ հենց խորհուրդների վերջնատրական կամպանիան:

Սակայն, հենց ինքը «Соц. Вестник»-ը ստիպված ե սահմանափակել վերև բերած դատողությունների ծավալը: «Այ սպարդիցիայի եկոնոմիական պահանջները — յեզրափակում ե ՌՍԴԲԿ կենտկոմի որդանը, — սոցիալ-դեմոկրատիայի հողի վրա կանգնած ուս բանվորներին ավելի իրական են թվում, քան . . . «կուսակցության ուղեգիծը»: Ահա թե ինչ! Իսկ ի՞նչ չի հայտնի այն պարզ ճշմարտությունը, վոր «սոցիալ-դեմոկրատիայի հողի վրա կանգնած ուս բանվորների թիվը» վաղուց հասել ե այն կլոր թվանշանին, վոր կոչվում ե . . . գերո!

Այստեղ անհրաժեշտ ե նկատել, վոր «ալ թեքումը ողավում ե վոչ միայն II Ինտերնացիոնալի Ռուսաստանի սեկցիայի, այլ և բերդավարդեյական եմիգրացիայի ավելի ալ մասի սիմպատիաներով: Ահա

թե ինչ ենք կարդում մենք Միլյուկովի „Последн. Новости“ որդանում «Վերընարություններ և սկիզբ» հոդվածում. «Ներկա կոմունիստական աջ թեք կարող եր հույս դնել ժողովրդի լայն շրջանների ապակրանքի վրա (ընդգծումը մերն է), յեթե նա կարողանար վճռականապես յեղնել ռազմական կոմունիզմի վերականգման (?) դեմ, գյուղացիության տնտեսության քայքայման (?) դեմ, «ինդուստրիալիզացիայի» դեմ, վոր կայնում է «Ամերիկային գերազանցելու ֆանտազիայի համար միջոցներ խօսելու» մեջ:

Իսկ և իսկ ինչպես „Соц. Вестник“-ի մեջ, ուր կարդում ենք. — «Այն պայքարում, վոր բռնկում է կուսապարտի և աջ ոպպոզիցիայի միջև, վերջինս կարող է հույս դնել Ռուսաստանի ժողովրդի բոլոր հիմնական խավերի և դասակարգերի համակրանքի և նույնիսկ աջակցության վրա»:

Այդպես ներքին, «ժողովրդի լայն խավերը», «Ռուսաստանի ժողովրդի բոլոր հիմնական խավերն և դասակարգերը», ըստ „Последн. Новости“ և „Соц. Вестник“-ի, խոստանում են աջ թեքմանը իրանց «ակտիվ համակրանքը, յեթե վոչ աջակցությունը»:

Բեկոզվարդեչինայի բարեկամական դիրքը աջ թեքման իդեոլոգիայի վերաբերմամբ մի ավելորդ անգամ ևս ապացուցում է կուսակցության՝ աջ թեքմանը աված բնորոշման ուղիղ լինելը, նաև այդ թեքման ամեն տեսակի արտահայտությունների դեմ անխնայ պայքար մղելու անհրաժեշտությունը:

Մեր թշնամիները կարծում են, վոր մենք չենք կարող հաղթել մեր աճման դժվարությունները: Այդ նույն „Соц. Вестник“-ն ևս գտնում է, վոր «կոմունիստական կուսակցության ներքին պայքարը միշտ հանդիսացել է վորպես անմիջական ֆունկցիա արտաքին, և ամենից առաջ եկոնոմիական դժվարությունների, վորոնց մեջ ընկել է բոլշևիկյան դիկտատուրան» — և իր ստավկան դնում է ներկուսակցական պայքարի սաստկանալու վրա:

Իրոք, ինչո՞ւն է կայանում աջ թեքման վտանգը. այդ կետի գեղեցիկ ձևակերպումը մենք գտնում ենք ընկ. Ստալինի յեղույթների մեջ. — «Աջ թեքման հաղթությունը մեր կուսակցության մեջ՝ կնշանակեր կապիտալիստական տարրերի վիթխերի ուժեղացումը մեր յերկրում: Իսկ ի՞նչ է նշանակում կապիտալիստական տարրերի ուժեղացումը մեր յերկրում: Այդ նշանակում է՝ պրոլետարական դիկտատուրայի թուլացումն և կապիտալիզմի վերականգման շանսերի ուժեղացումն: Հետևաբար աջ թեքման հաղթությունը մեր կուսակցության մեջ կնշանակեր մեր յերկրում կապիտալիզմի վերականգման համար

անհրաժեշտ պայմանների խտացումն»: (Ճառ ՄՎՀ և ՄԿ պլենումին, 19 հոկտ. 1928 թ.):

«Ինչի՞ն է հանգում աջ թեքումը... Ո՞ւր է տանում նա: Նա տանում է բուրժուական իդեոլոգիային հարմարվելու գծով, «սովետական» բուրժուազիայի ճաշակներին և պահանջներին հարմարվելու գծով: Ի՞նչ է սպառնում մեզ՝ յեթե աջ թեքումը հաղթի մեր կուսակցության մեջ: Դա կլինի մեր կուսակցության իդեյական կործանումն, կապիտալիստական տարրերի ազատություն, կապիտալիզմի վերականգման շանսերի խտացումն, կամ, ինչպես ասում էր Լենինը, «դարձ դեպի կապիտալիզմը» (Ճառ Կենտկոմի նոյեմբերյան պլենումին, 19 նոյեմբերի 28 թ.):

Այժմ տեսնենք, թե ինչպես է գնահատում «Соц. Вестник»-ը աջ թեքման պերսպեկտիվները: № 22 — 23 (5 դեկտ.) մեջ գետեղված է չափազանց հետաքրքիր հոդված («Հիմնական հարց»), վոր պատկանում է Մարտովի մահից հետո մենշևիկյան ամենախոշոր լիդեր Ֆ. Դան-ի գրչին: Քննադատելով այդ հոդվածում Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումները, Դանը ուրախությամբ բռնում է ընկ. Ֆրոմկինի այն ասույթի պոչից, իբր թե «միջակ գյուղացիության հիմնական մասաներն» հասցրել ենք «անհույս և անպերսպեկտիվ» կացության, վոր «գյուղը, բացի չքավոր գյուղացիության մի փոքր մասից, տրամադրված է մեր դեմ (այսինքն բոլշևիկների դեմ)»: Ինչպես չէ! Չե վոր այդ այն է, ինչ մենշևիկները տարեց տարի պնդում են, և վոչ թե միայն մենշևիկները, այլ ամբողջ անդրսահմանյան բեկոզվարդեյական մամուլը:

Այնուհետև Դանը իր յեղրակացությունն է անում ուկրոնիստների բռնած դիրքից: «Յեղրակացությունը պարզ է! Ստիպված ենք խոստովանվել, վոր վոչ միայն անխուսափելի յե դարձը դեպի կապիտալիզմը, այլ վոր այդ դարձը արդեն անսայթաք կերպով կատարվում է»: Ինչպես հայտնի յե, մենշևիկյան պլատֆորմի հիմնական կետը ասում է, վոր բոլշևիկներն իրենց յերկրում վոչ թե սոցիալիզմ այլ կապիտալիզմ են կառուցում:

Լսենք Դանին դարձյալ. «Աջ թեքման մեջ է արտահայտվում այն, վոր բուրժուական-կապիտալիստական հարաբերությունների վերածնությունը Ռուսաստանում անխտելի փաստ է՝ թե Ռուսաստանի ներքին զարգացման շնորհիվ և թե կապիտալիզմի միջազգային ստարիլիզացիայի շնորհիվ... Յեվ «աջ թեքման» այն պլատֆորմը, վոր ընդհանուր առմամբ արտահայտվում է «ինդուստրիալիզացիայի տեմպի դանդաղեցման», գյուղի վրա ճնշում գործադրելուց

հրաժարվելու և կոլխոզների ու սովխոզների «գերհարվածային» կառուցումն դադարեցնելու մեջ, — ինքնըստինքյան լոկ առաջին քայլն է՝ խորհրդային իշխանության քաղաքականությունը հարմարեցնելու բուրժուական-կապիտալիստական զարգացման անվերացնելի պահանջներին: Իսկ հայտնի յե վոր մենշևիկները իրանց հրատարակության եջերում զբաղված են լոկ նրանով, վոր խորհուրդ են տալիս կոմկուսակցության և խորհրդային իշխանության հրաժարվել նՍՀՄ տերիտորիայի վրա սոցիալիզմ կառուցելու «Ֆանտաստիք» ծրագրից և անցնել «նորմալ» կապիտալիզմի, բուրժուական դեմոկրատիայի ոեխներին:

Դանի տեսակետից, աջ թեքման պլատֆորմը ուղիղ և արտահայտում վոչ միայն գյուղացիության կարիքները, այլ և բանվոր դասակարգի շահերը: Մենշևիկյան լիդերը կարծում է, կամ ավելի ճիշտ, ձևացնում է վոր կարծում է, իբր թե «բանվոր դասակարգն ել ճնշող մեծամասնությունը բաժանում է այն «ազգային» տրամադրությունները, վորոնց արտահայտիչն է հանդիսանում «աջ թեքումը»:

Աջ թեքման պլատֆորմը, ըստ Դանի, անխուսափելի կերպով տանում է դեպի այն, վոր ավելի՛ ևս պահանջ կլինի մասնավոր կապիտալի և ամենից առաջ արտասահմանյան կապիտալի դերը ուժեղացնելու մեր արդյունաբերության մեջ, վորովհետև վերջինս իբր թե չի կարող բավականաչափ արագ զարգանալ համատարած նացիոնալիզացիայի բազայի վրա, ինչպես և «հարկ կլինի լայնացնել արտասահմանյան եքսպորտի և իմպորտի հնարավորությունները», վոր լոկ պատրվակ է արտաքին առևտրի մոնոպոլիզայի լիկվիդացիայի համար: Այլ խոսքով, աջ թեքման պլատֆորմի հետևողական զարգացումը հասցնում է մենշևիկյան ծրագրին:

Այդպես է դրությունը վոչ միայն եկոնոմիկայի, այլ և քաղաքականության խնդրում. — «աջ թեքման ծրագրած տնտեսական շինարարությունը յենթադրում է վորոշ իրավական (ընդգծումը Դանինն է) նախապայամաններ: Եկոնոմիկան դեմ է ընկնում քաղաքականությանը: «Աջ թեքման» լայն ծավալով նախադուշակած եկոնոմիկական շրջադարձը անխուսափելի կերպով առաջ է բերելու նաև քաղաքական շրջադարձ: Դանը խիստ տրամաբանորեն է դատում. կապիտալիստական հարաբերությունների հաղթությունը եկոնոմիկայում, անխուսափելի կերպով պետք է հասցնի պրոլետարական դիկտատուրայի խորտակմանը մեր յերկրում:

«Ճշմարիտ է, — նկատում Դանը — այն բոլոր յեզրակացությունները, վոր բղխում են աջ թեքման յեղակետերից, դեռ ևս չեն արված

նրա ներկայացուցիչների կողմից, վորովհետև «աջ թեքումն» առայժմ լոկ չձևակերպված հոսանք է կոմունիստական շրջանում՝ սաղմային պլատֆորմով, վոր դեռ ամենահերթական եկոնոմիկական խնդիրների շրջանից դուրս չի գալիս: Սակայն մտքով շարունակենք նրա զարգացման տենդենցները: Յերևակայենք, վոր նա արդեն ձևակերպված է վորպես մի կազմակերպված շարժում՝ վերջնականապես մշակված ծրագրով: Այդ դեպքում ի՞նչ հետևանք կունենար նրա հաղթությունը: Ռուսաստանի բուրժուական-կապիտալիստական զարգացման պայմանների ապահովումն... Միակ հետևանքը կլիներ եկոնոմիկական «տերմիդորի» ավարտումն և նրա պսակումն «քաղաքական տերմիդորով» (ընդգծումը Դանինն է), կոմունիստական դիկտատուրայի փոխարինումն բացարձակ բուրժուական դիկտատուրայով»:

Ահա թե ինչպես է վերաբերվում Դանը «աջ թեքման»: Ինչպես տեսնում ենք նա անպայման համակրական դիրք է պահում այդ թեքման հիմնական իդեաների վերաբերմամբ, վորովհետև նրանք փոխանված են մենշևիկյան արսենալից: Յեվ իրոք, միթե մենշևիկները չէին, վոր միշտ պնդում էին թե կուսակցության բռնած՝ ինդուստրիալիզացիայի տեմպը յերկրի ուժերից վեր է: Միթե նրանք չեն վոր խոսում են բոլշևիզմի հակազուղացիական քաղաքականության մասին: Միթե մենշևիկները «գարձյալ մի ուտոպիական իդեյա» չեն կոչում կուսակցության կուրսը գյուղացիական տնտեսության կոլեկտիվիզացիայի վերաբերմամբ: Այդ միտքը «Сол. Вестник»-ի նույն համարում զարգացնում է Ա. Յուզովը «Կոլխոզներ և սովխոզներ» ընդարձակ հոդվածում: Ահա թե ինչու Դանը իր պաշտպանության տակ է առնում աջ թեքումն, վորի հիմնական կետերից, նրա խոսքով, պետք է հետևցնել «ուսական տնտեսության բուրժուական-քաղաքական զարգացման պատմականորեն անխուսափելիությունը մոտակա շրջանում»:

Դանի չաղ համբույրները ավելորդ անգամ ցույց են տալիս կուսակցության վորոշման ուղիղ լինելը, այն, վոր կրակը պետք է ուղղել դեպի աջ կողմը, և վոր մեր կուսակցության շարքերում աջ թեքումն «գլխավոր վտանգն» է ներկայացնում:

Դանի և նրա բարեկամների՝ աջ թեքման մասին ասածների վերաբերմամբ խիստ հարմար է Լենինի խոսքերը կուսակցության XI համագումարին, — «Այդպիսի բան շատ ոգտակար է տեսնել, վոր գրվում է վոչ թե նրա համար, վոր կոմունիստական պետության մեջ ընդունված է այդպես գրել, այլ վորովհետև դա իսկապես դասակարգային ճշմարտություն է, վոր կոպիտ, բացարձակ կերպով ար-

տահայտում է դասակարգային թշնամին... Թշնամին դասակարգային ճշմարտությունն է ասում, ցույց տալով այն վտանգը վոր կանգնած է մեր առաջ: Թշնամին ձգտում է՝ վորպեսզի դա անխուսափելի դառնա: Այդ է հիմնական և իսկական վտանգը» (հատ. XVIII, մ. II, 41 — 42):*

Այլ թեքման զարգացման տենդենցները որչեփով կերպով տանում են դեպի կապիտալիզմ: Այսպես է դասակարգային ճշմարտությունը, վոր կոպիտ, բացարձակ կերպով արտահայտում է մեր դասակարգային թշնամին — մենշեիկը:

Մեզ համար դա հիմնական վտանգ է, վորի դեմ պայքարելու վրա մենք պետք է ուղղենք մեր բոլոր ջանքերը, իսկ Դանի և Նրա բարեկամների համար — դա Նրա փայփայած փափազների իրականացումն է: Ահա այդ «դասակարգային թշնամու դասակարգային ճշմարտության» վրա չեր խանգարի մտածել բոլոր այն ընկերներին, վորոնք չեն ազատվել այլ թեքումից և Նրա նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ցույց տալուց:

Բայց, ինչպես անկասկած է այն, վոր մեր պրոլետարիատը ՀամԿԿ (բ) ղեկավարությամբ կհաղթի բոլոր «եկոնոմիական դժվարությունները», վորոնք միայն աճման դժվարություններ են, նույնպես և անկասկած է այն, վոր մենշեիկների արթնացած հույսերը՝ ՀամԿԿ (բ) քայքայման վերաբերմամբ՝ այս անգամ ևս չեն արդարանա, ինչպես և առաջները: Կուսակցությունը, վոր հաղթել է տրոցկիստական ոպպոզիցիային իր շարքերում, կհաղթեն ևս այլ թեքումը:

Թող տատանվեն և տարուբերվեն կուսակցության ամենաանկայուն ողակները. — կուսակցությունն ընդհանուր առմամբ ամուր բազուկով կիրականացնի յերկրի ինդուստրիալիզացիայի վերաբերմամբ և գյուղական տնտեսության կոլեկտիվիզացիայի վերաբերմամբ վերցրած ուղեգիծը և չի թուլացնի քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի վրա իր գրոհը:

1926 թ. ամառը ընկ. Բուխարինը այն ժամանակվա տրոցկիստական ոպպոզիցիայի մասին ասում էր. «Ոպպոզիցիան ներկայումս մի քանի բանով է սպեկուլյացիա անում: Նա սպեկուլյացիա չէ անում մեր անտեսական դժվարություններով: Նա սպեկուլյացիա չէ

անում Նրանով, վոր մենք մեր կյանքում շատ պակաս տեղեր ունենք, վոր բանվորների տրամադրությունների մեջ դանազան տատանումներ ունեյինք մենք այս տարի և առաջիկայում ևս կարող ենք դարձյալ ունենալ: Վերջապես նա սպեկուլյացիա չէ անում Նրանով, վոր, ինչպես ինքը յենթադրում է, այժմյան Կենտրոնական Կոմիտեն առանց Նրանց, այդ միծանուն գերմարդկանց, անկարող կլինի ղեկավարել կուսակցությունը, և վոր մենք կխեղդվենք ուժից վեր աշխատանքից: Իսկ մենք, ընկերներ, յենթադրում ենք, վոր յեթե Նրանք չեն ցանկանա ոգնել կուսակցությունը ղեկավարելու գործում, կուսակցությունը կղեկավարենք առանց Նրանց»:

Այս խոսքերը բոլորովին հարմարվում են և մեր որերի այլ թեքման, թեև նա դեռ ևս վերջնականապես չի կազմակերպվել իբրև «ոպպոզիցիա»: 1929 թ. աջերը և Նրանց կողմը գլորվող հաշտվողականները «սպեկուլյացիա չեն անում տնտեսական դժվարությունների վրա», այն բանի վրա, վոր իբր թե «կրիզիս» - կատաստրոֆի յենք հասել, Նրանք նույնիսկ այն տեղն են հասել, վոր ստրկաբար կրկնելով տրոցկիստների հայտնի յելույթը, պնդում են՝ վոր յերկիրը դեպի «կորուստ» է գնում:

Մեր կուսակցությունը հավաստի չէ, վոր ինքը պատվով դուրս կգա ներկայիս տնտեսական դժվարություններից: Այստեղ խիստ ոգտակար կլինի հիշել ընկ. Լենինի գեղեցիկ խոսքերը՝ Մոսկվայի նահանգ. կուսկոնֆերենցիային, 1921 թ. հոկտ. 29-ին. — «պատերազմի տարերքը — վտանգ է: Պատերազմի ժամանակ չկա վոչ մի բուլե, վոր վտանգով չըջապատված չլինես: Իսկ ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան: Դա պատերազմ է — և ավելի դաժան, ավելի հարատև, քան մինչև այժմ յեղած պատերազմներից վորևէ մեկը: Այստեղ վտանգը սպառնում է մեր ամեն մի քայլին: Կարող եք արդյոք դուք ինձ ցույց տալ վորևէ մի ուղի հեղափոխության մեջ, Նրա վորևէ ետապներ և պրիոմներ, ուր վտանգներ չլինեյին: Վտանգի անհայտանալը կնշանակեր պատերազմի վախճանը և պրոլետարիատի դիկտատուրայի դադարում, բայց դրա մասին, իհարկե, այս բոլեյին մեղնից վոչ վոք չի յերագում: Այս նոր տնտեսական քաղաքականության մեջ ամեն մի քայլը նշանակում է վտանգների մի ամբողջ շարք»:

«Կապիտալիստական հարաբերությունների գորեղանալը ինքնուտիքյան վտանգի գորեղանալ է»: Յեթե փոխվում են պայքարի ձևերը — կնշանակե փոխվել են և վտանգի պայմանները: Յերբ վճռվում էր խորհուրդների իշխանության հարցը, ուչրեղիկայի ցրման հարցը, վտանգը սպառնում էր քաղաքականության կողմից: Այդ

*Լենինն այդ ասում էր սմենովեխովցիների վերաբերմամբ, վորոնք համաձայնում էին աջակցելու խորհրդային իշխանության, քանի վոր նա կանգնել է նեպիճանապարհին, վորով չէր վերականգնելու յե կապիտալիզմը, Բայց Լենինի խոսքերը բոլորովին հարմարվում են և մենշեիկներին, վորոնց, ինչպես և սմենովեխովցիներին, ընդհանուր նպատակն է — դարձ դեպի կապիտալիզմ:

վտանգը փուչ վտանգ դուրս յեկավ: Իսկ յերբ հասավ քաղաքացիական կռվի շրջանը, վորին ոգնում էին ամբողջ աշխարհի իմպերիալիստները, յերևան յեկավ պատերազմական վտանգը — այդ վտանգն ավելի անհարկու յեր: Իսկ յերբ մենք փոխեցինք մեր տնտեսական քաղաքականութիւնը, վտանգն ավելի ևս մեծացավ, վորովհետև բաղկացած լինելով տնտեսական, առորյա անազն քանակութեամբ մանր մուկեր հարցերից, վորոնց սովորաբար ընտելանում են և վորոնց չեն նկատում, եկոնոմիկան պահանջում է մեզնից հատուկ ուշադրութիւն և լարումն, և առանձնապէս առաջադրում է՝ նրան հաղթելու ուղի միջոցներն ուսումնասիրելու անհրաժեշտութիւնը» (հատ. XVIII, մ. I, 401):

Սակայն զգաստ հաշի առնելով հարցի իսկական դրութիւնը, յերես առյերես նայելով այն վտանգին, վոր բղխում է կապիտալիզմի դեմ պրոլետարիատի մղած պատերազմի տարերքից, Լենինը հավաստի յեր, վոր ուղիղ քաղաքականութիւն գործ դնելու դեպքում մենք կհաղթենք թե դժվարութիւնները և թե բոլոր վտանգները: «Բարձր սարեր վեր յելնելու մասին, վհատութեան մասին և այլն» հողվածում Լենինը ասում է. — «առավել ևս թուլատրելի չէ մեզ նույն իսկ ամենափոքր վհատութեան մեջ ընկնել, առավել ևս պակաս հիմք կա դրա համար, քանի վոր, չնայած մեր ծայրագույն աղքատութեան, քայքայման, յետամնացութեան, սովի, — մենք այս ու այն տեղ սկսել ենք առաջ շարժվել դեպի սոցիալիզմը տանող եկոնոմիկայի բնագավառում» (ընդգծումը Լենինինն է): Այս տողերը գրված են 1922 թ. սկիզբը: Ե՛ւրից հիմք ունենք վհատելու մենք 1929 թվին, եկոնոմիկական ֆրոնտում մեր ունեցած փայլուն հաջողութիւններից հետո, վոր խոստովանում են նույն իսկ մեր հակառակորդները, այն բանից հետո, յերբ մենք ավարտել յենք մեր եկոնոմիկական պատմութեան վերականգման շրջանը, և մտել վերակառուցման շրջանը, յերբ Լենինի խոսքերը «աղքատութեան, քայքայման, սովի մասին մեր իրականութեան վերաբերմամբ վաղուց արդեն անախորհիզմ են կազմում: Ճամարիտ է, դժվարութիւնները դեռ ևս շատ մեծ են, բայց բոյլեկը դժվարութիւնները նիշում է լոկ նրա համար, վորպէսզի դրանք հաղթի, — վորքան ավելի շատ են դժվարութիւնները, վորքան ավելի դժվար է խնդիրը — նույնքան ավելի ուժ պետք է գործ դնել նրա լուծման համար, այդ դժվարութիւնները հաղթելու համար: Թող մի քանի ընկերներ անձնատուր լինեն «վհատութեան և պանիկային» — կուսակցութիւնը հենվելով «դասակարգային ուժերի հաշվառման և անվիճելի փաստերի» վրա, առանց հոգնելու աշխատելու յե մեր յերկրում սոցիալիզմի կառուցման վրա:

Բայց մեր սոցիալիստական շինարարութեան հաջողութեան անհրաժեշտ պայմանն է — մեր կուսակցութեան լիովին միասնականութիւնը՝ հաղթելու համար թե աջ՝ բացարձակ ուղիղտունիստական՝ և թե «ձախ» թեքումն: Յե՛ւ իր լենինյան Կենտկոմի հաստատուն ղեկավարութեամբ՝ կուսակցութիւնը կունենան այդ միասնականութիւնը, — վորովհետև կուսակցական վողջ մասսան համախմբվել է Կենտկոմի շուրջը՝ կուսակցութեան լենինյան ուղեգիծը պաշտպանելու համար, պայքար մղելով յերկու ֆրոնտի վրա:

ԱԶԵՐԸ ՅԵՎ ՄԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Պետք է շեշտել, վոր ուպուրտունիստները շեղվում են լենինյան ուղեգծից ամենից առաջ գյուղի նկատմամբ մեր ունեցած քաղաքական ու թյան հարցում: Յեւ այդ հասկանալի յե: Գյուղացիական մասսան իր գերակշռող անհատական տնտեսությամբ, վոր լոկ քայլ առ քայլ է մոտենում սոցիալիստական վերաշինության ուղիին, հարկավ, այն միջավայրն է, ուր ամենից հեշտ են ծագում սոցիալիստական շինարարության վերաբերմամբ նման տատանումներ: Առհասարակ մեր քաղաքականության կենտրոնական հարցերից մեկն է գյուղացիության վերաբերմամբ ուղիղ քաղաքականություն հաստատելը և հենց դրանումն են մեր ամենախոշոր դժվարությունները, վորովհետև այդտեղ հնարավոր են հակումներ թե մեկ և թե մյուս կողմը: Մեր հիմնական հարցը կայանում է նրանում, վոր սոցիալիստական շինարարության մեջ, ինչպես ասում էր Լենինը, առաջ դնանք բազմամիլիոն գյուղացիական մասսայի հետ միասին: Լենինը հաստատեց գյուղում տանելիք մեր քաղաքականության հիմնական սկզբունքները, վոր պետք է վերապահեն մեզ հակվելուց դեպի ձախ՝ վոր տանում է դեպի գյուղացիության հիմնական մասսայից անջատումն, և թե հակվելուց դեպի աջ՝ վոր քացեիրաց ուպուրտունիստական է և հասցնում է կուլակների հետ համաձայնության գալուն:

Ներկա աջ թեքումն ել՝ գյուղում տարվող մեր քաղաքական թյան սխալ ըմբռնման մեջ՝ ունի իր արմատները: Մեր տնտեսական դրությունը աջ թեքման կողմնակիցները գնահատելիս ամենից առաջ յեղում են գյուղական տնտեսության զարգացման իրենց բնորոշումից: Ուստի և չափազանց կարևոր է և եյական է մերկացնել աջ թեքման դիրքերը հենց այդ հարցում, և այն ժամանակ նրա սխալները պարզ ու պայծառ կերևան մեր աչքերին:

Մարվող շեղագծի թեորիան տրոցկիստներից ըոչել է աջ ուղիղունիստների մոտ. այստեղ գա ստացավ իր քաղաքացիական իրավունքները գյուղական տնտեսության վերաբերմամբ և իր արտահայտությունը գտավ «գյուղական տնտեսության դեգրագացիա» արտահայտության մեջ: Դա առաջադրեց ընկ. Ֆրումկինը, բայց, իհարկե,

նա ձևակերպեց միայն այն՝ ինչը վոր յուրաքանչյուր աջ ուղիղունիստ ունի իր պահեստում:

Ինչի վրա յե հիմնվում այդ՝ իբր թե գյուղական տնտեսության մեջ կատարվող դեգրագացիայի թեորիան: Դա հիմնվում է նաև, գյուղատնտեսական արտադրության զարգացման վրա, գլխավորապես վերջին յերեք տարիներին ընթացքում, ցանքսերի մակարդակի փոփոխման, սխալ գնահատման վրա, և յերկրորդ՝ գյուղական տնտեսության վերականգնումն նշանակության և բնույթի սխալ գնահատման վրա:

Փաստերի հիման վրա տեսնենք, թե ինչ դրության մեջ է հարցը թե մեկ և թե մյուս կետերում:

Իմեկով գյուղական տնտեսության արտադրությանը, մենք պետք է ամենից առաջ նկատենք, վոր շատ դժվար է միմիայն յերեք տարվա տվյալներին հիման վրա՝ գյուղական տնտեսության զարգացման վորոշ տեղեկանքներ սահմանելը շնորհիվ գյուղատնտեսության սպեցիֆիկ առանձնահատկությունների: Գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման հիմնական որենքներն իրար համապատասխանում են: Սակայն մենք յերեք չենք ժխտում այն սպեցիֆիկ առանձնահատկությունները, վորոնցով գյուղական տնտեսությունը տարբերվում է արդյունաբերությունից: Մասնավորապես այդ տեսակ առանձնահատկություններին է պատկանում գյուղական տնտեսության մեծ կախում ունենալը մետեորոլոգիական պայմաններից: Ճշմարիտ է, բերքի տարբերման որիննաչափություն հաստատելը՝ լոկ այդ պայմանների հիման վրա, մեզ չափազանց կասկածելի յե թվում — տեխնիկան, անկասկած, հաղթում է տարերքին: Յերաշտի դեմ ազդոտեխնիքական միջոցներով կովելը հնարավորություն է տալիս խուսափելու այն հետևանքներից, վոր սովորական պայմաններում պատճառում է յերաշտը — բերքի կորուստը: Ազդոտեխնիքական մի շարք միջոցների գործադրությունը թուլացնում է մետեորոլոգիական պայմանների ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության ընթացքի վրա: Սյնուամենայնիվ այդ կախումի առկայությունը ժխտել չի կարելի, և քանի ավելի յետամնաց է տվյալ յերկրի գյուղատնտեսությունը տեխնիքական տեսակետից, այնքան ավելի զգալի յե բնական պայմանների ազդեցությունը: Ուստի և անբերրի տարիները միշտ վորոշ չափով խանգարում են գյուղական տնտեսության զարգացմանը, և միայն շատ տարիների ընթացքում կարելի յե նրա զարգացման վորոշ որիննաչափումն սահմանել: Ուստի և յեթե ԽՍՀՄ մեջ վերջին յերեք տարիների

ընթացքում գյուղական տնտեսութեան զարգացման համար անհա-
ջող տարի յե լինում, դրանով չի կարելի դատել գյուղական տնտե-
սութեան իսկական ընթացքի մասին:

Վերոհիշյալ հանգամանքներն ի նկատի ունենալով միայն կա-
րելի յե լուրջ մոտենալ գյուղատնտեսական արտադրութեան վերաբեր-
մամբ ունեցած ավյալների անալիզին:

Անհատական տնտեսութեան, կոլխոզների և սովխոզների ամբողջ
ցանքսի մակարդակը նախընթաց տարվա հետ համեմատած հետևյալ
կերպով ե փոխվել՝ տոկոսներով առած. —

1926 թվին	105,7
1927 »	102,5
1928 »	101,3

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ցանքսի մակարդակը տարեց-
տարի ավելանում եր, սակայն վերջին յերկու տարվա ընթացքում
ավելանալու տեմպը 1926 թ. բերքավոր տարվա հետ համեմատած
ավելի նվազ եր:

Այնուհետև յեթե մենք վերցնենք հացահատիկների կուլտուրա-
ները, ապա հետևյալ փոփոխությունը կտեսնենք՝ նախընթաց տարվա
հետ համեմատելով (տոկոսներով առած).

1926 թվին	107,3
1927 »	101,8
1928 »	97,0

Յեվ վերջապես հիմնական տեխնիքական կուլտուրաների վերա-
բերմամբ նույնանման տեղեկությունները հետևյալ պատկերն են ներ-
կայացնում (տոկոսներով առած). —

1926 թվին	92,7
1927 »	106,7
1928 »	117,3

Այդպիսով բերած ավյալները ցույց են տալիս, վոր ցանքսի
մակարդակը հացահատիկների կուլտուրաների վերաբերմամբ ամենա-
մեծ կրճատումն ունեցել ե 1928 թ., իսկ տեխնիքական կուլտուրաների
վերաբերմամբ ցանքսի մակարդակը այդ տարիների ընթացքում տարեց-
տարի ավելանում եր: Հացահատիկի ցանքսի մակարդակի կրճատումը
1928 թվին խիստ ցավալին ազդեցություն ե ունենում մեր բոլոր
եկոնոմիկայի վրա, բայց 1928 թվին ե, վոր մետեորոլոգիական պայ-
մանների շնորհիվ մոտ 5,5 միլիոն հեկտար կորավ: 1928 թ. գյուղա-

ցիները բերքի համար մշակել եյին և ցանել մի մակարդակ վոր 1927 թ.
հետ համեմատած 105,3% եր կազմում: Բայց շնորհիվ աշնանացանքսի
կորստի և նրանց մի մասի վերացանքսի (վերացանված ե 4 միլիոնից
ավելի զանազան կուլտուրաներ), մակարդակը կրճատվում ե և այդ կրճա-
տումը հացահատիկների կուլտուրաների վերաբերմամբ 3% ե կազմում:

Այնուհետև, յեթե մենք վերցնենք հացահատիկների կուլտուրա-
ների ցանքսի քանակությունը հեկտարներով՝ գյուղական բնակչութեան
յուրաքանչյուր հազար շնչի վրա, կստանանք հետևյալ թվանշանները. —

1925 թվին	736 հեկտար
1926 »	775 »
1927 »	774 »
1928 »	736 »

Այդպիսով մենք այստեղ տեսնում ենք՝ գյուղական բնակչութեան
յուրաքանչյուր հազար շնչի վրա, հացահատիկների ցանքսի հեկտարների
քանակութեան ստաբիլություն, և միայն 1928 թ. դարձյալ իջնում ե և
հավասարվում 1925 թ. ավյալներին:

Այնուհետև, յեթե վերցնենք անասնաբուծութեան ցուցանիշները,
այստեղ ել տեսնում ենք անասունների քանակութեան տարեց-տարի,
թեև վոչ բավականաչափ, ավելացումն: Համեմատելով խոշոր յեղջյու-
րավոր անասունների քանակությունը (տոկոսներով) նախընթաց
տարվա հետ, հետևյալ դինամիկան ենք ստանում. —

1926/27 թ. — 6% ավելի, քան 1925/26 թ.
1927/28 թ. — 4% » » 1926/27 թ.
1928/29 թ. — 2% » » 1927/28 թ.

Վերջապես, յեթե վերցնենք բոլոր պրոդուկցիան, մենք կտես-
նենք, վոր բոլոր հացահատիկների կուլտուրաների ամբողջ բերքը
այսպես եր. —

1926/27 թ.	77,760 տոնն
1927/28 թ.	73,120 »
1928/29 թ.	74,280 »

Այդպիսով գյուղական տնտեսութեան համար մենք վոչ մի ար-
տադրական ցուցանիշ չունենք, վորը հաստատելիս լինի գյուղական
տնտեսութեան զեղբազացիայի վերև բերած թեորիան:

Բայց այդ ցուցանիշները միաժամանակ ասում են և գյուղական
տնտեսութեան զարգացման չափազանց յետամնացութեան մասին և
ցույց են տալիս, վոր գյուղատնտեսութեան արտադրութեան ներկա

ծավալով մենք չենք կարող գոհացնել վոչ արտադրական և վոչ՝ ել թե քաղաքի և թե գյուղի անձնական սպառման աճող պահանջները: Յեվ դրա շնորհիվ մեր առաջ հատկապես սուր կերպ է կանգնած գյուղական տնտեսութեան ամբողջ ծավալի՝ ընդլայնումն, նամանավանդ հացահատիկների կուլտուրաների ծավալի: Ուստի և պլենումը մատնացուցց է անում. —

«Պետք է նկատի ունենալ, վոր հացահատիկների տնտեսութեանը գյուղական տնտեսութեան ամենագլխավոր մասն է կազմում: Ուստի և հացահատիկների տնտեսութեան ցուցանիշները վճռական են հանդիսանում ամբողջ գյուղական տնտեսութեան համար. և նրա զարգացման չափազանց յետ մնալը, մանավանդ հացահատիկների տնտեսութեան յետ մնալը, յերկրի օրցիալիստական ինդուստրիալիզացիայի խափանումն է սպառնում»:

Այդպիսով գյուղատնտեսութեան արտադրութեան վերաբերմամբ զեզրադացիայի թեորիան վոչ մի փաստական ապացուցչի գտնում:

Ավելի պակաս ապացուցչ է գտնում նա գյուղական տնտեսութեան վերակառուցման բնույթի և նշանակութեան գնահատման վերաբերմամբ: Արդեն տեխնիքական կուլտուրաների զգալի զարգացման փաստը ցուցց է տալիս այն ահագին առաջադիմութեանները, վոր կատարվում են գյուղական տնտեսութեան մեջ:

«Տեխնիքական կուլտուրաների շրջանում — ինչպես ասում է Կենտկոմի պլենումը — մենք ունենք անժխտելի և բավականաչափ աճում. — տեխնիքական կուլտուրաների բոլոր պրոդուկցիան 1926/27 թ. գներով, 874 միլիոն ռուբլուց՝ 1925/26 թվին, 756 միլ. ռուբլուց՝ 1926/27 թվին, հասել է 901 միլ. ռուբլու՝ 1927/28 թվին: Տեխնիքական կուլտուրաների ցանքսի մակերևույթը ներկայումս 58,5% -ով գերազանցում է նախապատերազմյան մակերևույթին»:

Այդ հաջողութեանը տեխնիքական կուլտուրաների ասպարիզում, անկասկած, կատարվում էր հացահատիկների կուլտուրաների հաշվին: Տեխնիքական կուլտուրաների աճումը տեղի յե ունենում մեր ինդուստրիայի պահանջների և տեխնիքական կուլտուրաների ավելի բարձր գների հետևանքով: Տեխնիքական կուլտուրաների ինդեքսը շատ ավելի գերազանց է քան հացահատիկների կուլտուրաների գների ինդեքսը:

Այնուհետև գյուղական տնտեսութեան տեխնիկայի բնագավառում մի շարք խոշոր փոփոխութեաններ կատարվեցին:

Ահա այն փաստերը, վոր հաստատում է պլենումը. —

«Ավելանում է ցրտահար վարի տոկոսը, վոր 1926 թ. կազմում էր 29,1, և վորը 1927 թ. աճել էր 32,1: Ավելանում է բազմացան

ցանքսափոխութեան մակարդակը, վոր 1925 թ. կազմում էր 3.664.000 հեկտար և վորը 1927 թ. հասնում է 9.429.000 հեկտարի: Բավականաչափ աճում են ցանքսերը և հետևաբար նաև չքավորների ու սակավաբուս միջնակների տնտեսութեանների տնտեսական տեսակարար կշիռը: Գյուղատնտեսութեան ապրանքների պրոդուկցիայում աչքի ընկնող դեր է սկսում կատարել կոոպերատիվային սեկտորը: Ավելանում է գյուղատնտեսութեան ապահովութեանը լծկան անասուններով և գյուղատնտեսական մեքենաներով: 1926/27 թ. յուրաքանչյուր 100 հեկտարին գալիս էր 25,6 գլուխ լծկան անասուն, 1928/29 — 27,4: Գյուղատնտեսական մեքենաներ յուրաքանչյուր 100 հեկտարին 1926/27 թ. գալիս էր 9 ու 90 կ., 1928/29 թ. — 11 ու 94 կ.: Գյուղատնտեսական մեքենագործութեանը 1926/27 թվին 93 միլ. ռուբլուց հասնում է 1928/29 թվին 190 միլ. ռուբլու՝ նախապատերազմյան գներով, և կազմում է գյուղատնտեսական մեքենագործութեան նախապատերազմյան արտադրութեան ավելի քան 280%:

Անշուշտ այս բոլորը ամենամեծ նվաճումներ են գյուղատնտեսութեան տեխնիկայի բնագավառում: Իհարկե պետք է խոստովանել, վոր այդ բոլորը շատ հեռու յեն գոհացուցիչ լինելուց. — մեր առաջ կանգնած է գյուղական տնտեսութեան վերակառուցման ավելի լայնացման հարցը: Մեր առաջ մտապահ շրջանում դրված է՝ բերքայնութեանը մոտ 30 — 35% բարձրացնելու խնդիրը, վոր տեխնիքական տեսակետից հնարավոր է: Սակայն, շեշտելով գյուղական տնտեսութեան ռացիոնալիզացիայի և վերակառուցման անգոհացուցիչ տեմպը, մենք միևնույն ժամանակ վոչ մի նշան չենք գտնում վոր ապացուցելիս լինի գյուղական տնտեսութեան զեզրադացիայի թեորիան: Ուստի և Կենտկոմի պլենումը ցուցց ավեց նման (ընկ. Ֆրոմկինի) հաստատումների անհիմն լինելը, իբր թե գյուղական տնտեսութեանը, մանավանդ դրա հացահատիկային մասը, զեզրադացիայի պրոցեսսի յե յենթարկվում:

Դեզրադացիայի թեորիան, մարվող շեղագծի թեորիան, դրա կողմնակիցներին հարկավոր է նրա համար, վորպեսզի հիմնավորեն այն սկզբունքը, վոր իբր թե գյուղատնտեսութեան կրիզիսը վերացնելու համար հարկավոր է փնտրել այլ լուծումներ՝ կուսակցութեան XV համագումարի վորոշումներից տարբեր, վոր հարկավոր է արմատապես փոխել մեր քաղաքականութեանը գյուղում: Հենց այդպիսի գործնական յեզրակացութեան են անում աջ ուղիւնիստները — գյուղական տնտեսութեան դրութեան սխալ գնահատումից յենեկով:

Ի՞նչ միջոցներ են առաջարկում նրանք՝ այդ դժվարութեաններից դուրս գալու համար: Ի՞նչ նոր բան են տալիս նրանք գյուղատնտե-

սուբյան զարգացման առաջ ծագած դժվարությունները հաղթելու համար: Մենք տեսնում ենք, վոր նրանց ղեկավարները մանր-բուր-ժուռական ամենատեսակ գույնի իդեոլոգիաներից քաղած ղեկավարներ են, վոր վոչ այլ ինչ է, յեթե վոչ կուլակի և ունևորի վրա հենվելը: Գյուղատնտեսության բարգավաճումը, արտադրողական ուժերի զարգացումը նրանք տեսնում են ֆերմերական տիպի խոշոր անհատական գյուղացիական տնտեսության մեջ: Դրանից է բղխում նրանց արհամարհական վերաբերմունքը գյուղական տնտեսության կոոպերատիվային ձևերի զարգացման նկատմամբ: Նրանք պատրաստ են ընդունելու կոլխոզների և սովխոզների փորձնական բնույթը, ցուցական բնույթը, բայց գործ անել ուզում են միայն անհատական գյուղացիական տնտեսության ուժեղ խավերի հետ:

Վոչ վոք չի ժխտում չքավորների և միջակների հիմնական մասսայի անհատական գյուղացիական տնտեսությունները բարձրացնելու անհրաժեշտությունը նշանակությունը: Մեր խորհրդային գյուղի ամբողջ զարգացումը, նրա բոլոր նվաճումները ցույց են տալիս, վոր հենց գյուղացիական տնտեսության հիմնական մասսայի — չքավորների և միջակների, բարգավաճման հիման վրա, նրանց բարեկեցություն ամժան հիման վրա յե ուժեղացել գյուղատնտեսական կոոպերացիան, աճել և ամրացել կոլխոզական շարժումը: Վոչ մի կասկած չկա, վոր գյուղական տնտեսության հետագա զարգացումն և նրա ընդհանուր ծաղկումն անհնար է առանց չքավորների և միջակների անհատական տնտեսության ծաղկման: Կարելի յե միայն ափսոսալ, վոր միջոցների սղություն պատճառով հնար չկար ավելի մեծ չափով ոգնելու այդ անհատական գյուղացիական տնտեսությունների ծաղկմանը, թեև բավական աչքի ընկնող հետևանքների այնուամենայնիվ հասել ենք: Այսպես որինակ, ըստ ԽՍՀՄ Ժողկոմխորհի կոմիտեիայի տվյալների (վորը ուսումնասիրել եր՝ թե ինչ չափով ծանր է հարկը), 1924/25 — 1926/27 թ.թ. գյուղացիության չքավոր մասի յեկամուտները ավելացան 21%, իսկ միջնակների յեկամուտները — 29%:

Ի դեպ, դրանով ջրվում է, իբր թե գյուղից չափազանց շատ միջոցներ կորզելու առասպելը:

Ընդհակառակը — գյուղի վճարունակությունը զգալի չափով մեծացել է: Սակայն յերևակայել, թե գյուղացիական անհատական տնտեսությունների զարգացման հետագա ուղին նրանց տանում է կուլակի դառնալու կողմը, — կոպիտ և աններելի սխալ է:

Կուլակների վերի շերտերի եկոնոմիական ուժեղացումը միաժամանակ նշանակում է և նրանց քաղաքական ուժեղացում, և գյուղա-

ցիություն կուլակ մասին արած դիջումները տնտեսական բնագավառում պետք է կատարվեն քաղաքական դիջումների հետ միասին, այսինքն փոխանակ գյուղում կապիտալիստական տենդենցի եկոնոմիական և քաղաքական պարտության, տեղի կունենա այդ տենդենցի գորեղացումն: Վոր կապիտալիստական տենդենցը գյուղություն ունի գյուղում, վոր կապիտալիզմի աշխատները դեռ չեն կորզված գյուղակիսն տնտեսության բնագավառում — այդ հետևանք է անհատական գյուղացիական տնտեսության բնույթի: Սակայն գյուղացիական տնտեսության զարգացման առանձնահատկությունը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կայանում է նրանում, վոր գյուղացիության հիմնական մասսան, յեթե վորոչ քաղաքականություն տարվի, զարգանում է վոչ թե կապիտալիզմի, այլ տնտեսության կոոպերատիվային, կոլլեկտիվ ձևերի, այսինքն սոցիալիզմի ուղղությամբ: Մեր քաղաքականություն մեջ, մեր տակտիկայում մենք անց ենք կայնում՝ գյուղում կապիտալիստական ձևերը թե տնտեսապես և թե քաղաքականապես հաղթահարելու միջոցները: Մենք ներկայումս բավականաչափ միջոցներ և ուժեր ունենք, վորպեսզի գյուղացիության տնտեսություն զարգացումը կոոպերացիայի, կոլլեկտիվ տնտեսություն ստեղծելու ուղիով տանենք: Մեր ազգայնացրած արդյունաբերությունը, վոր գյուղին մատակարարում է արտադրության միջոցներ, կոոպերացիայի միջոցով գյուղին արդյունաբերական ապրանքներ մատակարարելու մեր սխտեմը, տրանսպորտի և ֆինանսական միջոցների՝ պետության ձեռքին գտնվելը — այս բոլորը միասին հնարավորություն են տալիս ազդելու գյուղացիության հիմնական մասսայի զարգացման ընթացքի վրա, և գյուղում կապիտալիստական ձևերի դեմ կռվելու:

Կուլակի և ունևորի վրա հենվելը, յեթ նույնիսկ դա արդարանար գյուղի այդ մասի եկոնոմիական ուժեղացման իմաստով, ապրանքային պրոդուկցիայի շրջանում ավելորդ հարյուր հազար տոնն հաց ստանալու իմաստով, կհասցներ այն բանին, վոր շուկայում մենք կհանդիպելինք ավելի մեծ պայքարի և ավելի մեծ մրցման՝ կուլակ տարրերի կողմից, և իվերջո խորհրդային տնտեսության հետևանքները ավելի քան կասկածելի կլինելին: Կուլակներից հավաքած 150 հազար տոնն հացը տարբերվում է միջակներից հավաքած 150 հազարից և ավելի շատ տարբերվում է կոլխոզներից հավաքած 150 հազարից, վորովհետև այդ հացի եկվիվալենտը, յեթե վերցնենք վոչ միայն դրամական արժեքով, այլ և սոցիալական տեսակետից, տարբեր կլինի: Ուստի և իլլուզիա յե՝ գյուղական տնտեսության դժվարություններից յեթը վնասրել գյուղի վերին մասին ուժեղացնելու ուղի:

մեջ: Անհրաժեշտ է բարձրացնել գյուղացիութեան տնտեսութեան վոչ թե այդ 4—5% կամ նույնիսկ 10%, այլ անհրաժեշտ է բարձրացնել գյուղացիութեան հիմնական մասսայի՝ 90%-ի տնտեսութեանը: Միայն այս վերջին դեպքում մենք կստանանք թե եկոնոմիական և թե քաղաքական հետևանքներ: Ով այդ չի հասկանում, նա չի հասկանում մեր եկոնոմիական զարգացման ամբողջ ընթացքը, նա չի հասկանում մեր սոցիալիստական շինարարութեան ուղիները: Գյուղացիութեան ամբողջ հիմնական մասսայի տնտեսութեան զարգացման հարցը լուծելով — լայն կերպով տարածելով ագրո-տեխնիքական միջոցներ՝ գյուղին առատ մատակարարելով մեքենաներ, պարարտացման միջոցներ, զտված սերմեր և այլն, — մենք միաժամանակ պետք է պահպանենք և կոլխոզների զարգացման տեմպը և սովխոզների հետագա կազմակերպությունը: Կենտկոմի պլենումը այդ հարցի վերաբերմամբ բոլորովին վորոշ վճիռ կայացրեց. —

«Կի պլենումը շեշտում է, վոր կուսակցական և խորհրդային որգանների կողմից՝ անհատական գյուղացիական տնտեսութեան աճմանը աջակցելու համար՝ ձեռք չեն առնված այն բոլոր միջոցները, վորոնք կկարողանային ապահովել գյուղացիական տնտեսությունների հիմնական մասսայի լուրջ վերելքը:

Միաժամանակ Կի պլենումը հաստատում է, վոր չնայած առաջին հաջողություններին՝ սովխոզների և կոլխոզների շինարարութեան գործում՝ նվաճումները այդ բնագավառում դեռևս պարզորեն անբավարար են: Նոր սովխոզների շինարարութեան և հսերի բարելավման ուժեղացման հետ միասին անհրաժեշտ է ձգտել կոլխոզների թե վորակային և թե քանակային հետագա աճման: Կի պլենումը հավանություն է տալիս՝ ստուգելի թվերով նախատեսված այն միջոցներին, վորոնք գյուղական տնտեսութեան սոցիալիստական սեկտորին ուժեղ աջակցություն են ցույց տալու»:

Այլ ուղիներումները նույնպես «ընդունում են» կոլխոզները, բայց նրանք վերաբերվում են կոլխոզներին ինչպես զվարճալի հիմնարկությունների, վորոնք նախատիպ են հանդիսանում ապագա սոցիալիստական ձևերի, բայց վորոնք առայժմ գործնական շատ քիչ նշանակություն ունեն մեր պայմաններում: Ուստի և նրանք, ընդունելով դրանց վորակային նշանակությունը, կասկածով են վերաբերվում դրանց քանակային նշանակության, այսինքն՝ դրանց տեսակարար կշռին՝ գյուղական տնտեսութեան մեջ: Մինչդեռ այդ հայացքը արմատապես հակասում է ունեցած փաստերին: Այս տարի շնորհիվ կոլխոզների զարգացման վերաբերմամբ ունեցած մեր քաղաքականու-

թեան, մենք վորոշ հաջողություն ստացանք: Կոլխոզների ընդհանուր քանակությունը, 1928 թ. հունվարի 1-ի հետ համեմատած, 1928 թ. մայիսին համարյա կրկնապատկվել է (182%)՝ ըստ ԽՍՀՄ կենտվիճի 1928 թ. մայիսին կատարած ընդհանուր վիճակագրություն: Կոլխոզների ցանքսի մակարդակը համարյա կրկնապատկվել է: Կոլխոզներում մթերած հացի քանակությունն էլ նույնպես բավական մեծացել է. (Կոլխոզներուտի ասելով, այս տարի նրանք հանձնում են պետութեան 491.400 տոնն հաց): Իսկ յեթե նկատի առնենք թե սովխոզները և թե կոլխոզները, ապա նրանց՝ պետական մարմիններին հանձնած հացի քանակությունը հավասար կլինի մոտ 980 հազար — 1.150 հազար տոննի: Այս արդեն բավական լուրջ թվանշաններ են: Բայց այնուամենայնիվ կոլխոզների ընդհանուր քանակությունը աննշան է: Ըստ նույն վիճակագրություն, նրանց ընդհանուր քանակությունը հասնում է 32.425: Իրանցից ՌՍԽՖՆ մեջ — 21.080 կոլխոզներ, Ուկրայինայում — 9.735, Բելուսիայում — 611, Անդրկ. ԽՍՀ (առանց Ազերբեյջանի) — 240, Ուզբեկստանում — 645, Թուրքմենստանում — 64:

Մենք կանգ չենք առնի կոլլեկտիվիզացիայի թերությունների ու զժվարությունների և կոլխոզների գործնեյություն վրա: Մեր առաջ կանգնած է կոլլեկտիվիզացիայի տեմպի պահպանման հարցը: Բոլորովին իրական է հանդիսանում հենց այս տարի կոլխոզներից 16 միլ. տոնն ապրանքային հաց ստանալու խնդիրը: Այդպիսով կոլխոզների զարգացումը վոչ միայն վորակային, այլ և լուրջ քանակային նշանակություն ունի մեր ժողովրդական տնտեսութեան համար: Իսկ մեր յերկրի համար կոլխոզների քանակային ավելացումը, նրանց տեսակարար կշռի խտացումը մեր ժողովրդական տնտեսութեան մեջ վիթխարի նշանակություն կունենա: Պետք է ուղղակի ասել — կոլխոզները միայն այն ժամանակ լուրջ հաշվի կառնվեն, յերբ նրանք իրոք լուրջ ազդեցություն ձեռք կբերեն մեր շուկայում իրանց ապրանքային պրոդուկցիայի քանակությամբ: Այդ հասկանում են թե իրանք կոլխոզները և թե նրանց կենտրոնները և այդ պետք է հասկանան նաև մեր տնտեսական քաղաքականութեան ղեկավարները: Կոլխոզների տեսակարար կշռի խտացումն գյուղատնտեսական պրոդուկտների շուկայում թե տնտեսական, թե կազմակերպչական և թե քաղաքական եֆֆեկտ կտա: Առայժմ կոլխոզների աջակցության համար մենք ծախսում ենք բոլորովին չնչին գումար: Անցյալ տարի, որինակ, պետությունը կոլխոզներին միմիայն 60 միլիոն վարկ տվեց, այս տարի տրվում է 75 միլիոն ուրլի, այսինքն վորեկ խոշոր ձեռնարկության

շինարարութիւնը ավելի շատ միջոցներ ե կլանում, քան տարվա ընթացքում բոլոր կոլխոզներին տված վարկը:

Գյուղական տնտեսութեան տեխնիքական վերակառուցման ուղիները անցնում են գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով, հետեւաբար և կոլխոզների, նաև սովխոզների միջոցով: Քանի վոր մենք դեռ չքավոր ենք, մեր ունեցած միջոցների գործադրութիւնից մենք կարող կլինենք ուղարկել արդյունքներ ստանալ միայն այն դեպքում, յետ մենք այդ միջոցները ծախսենք կազմակերպված ձևով, հաշվի առնելով նրանց եֆֆեկտութիւնը: Մեր պայմաններում շատ հեշտ ե միջոցները ցրել տալ, բայց ամենամեծ եֆֆեկտ կարող ե տալ միայն կենտրոնացրած ծախքը: ԲԳՏ ԺԿ հատուկ հետախուզութիւն ե կատարել մի շարք գյուղացիական տնտեսութիւնների բերքայնութեան պրոբլեմների վերաբերմամբ և այդ հետախուզութեան հիման վրա նա այն յեղբակացութեան ե հանգել, վոր միայն, որինակ, զտած սերմերի ցանքան ե ապահովում բերքայնութեան բարձրացումը վոչ պակաս քան 20%: Ուստի և բերքայնութեան 30 — 35% բարձրացման խնդիրը հիմնական կուլտուրաների վերաբերմամբ մոտակա հինգամյակում՝ ռեալ ե հանդիսանում:

Գյուղական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը չի կարելի կատարել առանց ուժեղացնելու գյուղական տնտեսութեան կոոպերատիվային սեկտորը: Նա, ով վոր հենվում ե կուլակի վրա, նա ըստ եյուլթեան մեր գյուղի սոց. վերակառուցման դեմ ե դնում: Մեր նպատակն ե — առաջվա պես ընթանալ չքավորների և միջնակների բազմամիլիոն գյուղացիական մասսայի հետ՝ գյուղի արտադրական ուժերի զարգացման ուղիով, գյուղական տնտեսութեան և նրա սոցիալիստական վերաշինութեան տեխնիքական վերակառուցման ուղիով: Այդ ուղին անշուշտ դժվար ե և այստեղ պետք կլինի կռիվ մղել գյուղի կապիտալիստական տարրերի դեմ, և պետք ե հաղթել նրանց:

Գյուղական տնտեսութեան զարգացումը անմիջական կախումն ունի մեր ինդուստրիայի զարգացումից: Կի պլենումը այդ հարցում ուղիղ ե մատնացոյց անում, թե —

«Կուսակցութեան հիմնական խնդիրը, նրա գլխավոր ուղեգիծը — յերկրի հետագա ինդուստրիալիզացիայի ուղեգիծն ե, ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական սեկտորի հնարավոր յեղածին չափ արագ աճման, գյուղացիութեան կոոպերացման, գյուղատնտեսութեան արտադրութեան (սովխոզների, կոլխոզների և այն) կոլլեկտիվ ձևերի աճման ուղեգիծն ե: Սև մետալուրգիայի, մեքենայագործութեան, էլեկտրոշինարարութեան, քիմիական արդյունաբերութեան զարգա-

ցումը, գյուղական տնտեսութեան ինդուստրացումը և մեքենայացումն, արտադրութեան միջոցների արտադրութեան տեսակարար կշիռի սիստեմատիք բարձրացումը — դրանք հանդիսանում են իբրև պարտագիր նախապայմաններ՝ յերկրի հետագա զարգացման (իհարկե նաև գյուղական տնտեսութեան), և հատկապես անհրաժեշտ են դարձնում ամբողջ արտադրական պրոցեսի աճող ուսցիոնալիզացիան, գիտութեան լայն կիրառումն, արեւմտյան Յեվրոպայի և Ամերիկայի գիտութիւնների և փորձառութեան ամենալիակատար ոգտագործումը: Սոցիալիստական շինարարութեան պրոցեսում մասսաներին մեծազույն չափով մասնակից անելու հիման վրա, նրանց նյութական բարեկեցութեան աճման, 7 ժամյա բանվորական օրվա սիստեմատիք իրականացման, տեխնիքական կադրերի աշխատանքը վերակապես բարձրացնելու հիման վրա, և գիտութեան, տեխնիկայի, տնտեսական վարչութեան և առհասարակ տնտեսական պրակտիկայի ավելի ու ավելի միավորման հիման վրա, — կուսակցութիւնը պետք ե վճռական և ամուր կերպով շարունակի յերկրի ինդուստրացման կուրսը»:

Ժողովրդական տնտեսութեան զարգացման հինգամյա պլանը — վոր նպատակ ե դնում հինգամյակի վերջը ավելի քան կրկնապատկել արդյունաբերութեան ընդհանուր պրոդուկցիան, չորս անգամ ավելացնել գյուղատնտեսական մեքենաների արտադրութիւնը, տրակտորների մասսայական արտադրութիւնը — գյուղական տնտեսութեան խոշոր, կոլլեկտիվ ձևերի ուժեղ զարգացման պայմաններ ե ստեղծում. և այդ զարգացման պրոցեսը չպետք ե թուլացնել և չպետք ե կանգնեցնել, վորչափ ել շարունակվեն աջ լալկանների լաց ու կոծերը:

ՆՅՈՒԹԵՐԻ ՑՄԱՆԿ

Վ. ԲԻՍՏՐԹԱՆՍԿԻՑ	Եջ
I. Աջ քեֆման սոցիալական արմատները	3
II. Աջերը յեվ կուսակցության ֆաղափական գիծը	17
III. Աջերի նահանգը բոլշևիկյան կազմակերպչ. սկզբունքներից	42
IV. Աջերը յեվ «լեքոնդ ուժը»	54
Վ. ԽԻԼՅՈՒՏԻՆ	
Աջ քեֆումը յեվ մեր գյուղական սնեեսությունը	66

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Ազգային Հարց,—Ի. ՄՏԱԼԻՆ	1 n.	60 կ.
Գյուղացիական Հարց,—Ի. ՄՏԱԼԻՆ		50 »
Լեհին.— Պատգամներ ժողովրդ. յուսավորության մասին		20 »
Լեհին.— Պատգամներ յերիսասարգության		15 »
Համ. Կոմկուսի (բ) պատմությունը,—Վ. ՎՈՂՈՍԵՎԻՉ	1 n.	50 »
Ոպպոզիցիոն հոսանքները Համ. Կոմ. Կուս. (բ) ներսում		20 »
Բոլշևիկների կուսակցությունը 1917 թվին,— ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻՑ		85 »
Ինչ սվեց Հոկտեմբերը բանվորներին,—Մ. ՏՈՒՄՍԿԻՑ		20 »
Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲՈՒՅԱՐԻՆ	1 n.	25 »
1905 թ. մեր I-ին բանվորա-գյուղացիական հեղափոխու- թյունը,—Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՑ		70 »
Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐԱՄՅԱՆ (656 էջ) 2 n. —		
Պատմական մատերիալիզմի այբուբենը		80 »
Պայքարի յեվ շինարարության 10 տարի,—ՆՈՎԱԿՈՎՍԿԻՑ		70 »
«Ի. ՄՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.)		7 »
Ինչպես աշխուժացնել գյուղատնտեսները,—Չ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ		30 »
Պատերազմ չենք ուզում, բայց դիմադրելու պատրաստ ենք		10 »
Ինչով է ուժեղ կարմիր բանակը,—ՉՈՐԻՆ		15 »
Խեթոզական ձեռնարկ (ուսուցիչների համար)		70 »
Նոր-դպրոցի նանապարհին (ժողովածու, 480 էջ)	2 n.	—
Հասարակագիտությունը I-ին ասիանայի դպրոցում,—		65 »
Գեղջկուհին յեվ յերեխաները,		25 »
Տգիտությունը յեվ սնահավասությունը,—Վ. ԳՐԻՏՐԻՅԵՎ		15 »
Ի՞նչպես է սարքված սիյեզերը,—Գ. ԳՐԱՎԵ (նկարագ.)		50 »
Արեվը, նրա վորդիները յեվ բոռները,—Բ. ՍԵՄԵՅԿԻՆ (նկ.)		40 »
Ինչպես է առաջացել յեվ զարգացել կյանքը յերկրի վրա,		50 »
Մարդու յեվ կենդանիների ծագումը,—Դ. ԱԳՈՂ (նկ.)		35 »
Մարդը-մեֆենա,—Մ. ԳՐԵՄԵՍՅԿԻՑ (նկարագրող)		45 »
Մարդու անեսանելի բեռնափներն ու բարեկամները,—		20 »
Վորոս, կայծակ, էլեկտրականություն,—ԳՐԵՄԵՍՅԿԻՑ (նկ.)		40 »
Պատանի Պիոներ (ժողովածու, նկարագրող)		60 »

Պիոներ, հետեվիր Լեհիմի պատգամներին	20 կ.
Հոկտեմբեր (համառոտ պատմ.)	10 »
Մեր ավագ յեղբայրներ — Կոմյերիսականները	33 »
Քաղաքագիտության դասագիրք կոմյերիս. համար պրակ I	40 »
» II	50 »
» III	45 »

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ԳՐԲՈՒՅԿՆԵՐ, 25 անուն
 ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, 18 անուն
 ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԳՐԲՈՒՅԿՆԵՐ, 8 անուն
 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԲՈՒՅԿՆԵՐ, 6 անուն
 ԳՊՐՈՅԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ (հայերեն տեքստով):

ՆՈՐ ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

Աջ թեփուր կուսակցության շարքերում, — Վ. ԲԻՍՏՐՅԱՆՍԿՈՒ յեվ Վ. ՄԻԼՅՈՒՏԻՆԻ	25 կ.
Ինչ ասած կուսակցության XVI կոնգրեսիցիան, — Մ. ԼՈՅՆԵԿՈՅԻ	20 »
Հեռագիր, հեռախոս, ռադիո (նկարազարդ)	25 »
Աստու յեվ ասվածպատկերային մասին (նկ.)	30 »
Ռազմի որեր, — Ն. ՈԼԵՑՆԿՈՎ	20 »
Պայքար աջ վսանգի յեվ հաշվողականության դեմ	23 »
Կոմիսերնի VI Կոնգրեսի վարուումները	30 »
Կոմիսերնի տար տարին	18 »
Կոմունիստներ (պատմվածքների ժողովածու)	50 »
Չորս բալլադ, — ՅԵ. ՉԱՐԵՆՅԻ	15 »
Սպիտակ ձիւն, — ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ	35 »
Հովի հիշատակարանը	15 »
Բոլշեվիկների կուսակցությունը ինչպես է պատկանում բասակի տաները	15 »
Բասակության յեվ հովվության սոցիալական ապահովա- գրությունը	15 »
Ինչպես պեժ է աշխատի գյուղբանկովի վերահսկիչ հանձ- նածողովը	20 »

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ. — 1) «Հոգվածներ 1914 — 18 թ. թ. պատերազմի մա-
 սին», 2) «Ի՞նչ անել», 3) «Մի բայ առաջ, յերկու բայ յես»
 (ընդամենը 50 մամուլ):

Պահանջեցիք մեր լրիվ գրացուցակը, վառ ուղարկվում է ձերի:

Դիմել՝ Москва, Никольская 10, Центриздат



19978



В. Быстрянский и В. Милютин

О правом уклоне

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.

«Ազգային գրադարան»



NL0182046

